

# ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՅՔ ԵՐԵՎԱՆԻՑ

2012/1  
(1)

Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական հանդես

Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75

Հեռ՝ (374 10) 528780, 274818

Ֆաքս՝ (374 10) 524846

Էլ.փոստ՝ root@acnis.am

Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան  
2012

# Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից

Վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

2012/1

(1)

<i>Գլխավոր խմբագիր՝</i>	Մանվել Սարգսյան
<i>խմբագիր՝</i>	Գեորգ Լալայան
<i>խմբագրական խորհուրդ՝</i>	Կարապետ Կալենցյան Սարո Սարոյան Էդգար Վարդանյան Ռուզան Պլուզյան
<i>Համակարգչային ձեւավորող եւ Էջադրող՝</i>	Աշոտ Թուրաջյան

ՌԱՀՀԿ սույն հրատարակության՝ «Փոփոխվող աշխարհ: Հայացք Երեւանից» վերլուծական եռամսյա պարբերականի նպատակը տարածաշրջանային եւ համաշխարհային զարգացումների լույսի ներքո Հայաստանի այսօրվա ու վաղվա կարեւորագույն մի շարք խնդիրների, մարտահրավերների, հեռանկարների համայնապատկերի արտացոլումն է՝ թարմ հայացքով մատուցվող գաղափարների, առաջարկների, այլընտրանքային մոտեցումների միջոցով, որոնք կարող են լավագույն բանալի լինել մեր պետության առջեւ ծառայած բազում կնճռոտ հարցերին լուծում տալու տեսանկյունից: Թիրախային ընթերցողը քաղաքացիներ, անհատ փորձագետ-վերլուծաբաններ եւ ոլորտում գործող հաստատություններ են Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2012

© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2012

© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2012

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:

The views of the authors do not necessarily reflect those of the Center.

Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦСНИ.

Հանդեսի կամ նրա առանձին հատվածների հրատարակումը առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության՝ արգելվում է:

This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

Публикация данного издания или отдельных ее частей без письменного разрешения АЦСНИ запрещена.

Վաճառքի ենթակա չէ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Թողարկման հարցազրույց

**ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ.** «Հասարակությունը միտված է ինքնուրույն պաշտպանելու սեփական շահերը» . . . . . 6

## Յոդվածներ

### **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Նոր տնտեսական զարգացման մոդելներ փնտրելիս . . . . . 11

### **ՍԱՐՈ ՍԱՐՈՅԱՆ**

«Արաբական գարուն». հնի ու նորի արանքում . . . . . 22

### **ՎԱՐԴԱՆ ԶԱԼՈՅԱՆ**

Հայաստանյան պահպանողականները եւ նեոլիբերալիզմի հաղթանակը . . . . 33

### **ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Մեծ տերության ճգնաժամը. պատճառներ եւ հետեւանքներ . . . . . 46

### **ԷՂԳԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը եւ հայաստանյան ընտրությունները . . . . . 62

### **ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ**

Ոստիկանության դերը իշխանություն-հասարակություն փոխհարաբերություններում:  
Բարոյաբանական գործոնի նշանակությունը . . . . . 75

## ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ. «Հասարակությունը միտված է ինքնուրույն պաշտպանելու սեփական շահերը»



### **Հանդեսի հարցերին պատասխանում է ՌԱՀՀԿ գիտական տնօրեն՝ Մանվել Սարգսյանը**

- Պարոն Սարգսյան, ՌԱՀՀԿ-ն այս տարվանից ծրագրել է թողարկել հայացքով դեպի ժամանակակից համապարփակ փոփոխություններն ուղղված եռամսյա պարբերական: Ինչո՞վ է պայմանավորված արդի աշխարհի նկատմամբ հետաքրքրությունը հատկապես այդ դիտանկյունից:

- ՌԱՀՀԿ փորձագետների կարծիքով՝ ցանկացած տեղային սոցիալ-քաղաքական կամ տնտեսական երեւոյթ այս կամ այն տարածաշրջանում կամ երկրում ավելի ու ավելի է փոխկապակցվում գլոբալ գործընթացների հոսանքին: Բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես տեղեկատվական ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների արագությունն ու խորությունը շարժման մեջ են դնում ամենակայուն եւ կարծրացած երեւոյթները երկրագնդի ցանկացած անկյունում: Այսօր արդեն հեշտ չէ հասկանալ փոխակերպող երեւոյթների ձեւավորման հիմնապատճառները, եթե նույնիսկ այդ երեւոյթը խիստ տեղային է: Ինչպէս ասում են՝ լարվածությունն առաջանում է աշխարհի մի ծայրում, իսկ կյանքի հյուսվածքը պատռվում է բոլորովին այլ տեղում: Միջազգային անվտանգության եւ կայունութան հանրակարգերը կորցնում են իրենց ազդեցությունն ու շիտակությունը: Մի երկրում տեղի ունեցող իրադարձությունները համընդհանուր նշանակություն են ձեռք բերում ողջ աշխարհի համար:

Ցանկացած հետազոտական միտք կանգնած է գերարագ գործընթացների եւ ամբողջական երեւոյթների մոդելավորման մեթոդաբանության փնտրտուքի խնդրի առջեւ: Իրադարձությունները հարկ է լինում դիտարկել միասնական բազմազանության մեջ: Ավելին՝ արդիական է դառնում հետազոտությունների իրականացման եւ տարածման դիմամիկ եղանակը: Այսինքն՝ վերլուծական հետազոտությունները երբեմն չեն հասցնում հետամուտ լինել իրադարձություններին: Հետեւաբար՝ յուրաքանչյուր հետազոտական կենտրոն ստիպված է իրականացնել նյութերի նախապատրաստման եւ սփռման համապատասխան ձեւերի փնտրտուք: «Փոփոխվող աշխարհ. հայացք Երեւանից» հանդեսը, մեր կարծիքով, լավ ձեւաչափ է: Ունենք մտադրություն այս պարբերականում տպագրել ինչպես ՌԱՀՀԿ փորձագետների, այնպես էլ հրավիրված մասնագետների հետազոտությունները: Ասել է՝ պարբերականը բաց է բոլորի համար:

*- Ձեր կարծիքով՝ ինչպիսիքն է փորձագիտական մտքի ներուժը Հայաստանում: Ի վիճակի՞ է արդյոք Հայաստանի փորձագիտական ընկերակցությունը համարժեքորեն արձագանքել ժամանակի պահանջներին:*

- Ուշագրավ է այն, որ ներկա պահին ընթանում է հետազոտողների նոր սերնդի սաղմսավորում: Անցած քսան տարում Հայաստանում չի կազմավորվել կայուն փորձագիտական հանրություն: Չնայած մի շարք հետազոտական կենտրոնների գոյությանը՝ Հայաստանում չկան կայուն քաղաքագիտական դպրոցներ: Միաժամանակ բավական ազդեցիկ է առանձին քաղաքագետների գործունեությունը, որոնք կարողացան նշված ժամկետներում գրավել հետաքրքրասեր հասարակայնության ուշադրությունն ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: ՌԱՀՀԿ-ն այն կենտրոնն է, որի բովով են անցել այժմյան շատ հայ քաղաքագետներ: Այդ իմաստով կենտրոնը մեծ փորձ է կուտակել մասնագետների պատրաստման եւ նրանց համար ստեղծագործ աշխատանքի բավարար պայմանների ապահովման գործում: ՌԱՀՀԿ-ն այժմ նույնպես հակված է հնարավորություն ընձեռնել հետազոտողների երիտասարդ սերնդին: Երկրորդ տարին է, ինչ Կենտրոնում գործում է Երիտասարդական դպրոցը, որտեղ փորձառու քաղաքագետները կարող են աշխատել երիտասարդության հետ: Այսինքն՝ մենք առաջ ենք նայում:

*- Այժմյան անկայուն աշխարհում հնարավոր է արդյոք Հայաստանի անվտանգության համակարգի արմատական վերաիմաստավորում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման եւ տարածաշրջանի երկրների հետ կայուն հարաբերությունների հաստատման բազմամյա փորձերը հաջողություն չեն ունեցել:*

- Հայաստանում այժմ չկա լուրջ քննարկվող այլընտրանքային մոտեցում վերջին քսան տարում գործող անվտանգության համակարգին: Ամբողջ քաղաքական վերնախաւփ այս կամ այն չափով համաձայն է այն հանգամանքին, որ Հայաստանի անվտանգությունն ապահովվում է ՀԱՊԿ շրջանակում Ռուսաստանի եւ մի քանի հետխորհրդային երկրների հետ ռազմավարական համագործակցության խորացմամբ: Առանձնահատուկ տարակարծություններ չկան նաեւ Հայաստանի տարածքում ռուսական ռազմակայանի ներկայության խնդրի առնչությամբ: ՆԱՏՕ-ի հետ անհատական ծրագրի շրջանակում արդեն մի քանի տարվա պատմություն ունեցող համագործակցությունը չի դիտարկվում որպես անվտանգության ապահովման կարելու բաղադրիչ: Նման իրադրությունը խթանվում է Թուրքիայի եւ Ադրբեյջանի միջեւ խորացող ռազմական համագործակցությամբ, վերջինիս՝ Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի խնդրով պայմանավորված անլուծելի հակասությունների օրակարգի պայմաններում: Ըստ երեւույթին, անվտանգության այլընտրանքային համակարգի շուրջ ցանկացած լուրջ քննարկում, ամենայն հավանականությամբ, կարող է կախված լինել միջազգային անվտանգության համակարգում լուրջ տեղաշարժերի՝ մասնավորապես ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի հետ Ռուսաստանի հարաբերությունների հնարավոր փոփոխություններից: Բայց դա ապագայի խնդիր է:

*- Հայաստանն արդեն երկու տասնամյակ է՝ գոյատևում է շրջափակման եւ, ինչպես Դուք նշեցիք, Ռուսաստանից ռազմական ուժեղ կախվածության պայմաններում: Ինչպե՞ս են այս հանգամանքներն ազդում Հայաստանում քաղաքական ու տնտեսական հանրակարգերի զարգացման եւ ժամանակակից աշխարհում նրանց մրցունակության վրա:*

- Գոյություն ունի միայն մեկ բնագավառ, որտեղ Հայաստանը դեռեւս մրցունակ է. դա պաշտպանության ոլորտն է: Հայաստանը լուրջ դեր է խաղում տարածաշրջանում ուժերի հավասարակշռության եւ տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում: Մնացած բոլոր ցուցիչներով երկրի վիճակն անմխիթարական է: Մասնավորապես դա վերաբերում է պետական կառավարման արդյունավետության եւ տնտեսական զարգացման խնդիրներին: Հայաստանում տնտեսությունը եւ քաղաքականությունը մտում են միահյուսված, ինչը խրախուսում է օլիգոպոլիաների զարգացումը եւ նեղացնում փոքր ու միջին բիզնեսի աճի հնարավորությունները: Ավելին՝ վարչարարական մամլիչի տակ է գտնվում երկրի իրավապաշտպանության համակարգը՝ ինչով իսկ կաթվածահար անելով արդարադատության համակարգը: Այս ամենը մեծապես զսպում է հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացման գործընթացը եւ հանրության նշանակալից շերտերի տնտեսական աշխուժությունը: Սա նպաստում է երկրից բնակչության եւ, առաջին հերթին, բարձրորակ մասնագետների մշտական արտահոսքին:

*- Հայաստանում անցկացվում են Ազգային ժողովի հերթական ընտրությունները, եւ շատերը հայտարարում են, որ այս ընտրությունները կարող են մեկնակետ լինել երկրի զարգացման գործընթացում: Որքանո՞վ է նախընտրական ժամանակաշրջանում ձեւավորված իրավիճակը համապատասխանում այդպիսի սպասելիքներին:*

- Ոչ միայն Հայաստանի, այլեւ հետխորհրդային տարածքի բոլոր նոր երկրների համար ընտրությունների միջոցով իշխանության ձեւավորման խնդիրը քաղաքական դասի եւ հասարակությունների համար դարձել է գլխացավանք: Կարելի է նույնիսկ պնդել, որ այդպիսի երկրներում ընտրությունները վերասերվել են ազատության բռնադատման ինքնատիպ մեխանիզմի: Հանրության մեջ կուտակված ազատության Էներգիան պարբերաբար ուղղվում է ապակողմորոշող եւ ապակառուցողական գործընթացների հուն: Հանրությունը վերադառնում է ընկճվածության եւ երկրի ճակատագրի վրա ազդելու հնարավորությունից ինքնամեկուսացված վիճակին: Կարելի է՝ ինչով կավարտվեն ընտրությունները՝ գործող վարչակարգերի ուժային հեռացմամբ, թե հանրության ակտիվության ուժային բռնաճնշմամբ. արդյունքը կլինի նույնական: Ողջ պետական կյանքին պատել է համատարած ընկճվածության զգացողությունը, իսկ գործող վարչակարգն ավելի է կենտրոնացնում երկրի միջոցներն իր ձեռքում: Ազատ ընտրությունների մեխանիզմի կաթվածահար լինելը քաղաքական կուսակցություններին զրկում է զարգացման հնարավորությունից՝ անիմաստ դարձնելով նրանց ջանքերն օրի-

Նական ճանապարհով իշխանության գալու համար: Կուսակցությունները գնալով վերասերվում են գործող վարչակարգերի հետ տարբեր կարգի գործարքների մեջ ռեսուրսներ փնտրող ամբողջատիրական կյանների: Այսպիսով՝ հասարակությունները մտում են քաղաքականապես լիովին գլխատված եւ անկազմակերպ:

Ներկայումս Հայաստանում ընթացող նախընտրական քարոզարշավը նկարագրված իրավիճակի լավագույն վկայությունն է: Գործող վարչակարգը՝ 2008թ. նախագահական ընտրությունների շրջանում հանրության հետ մտնելով անթաքույց դիմակայության մեջ, զինվեց նոր մարտավարությամբ՝ փորձելով երկրում լրիվ մեռցնել քաղաքական ազատությունը: Սովորական դարձան լայնածավալ գործարքները հանրության բոլոր շերտերի եւ բոլոր գործուն ուժերի հետ: Կաշառքը եւ նենգաշորթությունն այդ սպանիչ քաղաքականության հիմնական մեխանիզմներն են: Չորաշարժի են բերվել օլիգարխիկ կառույցների քաղաքական եւ ֆինանսական բոլոր միջոցները, ինչպես նաեւ պետական հաստատությունների վարչական լծակները: Այն ամենը, ինչ կարելի է գրանցել «նախընտրական ցուցակներում», ներմուծվում է մանրակրկիտ հաշվարկների հիման վրա: Ակնհայտ է՝ հիմնական շեշտադրումը կատարված է բողոքավոր ուժերի հետընտրական ցանկացած ակտիվության առավելագույն զսպման վրա: Ըստ երեւոյթին՝ այսպիսով մտադիր են ձեռքազատվել դժգոհության էներգիայի ապակառուցողական արտահայտումից: Հասկանալի է՝ ընտրագանգվածի ազատ ընտրության մասին խոսելն անիմաստ է: Առավել եւս անիմաստ է խոսել պետական կյանքի ինչ-որ առաջընթացի մասին:

*- Այնուամենայնիվ, ազդեցիկ միջազգային կազմակերպությունները եւ առաջատար ժողովրդավարական երկրները չեն դադարում պնդել, որ Հայաստանում առաջիկա ընտրությունները մեծ նշանակություն ունեն երկրի ժողովրդավարացման գործում, եւ իրենք առաջընթաց են ակնկալում այդ ընտրությունների ժամանակ: Ինչո՞վ է պայմանավորված նշված ատյանների այդպիսի դիրքորոշումը:*

- Արեւմուտքը շարունակաբար ավելի հաճախ է առերեսվում այսպես կոչված «ժողովրդավարական մասնակցության»՝ ամբողջ աշխարհում սաստկացող ապակառուցողական հետեւանքների հետ: Արաբական աշխարհի հախուռն գործընթացները ջնջում են «սառը պատերազմի» համաշխարհային կարգերի քաղաքական հետասերման վերջին նմուշները: Արեւմտյան աշխարհը դառնում է այդ երկրներում ծագող անլուծելի իրավիճակների կարգավորման անվերապահ մասնակիցը: Այս հանգամանքը չի կարող տագնապ չառաջացնել միջազգային կառույցներում եւ առաջատար արեւմտյան երկրներում: Ի վերջո, բոլոր անցուղարձերն ուղղակիորեն անդրադառնում են արեւմտյան երկրների դիրքերի եւ տարբեր տարածաշրջաններում նրանց շահերի վրա: Սոցիալական գործընթացները տեղափոխվել են անմիջապես եվրոպական երկրներ՝ հարուցելով բանավեճեր միասնական Եվրոպայի հիմնարար սկզբունքները վերանայելու անհրաժեշտության շուրջ: Հասկանալի է՝ այս պայմաններում ժողովրդավարության ճակատագիրը դառնում է առաջատար արեւմտյան երկրների համար առանցքային խնդիր: Հետխորհրդային երկրները, մասնավորապես Հայաստանը, չեն կարող իրենց վրա չզգալ արեւմտյան հանրության համապարփակ պա-

հանջների ծանրության բեռը: Այլ ինդիք է, որ տեղական վարչակարգերը չեն հրաժարվում իրենց առջեւ դրված պահանջների «վերախաղարկման» մեթոդներից:

- *Ավելի ու ավելի հաճախ է նշվում, որ Հայաստանում վերջին տարիներին մեծացել է քաղաքացիական նախաձեռնությունների ալիքը: Արդյո՞ք սա նորություն է երկրի հասարակական-քաղաքական կյանքում, եւ ինչո՞վ է պայմանավորված այդ աշխուժացումը:*

- Հայաստանի անկախ գոյության տարիներին իրենց ակտիվությունն արտահայտում էին բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք իրավապաշտպան ոլորտում բավական հաջողությունների են հասել: Վերջին մի քանի տարվա ընթացքում, սակայն, սկսեցին երեւան գալ որակապես նոր նախաձեռնություններ, որոնք զանգվածային բնույթ են ստացել: Փոխվել են նաեւ այդ քաղաքացիական նախաձեռնությունների նպատակները: Դրանք, թերեւս, ոչ թե դրամաշնորհներից սնվող հասարակական կազմակերպություններ են, այլ նեղ ուղղվածության բաց շարժումներ: Մասնավորապես՝ մեծ թափ են ստացել զինծառայողների իրավունքների, ազգային լեզվի ու մշակույթի պաշտպանությանն ուղղված նախաձեռնությունները: Բայց ամենամեծ թափը հավաքեց բնապահպանների շարժումը, որն արդեն կարողացել է լուրջ ինդիքներ հարուցել իշխանությունների համար: Կարծում եմ՝ նոր որակի նախաձեռնությունների առաջացման պատճառը ոչ վերջին հերթին քաղաքական ուժերի նկատմամբ անվտանգության եւ ապօրինությունների աճն է երկրում: Հասարակությունն ավելի ու ավելի է միտված ինքնուրույն պաշտպանելու սեփական շահերը:

---

*Интервью номера*

**МАНВЕЛ САРГСЯН: Общество настроено самостоятельно защищать собственные интересы**

*The Interview of the Issue*

**Manvel Sargsian: The Society Is Inclined to Defend Its Own Interests**



## Նոր տնտեսական զարգացման մոդելներ փնտրելիս

### ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*«Ժողովրդավարություն հանուն զարգացման» 34 նախագահին է: Միաժամանակ սյունակ է վարում «Մեդիամաքս» ընկերությունում, ինչպես նաև վերլուծական հոդվածներ է գրում տարբեր պարբերականների համար: Ունի բաղաբազիտության եւ միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճան:*

2008թ. սկսած ֆինանսատնտեսական ճգնաժամը մարտահրավեր նետեց աշխարհում գոյություն ունեցող գլոբալ տնտեսական ինստիտուտներին ու գաղափարներին: Շրջանառության մեջ դրվեց այն մոտեցումը, որ աշխարհը մտել է մի նոր դարաշրջան: Նույն թվականի հոկտեմբերին «Վաշինգթոն փոստ» պարբերականը հանդես եկավ հոդվածով, որը վերնագրված էր՝ «Ամերիկյան կապիտալիզմի ավարտը»<sup>1</sup>: Այնուհետև «Նյուզուիք» («Newsweek») պարբերականը տպագրեց «Այժմ մենք բոլորս սոցիալիստ ենք» պատասխան հոդվածը<sup>2</sup>: Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին իր հերթին հանդես եկավ հայտարարությամբ՝ մասնավորապես նշելով, որ ճգնաժամի հիմնական առանձնահատկությունն այն է, որ վերադարձրեց պետությունն ու վերջ դրեց հասարակության անզորությանը<sup>3</sup>:

Մարդիկ նորից փորձեցին հետադարձ հայացք նետել պատմությանը՝ հասկանալու համար, թե որտեղից են եկել, հասել մինչև մեր օրեր, եւ այդ ճանապարհին ինչպիսի բացթողումներ են եղել, որոնք ճգնաժամի պատճառ են դարձել: Մասնագետների մի մասը հաճախ հղում էր կատարում Կարլ Մարքսին՝ փորձելով ցույց տալ կապիտալիզմի արատները: Որոշ մասնագետներ էլ Ադամ Սմիթի թեզերն էին վկայաբերում՝ ցույց տալու համար «իրական» կապիտալիզմից շեղվելու փաստը: Իրականում անհրաժեշտություն կա վերանայելու ամբողջական գաղափարները, որպեսզի ավելի հեշտ լինի հասկանալ ներկայիս իրավիճակը:

Ընդհանրապես՝ կապիտալիզմի առաքյալ է համարվում Ադամ Սմիթը: Նա առաջինն էր, ով փորձեց իր «Ազգերի հարստությունը»<sup>4</sup> աշխատությունում ներկայացնել եւ բացատրել այն տնտեսական համակարգը, որը ձեւավորվում էր Արդյունաբերական հեղափոխությունից հետո: Ծիշտ է, նրանից առաջ Ջոն Լոկը եւ Դավիդ Դյուրմեն գրել են տնտեսական թեմաներով, բայց Սմիթն առաջինը ձեռնարկեց նոր ստեղծվող բաղաբազան տնտեսությունը համապարփակ եւ ամբողջական ձեւով ներկայացնելու փորձը: Սմիթի փիլիսոփայության առանձ-

1 Anthony Faiola "The End of American Capitalism?," *Washington Post*, October 10, 2008, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2008/10/09/AR2008100903425.html>.

2 Newsweek, February 16, 2009.

3 Տե՛ս՝ Նիկոլա Սարկոզիի ելույթը «New World, New Capitalism» միջազգային կոնֆերանսում, Փարիզ, 9 հունվարի 2009թ. <http://www.colloquenuveaumonde.fr>

4 Adam Smith «An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations», *London*, 1776

Նահատկությունն այն է, որ կենտրոնանում է ազատ շուկաների կարեւորության վրա, քանի որ, նրա կարծիքով, վերջինս ապահովում է ամենաբարձր որակի ապրանքներ՝ ամենացածր գներով: Նա գտնում է, որ մարդն ինդիվիդուալ է եւ հասարակության մեջ կարող է հաջողությամբ զարգանալ, եթե լինեն տնտեսական ազատություններ: Նրա փիլիսոփայությունը կենտրոնանում է հիմնականում անհատի կարողությունների վրա, այլ ոչ թե՝ խմբային հնարավորությունների: Մեծ հաշվով՝ Սմիթին չէր հետաքրքրում, թե արդյոք մարդը կարող է մասնակցել քաղաքական գործընթացներին, ստեղծել բիզնես կամ ունակ է ինչ-որ պաշտոն զբաղեցնել, քանի որ իր ժամանակաշրջանի գլխավոր խնդիրը իշխանության չափն ու տարբեր տեսակի հարկերն էին: Դրա համար էլ նա փաստարկում էր, որ առեւտուրն ու արտադրությունը ավելի ունակ են կարգ ստեղծելու եւ արդյունավետ կառավարելու, քան կառավարությունը:

Սմիթի համար մարդը հիմնականում շահագրգռված է սեփական շահով, բայց ունենալով իր մեջ կարեկցանքի զգացում, հիմնականում կամովին չի թալանում մտացածներին: Այդ իսկ պատճառով նա համարում է, որ իշխանությունը պետք է ապահովի կայուն սոցիալական իրավիճակ, որի շրջանակներում մարդը կարողանա բարելավել իր դրությունը: Սմիթը նաեւ գտնում է, որ մարդուն ազատ թողնելու դեպքում վերջինս ոչ միայն իր համար է բարեկեցություն ստեղծում, այլեւ՝ ուրիշների: Հենց այս տրամաբանության հիման վրա էլ նա կառուցում է «անտեսանելի ձեռքի» տեսությունը: Ըստ այդմ՝ ազատ տնտեսական համակարգում անհատը «անտեսանելի ձեռքի» ազդեցությամբ ստեղծում է այնպիսի իրավիճակ, որը նրա իրական նպատակը չէր: Սեփական շահը հետապնդելով՝ մարդն ավելի արդյունավետ է զարգացնում հասարակությունը, քան այն դեպքում, երբ իրականում ցանկանում է միայն հասարակության շահն առաջ տանել: Եթե մարդ, հնարավորություն ստանա, ապա նա անընդհատ կփորձի բարելավել իր կյանքը եւ առավել արդյունավետ կօգտագործի ռեսուրսները: Սա կաշխատի ոչ միայն անհատի անձնական շահի օգտին, այլ նաեւ՝ այլոց շահի:

Վերը նշվածը հաստատելու համար Սմիթն ասում է, որ հացթուխի կամ մսագործի բարյացակամությունից չէ, որ նրանց ստեղծած բարիքը հայտնվում է մեր սեղաններին, դա նրանց սեփական շահն է այդպես թելադրում:

Այսպիսով, ըստ Սմիթի, ազատ շուկայական տնտեսությունը թույլ է տալիս բոլորին՝ բարելավելու իրենց կյանքը, եւ այդ բարելավումը հավասար է ազգային բարեկեցության, որն էլ նա անվանում է ազգերի հարստություն:

Սմիթի կարծիքով՝ ազատ շուկաներում աշխատուժը եւ կապիտալը օգտագործվում են բացառապես այն անձանց կողմից, ովքեր կարողանում են դրանք լավագույնս օգտագործել, ինչն էլ, իր հերթին, ստեղծում է շահագրգռվածություն, որպեսզի Նորարարություն ու տեխնիկական առաջընթաց լինեն: Այդ դեպքում անարդյունավետ աշխատողները կորցնում են իրենց աշխատանքը: Հետագայում Ջոզեֆ Շումպետերը այս գործընթացն անվանեց «ստեղծարար կործանում» («creative destruction»)<sup>5</sup>: Նրա կարծիքով՝ ազատ շուկաներն անընդհատ հեղափոխում են երկրի տնտեսական կառուցվածքը ներսից՝ մշտապես կործանելով հին կառուցվածքներն ու ստեղծելով նորը: «Ստեղծարար կործանման» գործընթացը կապիտալիզմի եական բնույթը եւ «հավիտենական ուրախությունն» է: Նա նաեւ

5 Joseph Schumpeter «Capitalism, Socialism, and Democracy», Routledge, 1994

ավելացնում է, որ հասարակությունը չի կարող օգուտ ստանալ «ստեղծարար կործանումից»՝ առանց ընդունելու, որ կարող են առանձին անհատներ ավելի վատ իրավիճակում լինել ոչ միայն որոշ ժամանակ, այլև ընդամիշտ: Նոր արդյունաբերությունների ստեղծումը չի կարող առաջ ընթանալ՝ առանց մարտահրավեր նետելու գոյություն ունեցողներին:

Շունպետերը՝ զարգացնելով այս միտքը, նշում է, որ ձեռնարկատիրությունը եւ մրցակցությունը «ստեղծարար կործանման» խթան են հանդիսանում: Նրա պարզաբանմամբ՝ կապիտալիստական համակարգն աշխատեցնող եւ զարգացնող հիմնական խթանը նոր սպառողական ապրանքներն են, արտադրության նոր եղանակները, նոր շուկաները, արդյունաբերության կազմակերպման նոր ձևերը, որոնք ստեղծվում են կապիտալիստական ձեռնարկությունների կողմից:

Վերը նշվածի հետաքրքիր օրինակ է համացանցը: Այն՝ որպես արդյունաբերության կազմակերպման նոր ձև, մարտահրավեր է նետել բիզնեսի մի շարք ոլորտների: Օրինակ՝ տպագիր մամուլը հայտնվել է շատ ծանր վիճակում, քանի որ մարդկանց մեծ մասը լուրերին հետեւում է համացանցի միջոցով: Նույն իրավիճակում են հայտնվել կինոարտադրությունը, հեռուստատեսությունը եւ բիզնեսի մի շարք տեսակներ: Այսպիսով՝ համացանցի «ստեղծարար կործանման» հատկությունն այն է, որ տպագիր մամուլի եւ բիզնեսի այլ ոլորտների աշխատողների համար ստեղծել է ավելի վատ իրավիճակ ոչ միայն որոշ ժամանակով, այլև, հնարավոր է, ընդամիշտ:

Ադամ Սմիթը «Ազգերի հարստությունը» աշխատությունում անդրադառնում է նաեւ կառավարության դերին: Ընդհանուր առմամբ՝ նա կողմ է երկրի տնտեսական գործերին կառավարության հնարավորինս քիչ ներգրավմանը, քանի որ պարզ չէ, թե ներգրավումս ինչի կհանգեցնի կամ ում օգտին կլինի: Իրականում նա դեմ չէր կառավարությանը, պարզապես նրան սահմանափակ դեր էր վերապահում, ավելի ստույգ՝ երեք կարեւոր գործառույթ՝ երկրի անվտանգության պահպանում, արդարադատության համակարգի անկողմնակալ կառավարում եւ հասարակության շահերից բխող հանրային որոշ աշխատանքների իրականացում, որոնց բնույթն այնպիսին է, որ անհատը չի կարող կատարել: Սմիթը շատ ճիշտ էր հասկացել, որ ոչ թե ազգի հարստության մեծությունն է կարեւոր, այլ այդ հարստության անընդհատ աճը: Նրա կարծիքով՝ եթե տնտեսական հարստությունը ֆիքսված է, ապա սոցիալապես վատ վիճակում գտնվողների մասնաբաժինը տնտեսությունում շարունակաբար իջնում է, իսկ հարստությունն աճելիս՝ այդ խմբի անդամները մեծ հնարավորություն են ունենում բարելավելու իրենց կենսամակարդակը:

Յետագայում կապիտալիզմը խիստ քննադատության է ենթարկվել Մարքսի կողմից: «Կապիտալ» աշխատության մեջ նա նկարագրում է կապիտալիզմի խնդիրներն ու արատները՝ անվանելով այն «բուրժուազիայի դիկտատուրա»:

Մարքսը գտնում էր, որ բոլոր հասարակությունների առաջընթացը տեղի է ունենում դասակարգային պայքարի դիալեկտիկայի միջոցով: Այդ պայքարը տեղի է ունենում երկու խավերի միջեւ՝ սեփականությունն իր ձեռքում կուտակած խավի, որը վերահսկում է արտադրությունը, եւ ցածր խավի, որը ապահովում է աշխատուժ այդ արտադրության համար: Յենց այս տեսանկյունից էլ նա տեսնում էր ինդուստրիալ կապիտալիզմի վախճանը, քանի որ այդ սոցիալ-տնտեսական

համակարգը ներքին լարվածություն է ստեղծում վերը նշված խավերի միջև, ինչն էլ, իր հերթին, տանում է դեպի ինքնառչնաջուր եւ նոր համակարգի՝ սոցիալիզմի ստեղծումը<sup>6</sup>:

Նրա կանխատեսմամբ՝ սոցիալիստական հասարակությունները կկառավարվեն աշխատող դասի կողմից: Դրան նա անվանել է պրոլետարիատի դիկտատուրա, իսկ պետության վախճանը, որի արդյունքում կլինի անդասակարգ հասարակություն՝ կոմունիզմ<sup>7</sup>:

Մարքսը նաեւ գտնում էր, որ կապիտալիզմի մի շարք գործընթացներ՝ ինչպիսիք են ժամանակի ընթացքում ուրբանիզացիայի, աշխատող դասակարգի, պրոլետարիատի թվաքանակյան աճը, կբերեն դասակարգային գիտակցության, եւ մարդկանց այդ խումբը կհասկանա, որ պետք է փոխել կապիտալիստական համակարգը: Նա հավատում էր, որ պրոլետարիատը՝ իր ձեռքում կենտրոնացնելով արտադրության միջոցները, կստեղծի այնպիսի համակարգ, որից բխողը հավասարապես կկարողանան օգտվել: Միաժամանակ կվերանա դասակարգային շահագործումը, եւ համակարգը գերծ կլինի պարբերական ճգնաժամերից<sup>8</sup>:

Խորհրդային Միությունը փորձեց գնալ Մարքսի առաջարկած ուղով, սակայն վերջինիս փորձը ցույց տվեց, որ պետությունը՝ կենտրոնացնելով արտադրության միջոցներն իր ձեռքում, իրականում սկսում է առավել մեծ վտանգ ստեղծել հասարակության համար: Մեծ խնդիրներ հարուցեց նաեւ տնտեսության պլանավորումը, քանի որ համապատասխան մարմինները չկարողացան ապահովել համապատասխան տնտեսական զարգացում, ինչն էլ Խորհրդային Միությանը կանգնեցրեց փլուզման առջեւ:

20-րդ դարի առաջին կեսին աշխարհը մի շարք մեծ ճգնաժամեր ապրեց եւ, ուսումնասիրելով այդ ճգնաժամերը, նոր տնտեսական զարգացման գաղափարներ առաջարկեց Ջոն Մեյնարդ Էյնսը՝ հանդես գալով նոր մտքերով ու հղացումներով, որոնք պետք է փոխեին տնտեսական զարգացման հեռանկարները: Նա մարդկության քաղաքական խնդիրը տեսնում է երեք սկզբունքների համատեղման մեջ: Դրանք են՝ տնտեսական արդյունավետություն, սոցիալական արդարություն եւ անհատի ազատություն: Նրա կարծիքով՝ առաջինը պահանջում է քննադատություն, զգուշություն եւ տեխնիկական գիտելիքներ, երկրորդը՝ անշահախնդիր ու խանդավառ ոգի, որը սիրում է սովորական մարդուն, իսկ երրորդը՝ բազմազանության եւ անկախության բարձր մակարդակի հանդուրժողականություն ու արժեւորում, որը բացառիկության եւ ոգեւորության հնարավորություն է տալիս<sup>9</sup>:

Էյնսը գտնում է, որ պետությունը չպետք է կատարի այն գործերը, որոնք արդեն անհատներն անում են, այլ պետք է ձեռք գարկի այնպիսի գործերի, որոնք ընդհանրապես ոչ մեկի կողմից չեն կատարվում: Նա մատնանշում է երեք ոլորտ, որտեղ պետության ներգրավվածությունը նախընտրելի է՝ կենտրոնական բանկի կողմից վարկերի եւ արժույթի վերահսկողություն, ամբողջ հասարակության

6 Karl Marx, "Capital", available at <http://www.marxists.org/archive/ruhle/1939/capital.htm>

7 William Ebenstein and Alan Ebenstein, "Great Political Thinkers, From Plato to The Present", The Dryden Press, 1990

8 Karl Marx, "Capital", available at <http://www.marxists.org/archive/ruhle/1939/capital.htm>

9 William Ebenstein and Alan Ebenstein, "Great Political Thinkers, From Plato to The Present", The Dryden Press, 1990

համար ներդրումների ու խնայողությունների չափերի որոշում եւ բնակչությանը հուզող հարցերի վերաբերյալ հանրային քաղաքականության մշակում: Այսինքն՝ նա համարում է, որ առանց կառավարության միջամտության տնտեսությունը չի կարող գործել բնականոն կամ՝ ըստ գոյություն ունեցող հնարավորությունների<sup>10</sup>:

Իր «Ազատ շուկաների ավարտը»<sup>11</sup> գրքում Քեյնզը ցույց էր տալիս նոր լիբերալիզմի տարբերությունը հինից: Նա գտնում է, որ ազատ շուկաներն արդեն հնացել են, եւ եկել է նոր ժամանակաշրջան: Մերժելով ազատ շուկաների գաղափարը, նա չի ընդունում սոցիալիզմը՝ որպես այլընտրանք: Նրա համար սոցիալիզմը դոգմա է, քանի որ պետության կողմից տնտեսության ամբողջական վերահսկողություն է ենթադրում, ինչպես որ ազատ շուկաների դոգման բացառում է տնտեսության մեջ պետության ներգրավումը:

Քեյնզն ավելի շատ կողմակից է պետության կողմից տնտեսության միջամտությանը, քան վերջինիս կողմից տնտեսության կառավարմանը: Նա գտնում է, որ պետությունը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որը թույլ կտա տնտեսությանը զարգանալ, այլ ոչ թե ծառայություններ մատուցել:

«Զբաղվածության, տոկոսադրույքի եւ փողի ընդհանուր տեսությունը»<sup>12</sup> աշխատության մեջ Քեյնզն առաջ քաշեց ամբողջական զբաղվածության տեսությունը եւ ամբողջական զբաղվածության խնդիրը դարձրեց տնտեսագիտության տեսության ու տնտեսական քաղաքականության առանցքը:

Եթե Ադամ Սմիթը գտնում էր, որ շուկայի «անտեսանելի ձեռքը» կարող է ապահովել բանական որոշումներ մարդու կողմից, որն իր հերթին բերում է տնտեսությունը ռացիոնալ իրավիճակի, ապա Քեյնզը պնդեց հակառակը: Սմիթը գտնում էր, որ եթե ամեն մի բիզնես հաշվարկի իր եկամուտն ու կորուստները, ապա այն կգործի ռացիոնալ, ինչը կհանգեցնի այն վիճակին, որտեղ ռացիոնալ է ամբողջ տնտեսությունը: Քեյնզը ցույց տվեց, որ իրականում կարող է լինել հակառակը, քանի որ անհատ բիզնեսմենի այն որոշումը, որը կատարվում է ելնելով եկամտի ու կորուստների բանական հաշվարկներով, կարող է հանգեցնել տնտեսության ընդհանուր իռացիոնալ իրավիճակին: Օրինակի համար՝ եթե բիզնեսները որոշում են ներդրում չկատարել տնտեսության նոր ոլորտներում կամ՝ ակնկալելով տնտեսական անկում, սկսում են կրճատել աշխատուժը, ապա նրանք, ըստ Քեյնզի, այդ ամենը կատարում են ռացիոնալության տեսանկյունից<sup>13</sup>:

Վերը նշվածը կարող է ռացիոնալ լինել անհատի տեսանկյունից, սակայն մեծ վնաս է հասցնում ազգային տնտեսությանը՝ հանգեցնելով գործազրկության աճի: Այդ պատճառով Քեյնզի գլխավոր փաստարկն այն էր, որ հիմնական ուշադրության կենտրոնում պետք է ընդհանուր տնտեսությունը լինի, այլ ոչ թե՝ անհատի տնտեսական որոշումները:

10 William Ebenstein and Alan Ebenstein, "Great Political Thinkers, From Plato to The Present", The Dryden Press, 1990

11 John Maynard Keynes, "The End of Laissez-fair", 1926, <http://www.panarchy.org/keynes/laissezfaire.1926.html>

12 John Maynard Keynes, «The General Theory of Employment, Interest and Money», 1936, <http://www.marxists.org/reference/subject/economics/keynes/general-theory/>

13 William Ebenstein and Alan Ebenstein, "Great Political Thinkers, From Plato to The Present", The Dryden Press, 1990

Ներդրումային հարցերում Զեյնզը չի վստահում անհատների նախաձեռնությանը, քանի որ փորձը ցույց է տվել, որ այդ տարբերակն արդյունավետ չի աշխատում: Սակայն նա չի էլ առաջարկում, որ պետությունը կատարի բոլոր ներդրումները: Պարզապես պետությունը, ըստ նրա, պետք է ստեղծի համապատասխան իրավիճակ, որը կխրախուսի նաեւ մասնավոր հատվածին՝ կատարելու ներդրումներ:

Զեյնզի աշխատությունը մեծ ազդեցություն է թողել պետությունների ներքաղաքական կյանքի վրա: Մեծ Բրիտանիայում բոլոր կուսակցությունները ընդունել են, որ խրոնիկ գործազրկությունը բացասական ազդեցություն է գործում տնտեսությունների վրա, եւ նրանք հաճախ այնպիսի քաղաքականություն էին մշակում, որը թույլ կտա լուծել այդ խնդիրը: ԱՄՆ-ում Ռուզվելտի «Նոր գործարք» ուսմունքը հիմնված էր Զեյնզի առաջադրած տեսության վրա: Ռուզվելտը հաճախ էր Զեյնզի հետ քննարկում երկրի տնտեսական խնդիրները: Եվ այդ խորհրդակցությունները հաճախ ազդում էին այն քաղաքական որոշումների վրա, որոնք միտված էին ճգնաժամից տնտեսության դուրսբերմանը<sup>14</sup>:

Հենց Զեյնզի առաջարկած տնտեսական զարգացման տիպոքինակն ավելացրեց ՀՆԱ-ի նկատմամբ պետական ծախսերը, պետություններն աշխարհի տարբեր մասերում նոր պարտավորություններ ստանձնեցին: Առաջ քաշվեց բարեխնամ պետության տիպոքինակը, որը ենթադրում է պետության կողմից քաղաքացու հիմնական կարիքների հոգում: Այս տիպոքինակը կարճ ժամանակում բարեկեցություն ստեղծեց շատ քաղաքացիների համար, սակայն երկարաժամկետ կտրվածքում այն բերեց մի շարք խնդիրներ՝ առաջարկի ավելացում, գնաճ, երբեմն տնտեսական պաշարամիջոցների նկատմամբ անհատի անպատասխանատվություն եւ այլն:

Հենց այս տնտեսական զարգացման մոդելի այլընտրանքային դրույթներով հանդես եկավ Ֆրիդրիխ ֆոն Հայեկը: Նա քննադատեց բարեխնամ պետության տիպոքինակը եւ հանդես եկավ ազատ շուկաների վրա հիմնված տնտեսական մոդելի դրույթներով: Ըստ նրա՝ կառավարության մեծացումը միշտ բացասական ազդեցություն է ունենում տնտեսության վրա, քանի որ փորձ է արվում պլանավորել տնտեսությունը, որի մասին կառավարությունը շատ քիչ տեղեկատվություն ունի: Ու պարզ է, որ անհատների կողմից կայացվող տնտեսական որոշումները բազմազան են եւ դրանց մասին տեղեկությունները՝ սահմանափակ: Իսկ քիչ տեղեկատվությամբ որոշումների կայացումը խելամիտ չէ եւ, հնարավոր է, տանի ճգնաժամերի<sup>15</sup>:

«Դեպի ճորտատիրության ճանապարհ»<sup>16</sup> գրքում Հայեկը խիստ քննադատության է ենթարկում սոցիալիզմը: Նա գտնում է, որ արտադրության ազգայնացումը եւ կենտրոնական պլանավորումը կառավարության համար ստեղծում են հնարավորություն՝ միջամտելու տնտեսությանը, ինչը, ըստ նրա, հիմնականում բացասական ազդեցություն է գործում: Նա հնարավոր չի համարում, որ սոցիալիզմն իրականություն դառնա, քանի որ այն մարդու էությանը դեմ է:

14 William Ebenstein and Alan Ebenstein, "Great Political Thinkers, From Plato to The Present", The Dryden Press, 1990

15 F. A. Hayek, "The Road to Serfdom", <http://jim.com/hayek.htm>

16 F. A. Hayek, "The Road to Serfdom", <http://jim.com/hayek.htm>

Հայելի կարծիքով՝ զարգանալու համար մարդկությունն ունի ազատության անհրաժեշտություն: Իսկ այդ ազատությունը կարելի է ապահովել հնարավորինս սահմանափակ կառավարության դեպքում, որի արդյունքում կլինեն նաեւ տնտեսական բազմաթիվ ազատություններ:

Հայելը 1960թ. հրատարակեց «Ազատության սահմանադրությունը»<sup>17</sup> աշխատությունը, որում փաստարկում է ազատ շուկաների՝ առաջադեմ եւ դինամիկ լինելու դրույթը: Նրա կարծիքով՝ հենց կապիտալիզմն է հնարավորություն ընձեռել սահմանափակելու արիստոկրատների իշխանությունը, նվազագույնի հասցնելու հասարակություններում տիրող անհավասարությունները:

Եթե Քեյնզը գտնում էր, որ շուկայում գոյություն ունեցող գները հիմնականում կապված չեն շուկայում առկա փողի քանակի հետ, ապա Հայելը ճիշտ հակառակ մոտեցումը ցուցաբերեց վերը նշված գրքում: Վերջինիս կարծիքով՝ շուկայում փողի քանակի ավելացումն ուղղակի ազդում է գների վրա, որովհետեւ կեղծ տնտեսական ակտիվություն է ստեղծում, ինչը երկարաժամկետ առումով բերում է ճգնաժամերի, քանի որ դրա իրական պահանջարկը չկա<sup>18</sup>:

Հայելի աշխատությունները մեծ ազդեցություն են ունեցել Արեւմուտքում: 1980-ականներից սկսած ազատ շուկաների համադրույթը գերիշխում էր Արեւմուտքում եւ աշխարհում: Իրենց կառավարման շրջանում Մարգարետ Թետչերը եւ Ռոնալդ Ռեյգանը սկսել էին կառավարության փոքրացման նպատակով մի շարք գործառնություններ լիազորել մասնավոր հատված, որպեսզի վերջիններս կատարեն այդ պարտավորությունները: Բազմաթիվ ընկերություններ սեփականաշնորհվեցին<sup>19</sup>: Կառավարության փոքրացման եւ մասնավորեցման գլխավոր փաստարկը հենված էր այն գաղափարի վրա, որ մասնավոր հատվածը գրեթե ցանկացած գործառնությամբ ավելի լավ է կատարում, քան՝ իշխանությունը: Դա հիմնված էր այն վարկածի վրա, որ մասնավոր շուկաները միշտ ավելի լավ ներդրումային որոշումներ են կայացնում եւ առավել արդյունավետ գործառնություններ իրականացնում, քան հանրային հատվածի պլանավորողները, այսինքն՝ կառավարությունը<sup>20</sup>:

Այս գործընթացը շարունակվեց Բիլ Բլինթոնի եւ Թոնի Բլեյթերի օրոք: Նրանք իրենց կառավարման շրջանը հռչակել էին «մեծ կառավարության վերջին ծեսերի ժամանակաշրջան»<sup>21</sup>: Նրանց հիմնական փաստարկները դարձյալ առնչվում էին Հայելի առաջ քաշած տեսությունների հետ, որոնք հիմնականում ազատ շուկաների կամ կապիտալիզմի հետ են կապված:

Այնուհետեւ կապիտալիզմի քաղաքական համադրույթը դուրս եկավ ներքաղաքական շրջանակներից եւ դարձավ միջազգային տնտեսական քաղաքականության սկզբունք: Շրջանառության մեջ դրվեց «Վաշինգտոնի կոնսենսուս»

17 F. A. Hayek, "The Constitution of Liberty", 1960,

<http://www.iea.org.uk/sites/default/files/publications/files/Hayek's%20Constitution%20of%20Liberty.pdf>

18 William Ebenstein and Alan Ebenstein, "Great Political Thinkers, From Plato to The Present", The Dryden Press, 1990

19 The Economist, "A special report on the future of the state: Taming Leviathan"

20 John Quiggin, "Five Zombie Economic Ideas That Refuse to Die" Foreign Policy Magazine, OCTOBER 15, 2010 [http://www.foreignpolicy.com/articles/2010/10/15/five\\_zombie\\_economic\\_ideas\\_that\\_refuse\\_to\\_die?page=full](http://www.foreignpolicy.com/articles/2010/10/15/five_zombie_economic_ideas_that_refuse_to_die?page=full)

21 The Economist "The growth of the state: Leviathan stirs again" January 21, 2010

[http://www.economist.com/node/15328727?story\\_id=15328727](http://www.economist.com/node/15328727?story_id=15328727)

տնտեսական քաղաքականությունը<sup>22</sup>: «Վաշինգտոնի կոնսենսուս» եզրը 1989թ. շրջանառության մեջ դրեց Ջոն Վիլյամսոնը իր աշխատություններից մեկում: Վերջինս նկարագրում է տնտեսական քաղաքականության տասը դեղատոմսեր, որոնք նախատեսված են միջազգային ֆինանսական կազմակերպություններից՝ (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ եւ այլն), օգնություն ակնկալող պետությունների համար<sup>23</sup>:

«Վաշինգտոնի կոնսենսուսի» տասը հիմնական կետերն են՝ ա/ *հարկային կարգապահություն*: Սա նախատեսված էր այն երկրների համար, որտեղ եղել են բարձր գնած եւ վճարային հաշվեկշռի ճգնաժամ, որոնք հիմնականում հարվածել են աղքատներին, քանի որ հարուստները մեծամասամբ կարողացել են իրենց փողերը դուրս տանել երկրից, բ/ *հանրային ծախսերի գերակայության փոփոխություն*: Սա առաջարկում էր զարգացմանն ուղղված եւ աղքատությանը տրվող ծախսերից անցում կատարել դեպի կրթությանը, առողջապահությանն ու ենթակառուցվածքներին ուղղված ծախսեր, գ/ *հարկային բարեփոխումներ*: Վերջինիս նպատակն էր ստեղծել լայն հարկային խարսխի վրա հենված եւ հարկերի ավելի ցածր սահմանային դրույթաչափեր կիրառող համակարգ, դ/ *տոկոսադրույքների ազատականացում*, որը ենթադրում է՝ շուկան պետք կարգավորի տոկոսադրույքները, ե/ *մրցակցային փոխարժեք*, գ/ *տնտեսության մասնավորեցում*, է/ *առեւտրի ազատականացում*, ը/ *արտաքին ուղղակի ներդրումների ազատականացում*, թ/ *ապակարգավորում*: Սա նշանակում է անվտանգության եւ շրջակա միջավայրի համար ստեղծված օրենքների կասեցում, ժ/ *սեփականության իրավունք*: Սա էլ նշանակում է ողջամիտ գների շրջանակներում սեփականություն ձեռք բերելու իրավունք<sup>24</sup>:

Հենց այս տասը կետերի վրա էր հիմնված 1990-ականների հիմնական քաղաքականությունն աշխարհի տարբեր երկրներում: Մեծածավալ մասնավորեցումներ էին կատարվում Լատինական Ամերիկայում, Ասիայում եւ այլուր: Սակայն շուտով այս երկրները հայտնվեցին ճգնաժամի մեջ, եւ ճգնաժամը եւս մեկ անգամ ցույց տվեց ազատ շուկաների առասպելը<sup>25</sup>:

Ազատ շուկաների կողմնակիցները խոստանում էին բարեկեցություն բոլորին, սակայն իրականում ազատ շուկաները խնդիրներ ստեղծեցին հասարակությունների համար, եւ մի շարք երկրներ կանգնեցին նոր ճգնաժամի առջեւ:

Ազատ շուկաների հարուցած յուրահատուկ խնդիրներից էր նաեւ հետեւյալը. նախ՝ մասնավոր հատվածը հզորացավ, եւ առանձին կազմակերպություններ ավելի մեծ դրամագլուխ կուտակեցին իրենց վերահսկողության ներքո, քան մի շարք պետություններ միասին վերցրած: Ամերիկյան հայտնի Wall-Mart ընկերությունն ավելի շատ եկամուտ ունի, քան 25 երկրի ՀՆԱ-ները միասին վերցրած: Gates հիմնադրամն ավելի շատ փող է ծախսել աշխարհում, քան Առողջա-

22 John Williamson, «A Short History of the Washington Consensus», <http://www.iie.com/publications/papers/williamson0904-2.pdf>

23 John Williamson, «A Short History of the Washington Consensus», <http://www.iie.com/publications/papers/williamson0904-2.pdf>

24 John Williamson, «A Short History of the Washington Consensus», <http://www.iie.com/publications/papers/williamson0904-2.pdf>

25 Manuel Pastor, Jr, «Capital Flight and the Latin America Debt Crisis», Economic Policy Institute, [http://www.epi.org/page/-old/studies/capital\\_flight-1989.pdf](http://www.epi.org/page/-old/studies/capital_flight-1989.pdf)



պահության համաշխարհային կազմակերպությունը<sup>26</sup>: Երկրորդ՝ հիմնականում ազատ շուկաների պատճառով հարստության բեռնացում տեղի ունեցավ հասարակություններում: ԱՄՆ-ում երկրի ֆինանսական հարստության գրեթե 42 տոկոսը կենտրոնացել է բնակչության 1 տոկոսի ձեռքում<sup>27</sup>: Մարդկանց ազատությունը, կարծես թե, վաճառվել է խոշոր կորպորացիաներին՝ որպես «ազատ շուկայական ժողովրդավարություն»: Մեր օրերում ազատ շուկաները կորպորացիաներին հնարավորություն են տվել իսպառ շահագործելու ում եւ ինչ ուզում են, ինչպես ցանկանում են, որը նշանակում է ազատ մարդու ու ազատ բնության ավարտ<sup>28</sup>:

2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամն աշխարհի տարբեր մասերում ցույց տվեց, որ ազատ շուկաների կամ մասնավոր հատվածի արդյունավետության վարկածը չի կարողանում արդարացնել սպասումները: Հասարակությունների մեծ մասը տուժեցին հենց ազատ շուկաների ստեղծած ճգնաժամերից: Մի շարք աղմկահարույց սեփականաշնորհումներ՝ ներառյալ *Air New Zealand*-ի եւ *Railtrack*-ի դեպքերը Մեծ Բրիտանիայում, հակառակ արդյունքը տվեցին: Այսինքն՝ չկարողացան ավելի արդյունավետ սպասարկել հասարակությանը եւ լուծել առկա խնդիրները: Այնուհետեւ համաշխարհային ճգնաժամի ընթացքում այնպիսի մասնավոր հսկաներ, ինչպիսիք են General Motors-ը եւ American International Group-ը, փնտրում էին պետական սեփականության պաշտպանությունը<sup>29</sup>: Հենց ճգնաժամից հետո էր, որ պետությունները ստիպված էին ավելի շատ ուղղակի կամ անուղղակի ձեռով ղեկավարել խոշոր ընկերություններ: 2009թ. Forbes Global 2000-ի ցուցակում առաջատար 25 ընկերություններից 4-ը պետական սեփականություն էին<sup>30</sup>:

Իսկ գլոբալացումն իր հերթին մի շարք ոլորտներում բարձրացրեց մարդկանց կախվածությունը պետությունից: Աշխատանքի կորստի վտանգը ստիպեց միջին խավին՝ ավելի շատ պահանջել սոցիալական անվտանգության երաշխիքներ, իսկ մեծ շուկաների ստեղծած անհավասարության պատճառով ընտրողները սկսեցին ավելի շատ վերաբաշխումներ պահանջել: Կամ՝ ահաբեկչության վտանգը, որը ստիպեց պետություններին՝ ավելի շատ միջոցներ ուղղել անվտանգության ոլորտ: Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ստեֆան Ուոլտը շատ ճիշտ է նկատել, որ «սեպտեմբերի 11-ի ահաբեկչության ժամանակ ոչ մեկը Բիլ Գեյթսին կամ Բաց հասարակության ինստիտուտ չի զանգել»<sup>31</sup>: Հաշվի առնելով գլոբալ տաքացումը, այսօր եւս անհրաժեշտություն կա, որպեսզի կառավարությունները ներգրավվեն տնտեսության մեջ, որպեսզի կարողանան լուծել աշխարհի տա-

26 David Ruthkopf, «Inside Power, Inc.», Foreign Policy,

available at: [http://www.foreignpolicy.com/articles/2012/02/27/inside\\_big\\_power\\_inc?page=full](http://www.foreignpolicy.com/articles/2012/02/27/inside_big_power_inc?page=full)

27 <http://www.mybudget360.com/top-1-percent-control-42-percent-of-financial-wealth-in-the-us-how-average-americans-are-lured-into-debt-servitude-by-promises-of-mega-wealth/>

28 Vandana Shiva, «The lies of free market democracy», Aljazeera,

<http://www.aljazeera.com/indepth/opinion/2011/11/20111112135744718390.html>

29 John Quiggin, «Five Zombie Economic Ideas That Refuse to Die» Foreign Policy Magazine, OCTOBER 15, 2010

30 The Economist «The growth of the state: Leviathan stirs again» January 21, 2010

[http://www.economist.com/node/15328727?story\\_id=15328727](http://www.economist.com/node/15328727?story_id=15328727)

31 The Economist, «A special report on the future of the state: Taming Leviathan» March 17, 2011

<http://www.economist.com/node/18359896>

բացման խնդիրը, քանի որ ազատ շուկաները չունեն այդ ներուժը<sup>32</sup>:

Ի դեպ, ճգնաժամը ցույց տվեց, որ իրավասու պետական տեխնոկրատները մի շարք երկրներում արդյունավետ ձեռով կարողացել են պետությունը ներգրավել տնտեսության կառավարման եւ զարգացման գործընթացներում: Օրինակ՝ Բրազիլիան օգտագործեց պետության կողմից հովանավորվող զարգացման բանկերը՝ վարկային միջոցները տնտեսության անհրաժեշտ հատվածներ արագ ուղղորդելու համար: Չինաստանը կատարեց նույնը՝ պետական բանկերի միջոցով: Եթե Ռեյգան-Թեյտեր ուսմունքն այն համոզմունքն է, որ ազատ շուկաները կարող են պետության փոխարինող հանդիսանալ, ապա ճգնաժամը ցույց տվեց, որ պետության կողմից վատ կարգավորվող կամ ընդհանրապես չկարգավորվող շուկաները կարող են ստեղծել արտակարգ ծախսեր<sup>33</sup>:

Կարծես թե Մարքսը ճիշտ էր գուշակել, որ գլոբալացումը, ֆինանսական միջնորդությունները եւ եկամուտների վերաբաշխումը կարող են հանգեցնել կապիտալիզմի ինքնաղչեացմանը: Այսօր ազատ շուկաները կանգնել են ոչ միայն ինքնաղչեացման առջեւ, այլեւ միջոցների անխնա օգտագործման պատճառով ստեղծել գոյապահպանական ճգնաժամ եւ մարտահրավեր նետել քաղաքակրթությանը:

Ադամ Սմիթի առաջարկած գաղափարը, թե սեփական երջանկության համար պայքարը բերում է հասարակության ընդհանուր բարեկեցության, սխալ դուրս եկավ, քանի որ մարդկանց մի փոքր խումբ սեփական երջանկության համար պայքարում երկրի հարստության մեծ մասը կենտրոնացրեց իր ձեռքում՝ մտացածին զրկելով զարգանալու եւ նոր հնարավորություններ ձեռք բերելու միջոցներից: Ազատ շուկաների փորձը նաեւ ցույց տվեց, որ Ադամ Սմիթի առաջարկած այն գաղափարը, թե մարդուն ազատ թողնելու դեպքում վերջինս ոչ միայն իր համար է բարեկեցություն ստեղծում, այլեւ՝ մտացածի, չբռնեց կյանքի քննությունը: Մարդը՝ սեփական շահը հետապնդելով, ավելի արդյունավետ չզարգացրեց հասարակությունը, այլ շատ դեպքերում, իր ազահության պատճառով, այլոց կենսական տարածքի համար խնդիրներ ստեղծեց:

Ազատ շուկաների ստեղծած խնդիրները ստիպել է մարդկանց դուրս գալ փողոցներ աշխարհի տարբեր երկրներում՝ պահանջելով սոցիալ-տնտեսական արդարություն: Այսօր մարդկությունը տնտեսական զարգացման նոր մոդելներ է փնտրում: Ազատ շուկաների ձախողումը, ինչպես նաեւ տնտեսության ամենամեծ պլանավորող երկիր Խորհրդային Միության փլուզումը եւ Չինաստանի՝ երբեմն պետական կապիտալիզմ անվանվող տնտեսական զարգացման մոդելի ի հայտ բերած խնդիրները բոլորին ստիպել են նոր ճանապարհներ որոնել տնտեսական զարգացման համար:

Հարկ է ստեղծել զարգացման այնպիսի մի տիպորինակ, որը կսահմանափակի քաղաքականության վրա կորպորացիաների մեծ ազդեցությունը, կկարողանա հնարավորինս հավասար վերաբաշխել երկրի հարստությունը հասարակության բոլոր անդամների միջեւ: Փորձը ցույց տվեց, որ գոյություն ունեցող համակարգերից եւ ոչ մեկն ի գործու չէ այդ խնդիրն արդյունավետ ձեռով լուծել:

32 The Economist “The growth of the state: Leviathan stirs again” January 21, 2010 [http://www.economist.com/node/15328727?story\\_id=15328727](http://www.economist.com/node/15328727?story_id=15328727)

33 Nancy Birdsall and Francis Fukuyama, “The Post-Washington Consensus: Development after the Crisis” 03.03.2011

Այդ պատճառով աշխարհը նոր զարգացման տիպորինակների փնտրողների մեջ է: Հստակ չէ՝ արդյո՞ք ամերիկյան կապիտալիզմն ավարտվել է, թե՛ ոչ: Նաեւ հստակ չէ՝ արդյո՞ք «մենք բոլորս սոցիալիստ ենք»: Սակայն պարզ է, որ նոր տնտեսական զարգացման տիպորինակի անհրաժեշտություն կա: Այն, որ նոր մոդելներն ունենալու են հների առանձնահատկությունները՝ միանշանակ է, սակայն դրանք կունենան նաեւ նախկինում չունեցած նոր առանձնահատկություններ: Նաեւ պարզ է, որ նոր տիպորինակների հիմնական խնդիրն այնպիսի տնտեսական համակարգ ունենալն է, որը կապահովի զարգացում, ինչպեսեւ ի գորու կլինի ստեղծված հարստությունը հասարակության անդամների միջեւ վերաբաշխել արդարության սկզբունքով:

---

## **АРМЕН ГРИГОРЯН**

### **В поисках новых моделей экономического развития**

В статье рассматриваются теории экономического развития, предложенные известными философами. В нем также затрагиваются проблемы свободного рынка и нынешнего глобального экономического кризиса, разразившегося в основном по причине развития свободного рынка на основе механизмов саморегулирования. В докладе выдвигается необходимость создания новой модели экономического развития, так как старые находятся в кризисном состоянии и неспособны обеспечить рост мировой экономики.

## **ARMEN GRIGORYAN**

### **Seeking New Models of Economic Development**

The paper scrutinizes the economic development theories proposed by famous philosophers. It also addresses issues of relevance to free markets and the current global economic crisis, which mainly resulted from markets being left to regulate themselves. The research considers the creation of a new model of economic development—whose necessity grows as older models continue to remain in crisis and prove incapable of boosting the economies of the world.

## «Արաբական գարուն». հնի ու նորի արանքում

### ՍԱՐԻ ՍԱՐՈՅԱԼ

*Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագետ: Վերլուծական հրապարակումներով ու հոդվածաշարերով հանդես է գալիս պարբերական մամուլում եւ էլեկտրոնային լրատվամիջոցներում:*

Հայացք ձգելով 2011-2012թթ. արաբական աշխարհում տեղի ունեցած եւ ցայժմ շարունակվող իրադարձությունների վրա՝ կարելի է պնդել, որ կատարվածն արաբական գրեթե բոլոր երկրների կյանքում արդեն իսկ հեղափոխական նշանակությամբ մի գործընթաց է, որը հետագայում, դանդաղ կամ արագ ծավալվելուն համընթաց, դառնալու է Մերձավոր Արևելքի սոցիալ-քաղաքական նոր քարտեզը գծելու գործում մեծ վերափոխումների խթան: Որքան էլ նման պնդումը տեսանելի է անգամ անզեն աչքով, երեւույթը հեղափոխական որակելու համար մասնագիտական ամրագրումը կարիք ունի լրացուցիչ մեկնաբանության:

Հարկ է տալ իրադարձությունների զարգացման ոչ միայն պատճառահետևանքային կապերի երկարած շղթան, այլև փորձել վերլուծել նման դեպքերի առաջացման նախադրյալները, որոնք հիմնական ջրբաժանն են կազմում բոլոր հեղափոխական գործընթացների համար: Առավել էս, որ քաղաքագիտական-փորձագիտական շրջանակներում Հյուսիսային Աֆրիկայի եւ Մերձավոր Արևելքի երկրներում տեղ գտած եւ «Արաբական գարուն» անունով տարածում ստացած սոցիալ-քաղաքական ու տնտեսական այդ վերափոխումները ոչ բոլորի կողմից են ընկալվում որպես օբյեկտիվ երեւույթներ: Շատերը հակված են դրանում տեսնել առանձին օտար ուժերի մտածրագրավորված վարքը, որը նպատակ ուներ (ունի) նման փոփոխություններ իրականացնելու միջոցով սպասարկել որոշակի շահեր:

Ֆորմալ առումով «Արաբական գարունը» սկսվեց ծմռանը՝ 2010թ. դեկտեմբերի 17-ին, երբ բարձրագույն կրթությամբ 26-ամյա մի երիտասարդ Թունիսի Սիդի-Բուզդիդ քաղաքում՝ դժգոհ լինելով աղքատ ու անհեռանկար իր ապրելակերպից, հրապարակային ինքնահրկիզում կատարեց քաղաքապետարանի առջև: Նրա արարքը իշխանությունների հանդեպ բողոքի արտահայտման խթան հանդիսացավ. քաղաքի ու նաեւ Թունիսի այլ քաղաքների փողոցներ դուրս եկան հարյուրավոր, ապա եւ հազարավոր քաղաքացիներ: Նախագահ Չին Ալ-Աբիդին բեն Ալլիի ուժային գործողությունները հանգեցրին հենց իր պաշտոնազրկմանը. նա ընտանիքի հետ 2011թ. հունվարի 14-ին ստիպված էր փախչել ու ապաստանել Սաուդյան Արաբիայում:

Թունիսյան դեպքերի ծավալմանը զուգընթաց՝ ժողովրդական հուզումները տարածվեցին արաբական այլ երկրներում: Այն բանից հետո, երբ հինգ հոգի դիմեցին ինքնահրկիզման գործողության, հունվարի 25-ին բազմահազարանոց ցույցեր սկսվեցին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում՝ տարածվելով նաեւ մյուս քաղաքներում: Մի բանի օրում հուզումները վերափոխվեցին իշխանության հետ շատ կոշտ բախումների՝ հարյուրավոր զոհերի ու հազարավոր ձեռքակալվածների ամկայությամբ: Կահիրեի Թահրիր հրապարակը դարձավ այն նշանաբանը, որը միավորում էր արաբական տարբեր երկրների քաղաքացիներին՝ իրենց սոցիալական, քաղաքական, տնտեսական բազմաբնույթ պահանջներն իշխող վարչախմբերին ներկայացնելիս:

Թունիսի ու Եգիպտոսի օրինակով ժողովրդական հուզումների ալիքը 2011թ. սկզբին տարածվեց Ալժիրում, Չոբդանանում, Եմենում, իսկ մի փոքր ավելի ուշ՝ նաեւ արաբական մյուս երկրներում: Փետրվարի 11-ին Եգիպտոսի նախագահ Յուսի Սուբարաբը հրաժարական տվեց՝ իշխանությունը փոխանցելով զինված ուժերի բարձրագույն խորհրդին: Իսկ փետրվարի 15-ին հակակառավարական ցույցեր սկսվեցին Լիբիայի երկրորդ քաղաք Բենգազիում: Լիբիայի առաջնորդ Մուամար Զադաֆիի՝ ռազմուժի միջոցով ցույցերը ցրելու գործողություններն այս երկիրը զցեցին քաղաքացիական պատերազմի գիրկը: Այդուհետ Լիբիան ներկայանում էր միայն պատերազմական ամփոփագրերով, որտեղ ամիսներ շարունակ տեղ էին գտնում Լիբիայի ազգային անցումային խորհրդի ղեկավարությամբ գործող ապստամբական ուժերի եւ Զադաֆիի բանակի միջեւ ռազմական գործողությունների նկարագրությունները:

Լիբիական ճակատում հստակություն մտավ միայն հոկտեմբեր ամսին: Օտարերկրյա պետությունների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա եւ այլն) լիարժեք աջակցությունը վայելող Անցումային խորհրդի զինված ստորաբաժանումները հոկտեմբերի 17-19-ին գրավեցին վերջին դիմադրական օջախները՝ Սիրտ եւ Բենի Վալիդ քաղաքները: Զաղաքացիական պատերազմը Լիբիայում խլեց տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր, ավերեց երկրի զգալի մասը, կաթվածահար արեց պետական կառույցների ու տնտեսական ենթակառուցվածքների կենսագործունեությունը: Սպանվածների թվում էր նաեւ երկրի առաջնորդ Զադաֆին:

2011թ. մարտի կեսերին ժողովրդական հուզումների ալիքը հասավ Սիրիա: Երկրի գրեթե բոլոր քաղաքներում ցույցեր սկսվեցին: Չնայած սիրիական իշխանությունների տարբեր ամիսներին ձեռնարկած նշանակալից մի շարք քայլերին (Նոր կառավարության կազմավորում, աշխատավարձերի բարձրացում, 1963 թվականից գործող արտակարգ դրության վերացում, քաղբանտարկյալների ազատ արձակում, Նոր Սահմանադրության մշակում ու հանրաքվեով ընդունում եւ այլն), այդպես էլ չհաջողվեց կանգնեցնել հակաիշխանական ընդվզումները: Լիբիայի նման Սիրիան եւս ընկղմվեց քաղաքացիական պատերազմի հորձանուտում: Ներքաղաքական ճգնաժամը մի բանի հազար սիրիացիների կյանք արժեցավ:

Արաբական աշխարհի մեկ այլ երկրում՝ Եմենում, ժողովրդական հուզումների ալիքը Նույնպես ներքաղաքական ճգնաժամի պատճառ դարձավ: Վարչախմբի եւ ընդդիմության միջեւ 10 ամիս տեւած պայքարը, որը Նույնպես ուղեկցվեց արյունալի բախումներով, ի վերջո հանգուցալուծվեց Նոյեմբերի 23-ին: Այդ օրը

Եմենի նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհը ստորագրեց իշխանությունը երկրի փոխնախագահին փոխանցելու մասին հրամանագիրը: Այդ համաձայնության դիմաց, չնայած ցուցարարների ակնհայտ անհամաձայնություններին ու դժգոհություններին, նրան տրվեցին անձեռնմխելիության երաշխիքներ:

Բացի նշվածներից, «Արաբական գարունը» ժողովրդական հուզումներ ու ներքաղաքական լարումներ առաջացրեց արաբական այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Բահրեյնում, Օմանում, Մարոկկոյում եւ այլուր: Սակայն ժողովրդական զանգվածների ցուցաբերած անբավարար ուժի կամ վարչախմբերի քաղաքական ու ուժային լուծումների պատճառով այդ երկրներում ցուցարարները չկարողացան հասնել իշխող կլանների տապալմանը: Միաժամանակ հարկ է նկատել, որ ցուցարարների գործողություններին զուգահեռ՝ քաղաքացիական իրավունքների ճանաչման, սոցիալական երաշխիքների ու արտոնությունների հաստատման եւ այլ հարցերում իշխող վարչախմբերն, այնուամենայնիվ, գնացին մեծ զիջումների:

2010-ից ծավալված իրադարձությունները՝ չնայած առանձին երկրներում զանգվածների երբեմն բոլորովին տարբեր պահանջներին, տրամաբանական մի շղթա, իհարկե, կազմում են: Առաջին հերթին ընդհանրական հանգամանք էր այն, որ հասարակական մի շարք շերտերի՝ փոփոխությունների հասնելու հնարավորության գիտակցումը շատ առարկայորեն էր արտահայտված: Դա խթանում էր, որ առանձին մի երկրում բողոքի յուրաքանչյուր դրսեւորում «դոմինոյի էֆեկտով» իր կոնկրետ շարունակությունը ստանա մյուսում: Բացի տվյալ հանգամանքից, կային ներքին ու արտաքին շատ այլ էական ազդակներ, որոնք չափվում են թե՛ տարիների եւ թե՛ տասնամյակների կտրվածքով եւ, մեր կարծիքով, Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող փոփոխությունների նախադրյալներն են:

Ժողովրդական հուզումների առաջացման նախադրյալների թվում կարճաժամկետ ազդակներից էին վերջին տարիներին խորացած սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրները: Հատկապես մատնանշելի են մեծ չափերի հասած աղքատությունը, գործազրկությունը, կոռուպցիան, ինչպես նաեւ եկամուտների անհամաչափ բաշխումը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի խորապատկերին եւ ապրանքների ընդհանուր գնաճի պայմաններում տվյալ խնդիրներն արդեն շատ սուր բնույթ էին ստացել, ինչն էլ զանգվածների ընդվզման համար լրջագույն հիմք էր:

Խնդիրների մյուս խումբը կապված էր ինչպես քաղաքացիական գիտակցության մեծացման, այնպես էլ իշխող վարչախմբերի կողմից քաղաքացիական ու քաղաքական իրավունքների անտեսման հետ: Այդ տեսակետից հատկանշական են խոսքի ազատության, իշխող ընտանիքների ժառանգականության կամ տարիներ ձգվող արտակարգ դրության պատճառներով քաղաքացիական իրավունքների սահմանափակումները եւ այլն: Չնայած նման սահմանափակումներ գոյություն ունեին շատ վաղուց, սակայն տարիներ շարունակ քաղաքացիական բնակչությունն իր առջեւ այդ կարգի երեւոյթների դեմ պայքարելու եւ դրանք կազմաքանդելու խնդիր չէր դնում: Եվ միայն «Արաբական գարունը» նախորդած տարիներին որոշակի աշխուժություն սկսեց նկատվել քաղաքացիական հասարակության կառուցման եւ համապատասխան պահանջների ձեւավորման առումով:

Բացի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական-քաղաքացիական խնդիրներից, կարճաժամկետ այլ ազդակների թվում տեղին է կանգ առնել եւս երկու կարեւոր հանգամանքների վրա: Առաջին հերթին դա վերաբերում է Մերձավոր Արեւելքում վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների տարածմանը (հատկապես համացանցի («Twitter» եւ «Facebook» սոցիալական ցանցերի) եւ բջջային հեռախոսների միջոցով): Վերջիններս լրացրին շփման եւ տեղեկացված լինելու հասարակական պահանջմունքները ու զգալի ազդեցություն թողեցին հանրային գիտակցության վրա՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտատերերին ստիպելով գնալ ինքնակազմակերպման՝ հասնելու սեփական իրավունքների ճանաչմանն ու պաշտպանությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաներն, այդպիսով, բացեցին խնդիրների վերհանման, քննարկման, ապա եւ՝ միասնաբար լուծման լայն ասպարեզ:

Ժողովրդական հուզումները խթանող մյուս հանգամանքը կապված է արաբական աշխարհում ժողովրդագրական պատկերի կտրուկ փոփոխության հետ: Վերջին տարիներին արձանագրված բնական աճի եւ բնակչության ընդհանուր թվում բարձրագույն կրթությամբ երիտասարդների տեսակարար կշռի մեծացման պայմաններում սոցիալական ու քաղաքացիական խնդիրներն անհամեմատ լայն արձագանք էին գտնում բնակչության շրջանում՝ նպաստելով պահանջատեր հասարակական հոծ զանգվածների ի հայտ գալուն: Վերն արդեն նշված սոցիալ-տնտեսական խնդիրները՝ գումարվելով բնական աճի հարուցած անհարմարություններին, պարարտ հող էին պայթյունափայտանգ իրավիճակի ստեղծման համար:

Հուզումների առաջացմանը նպաստող այն նախադրյալները, որոնց ազդեցությունը չափվում է «երկարաժամկետ» կտրվածքով, արաբական հասարակության մեջ երբեմն նույնացվում են քաղաքական ու քաղաքացիական նսեմացված շատ իրավունքների հետ: Մասնավորապես խոսքի ազատության, խաղաղ ցույցերի, երթերի, հանրահավաքների անցկացման, ազատ տեղաշարժի եւ այլ իրավունքներ մի կողմից հասարակական գիտակցության մեջ արմատավորվեցին միայն վերջին տարիներին՝ շնորհիվ արաբական երկրներում քաղաքացիների՝ իրենց բնական իրավունքների գիտակցման: Սակայն մյուս կողմից դրանք տասնամյակների պատմական փորձով արմատավորված աշխարհայացքային (դեպի եվրոպական ժողովրդավարություն ուղղված) առաջնահերթություններ էին, որոնք միանգամից իրենց դրսևորումը ստացան վերն արդեն նշված կարճաժամկետ նախադրյալների ակտիվացման հետ մեկտեղ<sup>1</sup>: Այլ կերպ ասած՝ «երկարաժամկետ» նախադրյալների հետեւում առավելապես ընկած են մշակութաբանական

1 Այդ տեսանկյունից խոսուն են ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի՝ Կահիրեի համալսարանում 2009թ. արտահայտած մտքերը, որոնք, ըստ ամենայնի, կոնկրետ ազդեցություն ունեցան հետագայում 2011թ., Թահիրի հրապարակում արաբական հեղափոխական զանգվածների կողմից հաղթանակ տոնելու գործում: «Ես հավատում եմ, որ բոլոր մարդիկ միանման ձգտումներ ունեն. ազատ խոսքի իրավունք ունենալ եւ որոշել, թե ինչպես պետք է իրենց կառավարեն, վստահություն օրենքի իշխանության նկատմամբ եւ արդարադատության հավասար կիրառում, ունենալ թափանցիկ իշխանություն, որը չի գողանում իր ժողովրդից, ինչպես նաեւ կենսակերպի ազատ ընտրություն: Սրանք ոչ միայն ամերիկյան գաղափարներ են, այլեւ մարդու իրավունքներ, եւ դա է պատճառը, որ մենք պաշտպանում ենք դրանք ամենուրեք», - ասել էր Օբաման (Նախագահ Օբաման Մերձավոր Արեւելքում, 05 06 2009, <http://www.prm.am/index.php/2009-02-17-14-45-16/44-2009-02-16-15-28-13/1761-2009-06-05-17-03-52>):

ու քաղաքակրթական (այդ թվում՝ էթնոդավանաբանական) շատ խուլթեր, որոնք տասնամյակներ շարունակ լինելով ճնշված վիճակում, առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է դուրս հորդեին ու ընդգրկեին դժգոհ գանգվածներին:

«Արաբական գարնան» ընթացքում ի հայտ եկած եւ գանգվածների կողմից վարչախմբերին ներկայացված պահանջների ու գործողությունների մեջ արտացոլվել են այնպիսի գաղափարներ, տրամադրություններ, կարգախոսներ, որոնք տասնամյակների ընթացքում գոյություն ունեցած քաղաքական, էթնոդավանաբանական խտրականությունների կամ հասարակությունների (բնույթով կրոնական, պահպանողական, բայց նաեւ աղքատ կամ հետաժառանգ) եւ տիրապետող վարչախմբերի (բնույթով շատ դեպքերում աշխարհիկ, բայց նաեւ հղիացած ու լճացած) մշակութային անհամապատասխանության արդյունք են: Այսպես՝ Լիբիայի առաջնորդ Մուամար Զադաֆին իսլամական ծայրահեղականության դեմ հանդես եկող գործիչներից էր եւ անհանդուրժող վերաբերմունք ուներ «իսլամական պետության» գաղափարի նկատմամբ<sup>2</sup> այն դեպքում, որ Լիբիայի ազգային անցումային խորհրդի ղեկավարը՝ Քադաֆիի անկումից հետո արտասանած իր առաջին հրապարակային ճառում, տուրք տալով հասարակական տրամադրություններին, որպես Լիբիայի նոր օրենսդրության աղբյուր, մատնանշում էր իսլամը<sup>3</sup>: Իսկ «Արաբական գարնան» ողջ ընթացքում Սիրիայում ու Եգիպտոսում վարչախմբերի դեմ կոշտ պայքար մղած «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը մշտապես հանդես էր գալիս իսլամական ծայրահեղական կարգախոսներով ոչ միայն նրա համար, որ կրոնաքաղաքական միավորում էր, այլև՝ որովհետեւ նման կարգախոսները լայն աջակցություն էին գտնում հանրության շրջանում: Զետաբրբիր է, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադն իր երկրում տեղ գտած իրադարձությունները ներկայացնում էր որպես պայքար իսլամականության եւ աշխարհիկ համասարաբանականության միջեւ<sup>4</sup>, չնայած իր դեմ հանդես եկող խմբերից մեկի՝ քրդերի համար այն սոսկ ազգային խնդիր էր:

Այսպիսով՝ արաբական երկրներում ազգային, դավանաբանական եւ այլ խտրականությունների ու մշակութային անհամապատասխանությունների պատճառով է, որ հուզումների ընթացքում առաջադեմ ժողովրդավարական սկզբունքների հետ համեմված՝ մեծ տարածում գտան նեոիսլամական տրամադրությունները, հակադիր դավանանքների միջեւ հակամարտությունը եւ այլն: Զարկ է նկատել, որ վերջին ամիսներին Թունիսում, Եգիպտոսում, Մարոկկոյում, Զուլեյթում անցկացված խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տոնեցին հենց իսլամիստները<sup>5</sup>: Իսկ Սիրիայում, Եմենում, Իրաքում ներքաղաքական ճգնաժամ

2 Տես, օրինակ՝ Каддафи пообещал биться до смерти, 22 02 2011,

<http://ru.euronews.com/2011/02/22/defiant-gaddafi-vows-to-stay-on/>:

3 Ливийские повстанцы построят государство на основе законов ислама, 13 09 2011,

<http://www.utro.ru/news/2011/09/13/998098.shtml>.

4 Башар Асад грозит Западу “землетрясением”, 30 октября 2011,

[http://www.bbc.co.uk/russian/international/2011/10/111030\\_assad\\_west\\_warning.shtml](http://www.bbc.co.uk/russian/international/2011/10/111030_assad_west_warning.shtml)

5 Официальные результаты выборов подтвердили победу исламистов в Тунисе, 25 октября

2011, [http://ria.ru/arab\\_tn/20111025/470829824.html](http://ria.ru/arab_tn/20111025/470829824.html), Muslim Brotherhood tops Egyptian poll result.

Aljazeera, January 22, 2012, <http://www.aljazeera.com/news/middleeast/2012/01/201212112595858>

0264.html, Подцероб А. Б., Марокко: исламисты во власти, 2 февраля 2012, <http://www.iimes.ru/rus/>

frame\_stat.html, Сапронова М. А., Выборы в парламент Кувейта: очередная победа исламистов в

арабском регионе, 9 февраля 2012, <http://www.iimes.ru/rus/stat/2012/09-02-12a.htm>.



մի հիմքում զգալի տեղ գրաված եւ տարբեր խմբերի միջեւ ծավալված էթնոդավանաբանական հակամարտությունը շարունակում է խլել բազում մարդկային կյանքեր (սույն հիմքով՝ չնայած Բահրեյնում տեղ գտած բախումները մնացել են անցյալում, սակայն հետեւանքները դեռ երկար են իրենց մասին հիշեցնելու):

Ուշադրություն դարձնելով արաբական շատ երկրներում իշխանությունն իրենց ձեռքում կենտրոնացրած կլանների կառավարման սկզբունքներին, պետք է արձանագրել, որ գրեթե ամբողջությամբ իրենց սպառած այդ ընտանիքները տարիներ ի վեր իշխում էին միայն ուժային լծակներին տիրապետելու եւ ավանդույթի ուժով պահպանվող հեղինակության միջոցով: Ընդ որում՝ միջազգային հանրության շրջանում XX դարում երկարատեւ իշխած ամբողջատիրական եւ ավտորիտար ղեկավարների շուրջ ձեւավորված բացասական կերպարների խորապատկերին արաբական վարչախմբերի գլուխ կանգնած ղեկավարների կառավարման տեւականությունը<sup>6</sup> գնալով վանող դեր էր սկսել կատարել նաեւ արաբական հասարակությունում: Կարելի է կարծել, որ կառավարողների իշխանության երկարակեցությունը սկսել էր գիտակցվել որպես առաջադիմության, նորարարության, բարեկեցության ու իրավունակության դեմ կառուցված հիմնարար մի պատնեշ, որի հաղթահարումը դառնում էր հանրային ու մասնավոր շահերի ապահովման գլխավոր գրավականը: Ի դեպ, արաբական մի քանի երկրներում (Քուվեյթ, Չորդանան եւ այլն) իշխող կլանների կողմից իրենց իրավունքները «մոռացության մատնելու» փաստից դժգոհելով՝ վարչախմբերի դեմ հանդես էին գալիս նաեւ շատ բեղունական վերնախավեր ու ցեղային առաջնորդներ:

Նշված բոլոր նախադրյալները կապված են Զյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր Արեւելքի երկրներում տարիներ շարունակ օբյեկտիվորեն ձեւավորված իրողությունների հետ: Դեռ դրանց ուղղակի ազդեցությամբ էր, որ դժգոհ զանգվածների գործողությունները «դոմինոյի էֆեկտի» միջոցով մի կետից սկսեցին տարածվել ողջ արաբական աշխարհով մեկ՝ ընդգրկելով նորանոր բողոքավոր խմբերի: Սակայն բազմաթիվ հասարակական-քաղաքական շրջանակներ տարածաշրջանում ձեւավորված նշված օբյեկտիվ իրողություններից զատ կամ դրան զուգահեռ՝ մշտապես խոսել են տեղի ունեցող վերափոխումների գործում սուբյեկտիվ միջամտության մասին: Ըստ այդ պնդումների, արաբական երկրներում տեղ գտած իրադարձություններն Արեւմուտքի աշխարհաքաղաքական շահերն ու ծրագրերն առաջ մղելու միջոց էին: «Դավադրությունների տեսության» կողմնակիցներն, այսպիսով, գտնում են, որ Արեւմուտքի մտադրությունների կենսագործման ճանապարհին մեր կողմից արդեն նշված օբյեկտիվ նախադրյալներն ընդամենը օժանդակ դերակատարություն են ունեցել<sup>7</sup>:

6 Թունիսի նախագահ Բեն Ալի իշխանության ղեկին էր 23 տարի, Եգիպտոսի նախագահ Զուսի Մուբարաքը՝ 30 տարի, Լիբիայի առաջնորդ Մուամար Զադաֆին՝ 42 տարի, Եմենի նախագահ Ալի Աբդուլլահ Սալեիը՝ 32 տարի:

7 Տե՛ս, օրինակ՝ Դրամы целых народов мало волнуют западных планировщиков, говорит в интервью «ГА» заведующий кафедрой иранистики ЕГУ профессор Гарник АСАТРЯН, Общественно-политическая газета «Голос Армении», 04 02 2012, <http://golosarmenii.am/ru/20223/world/16416/>, Глобальные трансформации. Часть первая. Оценка мирового протестного феномена (Юрий Баранчик (Белоруссия), Эсен Усубалиев (Кыргызстан), Ойбек Махмудов (Узбекистан) и др.), 19 02 2012, <http://www.imperiya.by/authorsanalytics19-11940.html> եւ այլն:

Ի դեպ, նման կարծիքի ձեւավորման ու տարածման վրա կոնկրետ ազդեցություն են գործել տեղի ունեցող զարգացումների մասին բուն գործընթացների մեջ ներգրավված երկրների ավտորիտար ղեկավարների ու վերնախավերի արտահայտած մտքերն ու հիմնավորումները: Բոլորին են հայտնի Մուամար Զադաֆիի տարբեր առիթներով ասված խոսքերն առ այն, որ Լիբիայում ծավալվող գործողությունների հետեւում կանգնած են եղել ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան կամ այլ օտար ուժեր ու երկրներ: Իսկ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հայտարարությունների համաձայն՝ իր երկրում տեղ գտած անկարգությունների արմատները տանում են Արեւմուտք: Ըստ նրա, Սիրիան առերեսվել է մեծ դավադրության, քանի որ անկարգությունները հրահրվել են արտասահմանից<sup>8</sup>:

Եթե ավտորիտար կառավարմամբ արաբական վարչախմբերի համար օտար ուժերի կազմակերպած «դավադիր գործողություններին» անդրադառնալը սեփական իշխանությանն օրինակարգություն հաղորդելուն եւ արաբական հասարակության շրջանում դեպքերի իրական նախադրյալները կոծկելուն միտված մի փրկօղակ կարելի է համարել, ապա այլ շարժառիթներ են ընկած արաբական աշխարհի հարեւան պետությունների ղեկավարների գնահատականներում: Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի բարձրագույն ղեկավարության արտահայտած մտքերը մատնում են այդ երկրների շահագրգռությունն «Արաբական գարնան» արդյունքում ստեղծված

Նոր իրավիճակը սեփական պետական շահերին ծառայեցնելու գործում: Սակայն, ի տարբերություն թուրքական ու իրանական հարձակողական տրամադրությունների, պաշտոնական Մոսկվայի համար արաբական երկրներում կատարվածի մեկնաբանությունն ամբողջովին ինքնապաշտպանական բնույթի էր եւ նպատակ ուներ չեզոքացնելու սեփական վարչախմբի ավտորիտար կառավարման բերած անհարմարություններն ու հետագայում Ռուսաստանում «արաբական» նույնատիպ վտանգների տարածումը: Ուստի Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի մեկնաբանությունը լիովին համահունչ էր Զադաֆիի կամ Ասադի «դավադրական» մտքերին՝ «Նայեք այն իրավիճակին, որ հաստատվել է Երեւանում Արեւելքում ու արաբական աշխարհում... Պետք է ճշմարտության աչքերի մեջ նայել: Նման սցենար նրանք նախկինում մեզ համար էին պատրաստել, իսկ հիմա նրանք առավել եւս կփորձեն այն իրագործել: Բոլոր դեպքերում այդ սցենարը չի անցնի: Բայց այնտեղ կատարվող ամեն ինչ ուղղակի ազդեցություն կթողնի մեր իրավիճակի վրա...»<sup>9</sup>:

Ի տարբերություն Ռուսաստանի նախագահի արտահայտած այս մտքերի, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը՝ 2011թ. սեպտեմբերին ժամանելով Կահիրե եւ «Արաբական գարնան» գլխավոր նշանաբան դարձած Թահիրը հրապարակի շնքերից մեկում ելույթ ունենալով Արաբական պետությունների լիգայի ԱԳ նախարարների ու եզիպտացիների առջեւ, տարածաշրջանի բոլոր երկրներին կոչ արեց իրականացնել բարեփոխումներ եւ առաջին հերթին արդարություն ու ժողովրդավարություն պահանջող ժողովուրդներին հստակ պա-

8 Сирийский лидер обнаружил доказательства теории заговора, 30 03 2011, <http://kommersant.ru/doc/1611579>.

9 Дмитрий Медведев провёл во Владикавказе заседание Национального антитеррористического комитета, 22 02 2011, <http://kremlin.ru/news/10408>:

տասխան տալ: «Սա այն պահն է, երբ պատմություն է գրվում», - հայտարարեց Երդողանը<sup>10</sup>:

Ինչ խոսք, Երդողանի հայտարարությունն իսկապես արձանագրումն է տեղ գտած այն հեղափոխական զարգացումների, որոնց ականատեսն է միջազգային հանրությունը: Եվ այդ գործընթացներում մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների ճանաչումն ու պաշտպանումը, արդարության գաղափարի վերահիմաստավորումը, ժողովրդավարական շատ սկզբունքների ամրագրումը դարձել են արաբական երկրների պատմության նորագույն շրջանի առանցքային բաղադրատարրերը:

Սակայն Երդողանի խոսքերում նույնքան անթաքույց է նոր աշխարհաբաղա-բական իրավիճակից շագանակներ կորզելու՝ թուրքական վերնախավի մղումը: Մի ռազմավարական ցանկություն, որի կենսակոչման համար վերջին տասնամ-յակում վերելքի ուղին բռնած Թուրքիայի համար, կարծես թե, ոչ մի խոչընդոտ այլեւս չկա: Ուստի «Արաբական գարուն» ապրած երկրներ այցելելու կապակ-ցությամբ «Time» պարբերականի թղթակիցների իրեն հասցեագրված հարցերին ի պատասխան՝ Թուրքիայի վարչապետը ոչ այնքան մերժեց թուրքական ռազ-մավարական շահագրգռությունների գոյության փաստը, որքան եւս մեկ անգամ հաստատեց նման ծրագրերի առկայությունը. «Ես այնտեղ էի մեկնել ոչ միայն նայելու համար փողոցներում խմբված մարդկանց: Ես գիտակցաբար ձգտում էի շփվել նախագահի թեկնածուների, քաղաքական նոր կուսակցությունների հետ»:

Երդողանի խոսքով՝ հանդիպումների ժամանակ նա ասել է, որ Թուրքիան ժո-ղովրդավարության օրինակելի տիպար է, սոցիալական եւ աշխարհիկ պետութ-յուն է: «Մենք չենք ցանկանում նպատակասլաց կերպով արտահանել մեր վար-չակարգը, մեզ համար միեւնույնն է: Բայց եթե նրանք մեր օգնության կարիքն ունեն, մենք նրանց ցույց կտանք ամենայն անհրաժեշտ օգնությունը»<sup>11</sup>: Ի դեպ, հատկապես Եգիպտոսի կառավարման համակարգի կապակցությամբ ասված այս խոսքերն իրենց գործնական դրսևորումն են ստացել արաբական նաեւ այլ երկրների դեպքում: Այսպես՝ Սիրիայում տեղի ունեցող գործողություններին Թուրքիայի բացահայտ մասնակցության եւ, հատկապես, «Մուսուլման եղբայր-ներ» կազմակերպությանը օժանդակելու ու սեփական շահերին ծառայեցնելու մասին փաստերը հանրահայտ են: Անգամ Թունիսի «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության հիմնած «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունն ուղղակի պատճենում է Թուրքիայի իշխող եւ Երդողանի գլխավորած կուսակ-ցության<sup>12</sup>:

Արաբական երկրներում տեղ գտած զարգացումների մեկնաբանության հար-ցում սեփական շահերի սպասարկման համար իր պետական կառավարման ձե-լի առավելությունները ցույց տալու նույն այդ տրամաբանությունն է ընկած նաեւ պաշտոնական Թեհրանի հայտնած արձագանքում: Համաձայն Իրանի հոգեւոր

10 Фабио Скуто, Анкара начала кампанию в ООН в поддержку Палестины, «La Repubblica», 14 сентября 2011, <http://www.inopressa.ru/article/14Sep2011/repubblica/ankara.html>:

11 Эксклюзивное интервью с Тайипом Эрдоганом, премьер-министром Турции, «Time», 27 сентября 2011, <http://www.inopressa.ru/article/27Sep2011/time/erdogan.html>:

12 «Մուսուլման եղբայրները» քաղաքական կուսակցություն է ստեղծել Լիբիայում, 04 03 2012, [http://www.1in.am/arm/world\\_wmiddleeast\\_64409.html](http://www.1in.am/arm/world_wmiddleeast_64409.html):

առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեյի՝ արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձություններն «խլամական զարթոնքի» նախանշան են, իսկ ժողովրդական հուզումները հիշեցնում են Իրանի 1979թ. իսլամական հեղափոխությունը<sup>13</sup>: Յարկ Է Նկատել, սակայն, որ Մեծ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձություններին նման բացատրություն տալով՝ Իրանի բարձրագույն ղեկավարությունը հետապնդում էր ոչ այնքան նյութական շահ, որքան իսլամական աշխարհում գաղափարական առաջամարտիկի դափնիներն իր վրա կենտրոնացնելու նպատակ: Ըստ այդմ՝ նա դրանով հնարավորություն կստանար հեշտացնել սեփական աշխարհայացքի տարածումն արաբական աշխարհում ու չեզոքացնել իր արեւելյան սահմաններին գոյություն ունեցող թշնամական պատնեշները:

Տարածաշրջանային ուժերի (Ռուսաստան, Թուրքիա, Իրան) ակնհայտ ներգրավվածությունն արաբական աշխարհում տեղ գտնող զարգացումներում ինքնին վկայում է Մերձավոր Արեւելքի Եւ Յյուսիսային Աֆրիկայի սոցիալ-քաղաքական վերափոխումների գործում սուբյեկտիվ միջամտության առկայության մասին: Բոլոր ժամանակներում մեծ տերություններն իրենց քաղաքական ու տնտեսական շահերին են ծառայեցրել այլ պետությունների լարված ու ցնցումային ներքին իրավիճակները: Ուստի ակնհայտ է, որ արաբական գործընթացներում իրենց շահերն առաջ մղելու համար լուռ դաշինքի մեջ մտնելով «հրաբխի նման ժայթքած» տեղի հասարակությունների հետ, անշուշտ որոշակի նպատակներ (աշխարհաքաղաքական, տնտեսական եւ այլն) են հետապնդել (հետապնդում) նաեւ Արեւմտյան տերությունները: Սակայն դեպքերի ծավալման բուն փուլում բնականոն ներգրավվածությունը դեռեւս հիմնավոր ապացույց չէ «Արաբական գարնան» հետեւում տեսնելու Արեւմուտքի դավադիր ձեռքը: Իսկ ծրագրավորման ու կազմակերպման հարցերում չներկայացնելով հիմնավոր ոչ մի ապացույց եւ հիմնվել բացառապես տեսական ու տրամաբանական գիտելիքի եւ մեթոդաբանության վրա՝ որքան էլ գայթակղիչ լինի, սակայն անընդունելի պետք է համարել այն ծայրահեղ սուբյեկտիվիզմը, որ կա «դավադրության տեսության» կողմնակիցների հրապարակումներում:

«Արաբական գարնան» առաջացման նախադրյալների վերը կատարված քննությունը բերում է այն համոզման, որ արաբական երկրներում դեռեւս 2011թ. սկզբին ծագած զանգվածային բողոքի դրսեւորումները տասնամյակների ընթացքում եւ առավելեւս՝ վերջին տարիներին այս հասարակությունում կուտակված որոշակի հասարակական պահանջների ու խնդիրների անտեսման հետեւանքն են: Պահանջներ ու խնդիրներ, որոնք բաժին ընկան հետգաղութային շրջանի արաբական Նոր սերունդը ներկայացնող հասարակությանը: Վերջինս, ի տարբերություն ավագ սերնդի, ով իր ուսերին կրեց եվրոպական մետրոպոլիտներից ազատագրվելու դժվարությունները եւ ում համար առաջնային էին ազգային-ազատագրական շարժումներն ու ժամանակի ոգուն հարիր հասարակական լայն համերաշխության բերող գաղափարները (առավելապես մարքսիզմի, սոցիալիզմի կամ «կոմունիստական հասարակարգի» ընձեռած եւ արաբական վերածնակերպումներ ստացած (տեղայնացված) հավասարության, եղբայրության, առաջնորդի վրա հիմնված հայրենասիրության եւ այլ գաղափարներ), իր

13 Хаменеи: в арабских странах происходит “исламское пробуждение”, 04 02 2011, [http://www.svobodanews.ru/archive/ru\\_news\\_zone/20110204/17/17.html?id=2297314](http://www.svobodanews.ru/archive/ru_news_zone/20110204/17/17.html?id=2297314):

մեջ ձեւավորել ու բյուրեղացրել էր առավել լայն իրավունքների եւ ազատությունների վրա հիմնված պահանջներ: Ներքուստ ձեւավորված այդ հասարակությունում տեղ չունեին ոչ միայն ժառանգաբար կամ տասնամյակներ իշխող «ժողովրդի հայրերը», այլև անգամ նոր խարիզմատիկ առաջնորդները, իսկ իրենք արաբներն արդեն ոչ թե սովորական հպատակներ էին իրենց առաջնորդների ձեռքում, այլ պահանջատեր քաղաքացիներ, որոնց հնարավոր չէր այլևս խաբել ազգայնական ու ազգային-ազատագրական թեզերով: Ըստ էության՝ «Արաբական գարնան» ողջ գործընթացը խորհրդանշում էր արաբ նոր քաղաքացու ծնունդը: Վերջինս մաս էր կազմելու նոր՝ քաղաքացիական, հասարակությանը՝ իր բազմաթիվ ու տարաբնույթ իրավունքների, ազատությունների, արտոնությունների եւ երաշխիքների պահանջով:

«Արաբական հեղափոխությունների» ողջ գործընթացը որոշակի զուգահեռներ ունի համաշխարհային հասարակական-քաղաքական ընդհանուր վերափոխումների գործընթացի հետ: Սակայն այսօր դեռևս դժվար է ընդհանրական գնահատական տալ սոցիալ-քաղաքական համանման երեւույթներին: Մասնավորապես խոսքը «Արաբական գարնան» ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների եւ, այսպես կոչված, «նարնջագույն հեղափոխությունների», Եվրոպայում ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո տարբեր քաղաքներում սկիզբ առած բողոքի զանգվածային ցույցերի, ԱՄՆ-ում ծավալվող «Գրավիր Ուոլ Սթրիթը» շարժման, Երեւանում, Թեհրանում, Միոսկոյում, Մոսկվայում եւ այլ մայրաքաղաքներում հետընտրական զանգվածային ցույցերի միջեւ եղած ընդհանրական կապերի մասին է: Բայց կարելի է ենթադրել, որ այդ հարցի պատասխանը սարերի ետեւում չէ եւ համաշխարհայնացվող աշխարհում երբեւէ կտրվեն նաեւ զուգահեռ ընթացող այդ զարգացումների գնահատականները:

**САРО САРОЯН**

**“Арабская весна”: между старым и новым**

Статья посвящена разъяснению предпосылок происходящих в недавнем прошлом революционных событий на Ближнем Востоке и в Северной Африке. Одновременно сделана попытка обобщить реакцию оказавшихся в фокусе этих событий отдельных арабских стран, а также лидеров отдельных держав, которые стали оценкой “Арабской весны”. В статье автор попытался взаимно связать и упорядочить основные предпосылки. По сему, предпосылки содействующие расползанию событий в своей основе имели краткосрочные и долгосрочные сигналы, которые в начале 2011 г. привели к проявлениям массовых протестов в арабских странах. В обществах, представляющих новое поколение постколониальных времен, вследствие пренебрежительного отношения к определенным общественным требованиям и задачам накопленного в течении десятилетий и тем более в последние годы, родился новый арабский гражданин, который с требованием своих многочисленных и разнообразных прав, свобод, привилегий и гарантий, провозгласил начало новой эры.

**SARO SAROYAN**

**The “Arab Spring”: Between the Old and the New**

The article elucidates the underlying conditions of the recent revolutionary events that swept across the Middle East and North Africa. It takes a broad view of the reflections—emanating from various leaders of each country that faced rebellion—constituting an assessment of the “Arab Spring.” Saroyan tries to connect and classify the primary conditions of each 2011 mass uprising in the Arab world by both their short-term and long-term signals. The neglect of certain social demands and concerns among postcolonial generations of Arabs, accumulated over decades, has finally given birth to a new Arab citizen—who through a claim for numerous rights, liberties, privileges, and guarantees has become a herald of the new era.

## Հայաստանյան պահպանողականները եւ Նեոլիբերալիզմի հաղթանակը

### ՎԱՐԴԱՆ ԶԱԼՈՅԱՆ

*Արվեստի քննադատ, Արվեստի քննադատների միջազգային ընկերակցության անդամ: Դասավանդում է սշակութաբանություն, մամուլում հանդես է գալիս քաղաքագիտական վերլուծություններով: Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի շրջանավարտ է:*

Ութսունականների վերջում խորհրդային Միության ինտելեկտուալ հերոսների մեջ առաջին տեղերը զբաղեցնում էին ֆոն Հայեկը, Միլտոն Ֆրիդմանը, քաղաքական հերոսների մեջ՝ Ռեյգանը, Թետչերը եւ... Ավգուստո Պինոչետը: «Պերեստրոյկայի» տարիներին տնտեսական խնդիրների մասին գրող խորհրդային հեղինակները ամենաշատը հենց նրանց էին հիշատակում: Նեոլիբերալիզմը, թվում էր, միակ այլընտրանքն է ամբողջատիրական սոցիալիզմին, իսկ Նեոլիբերալ դեդատումները՝ ամբողջատիրական սոցիալիզմից ձերբազատվելու միակ ուղին: Այստեղից էլ՝ համընդհանուր համոզվածությունը, որ տնտեսական բարեփոխումները պետք է անցկացնել «շոկային թերապիայի» մոդելով, որքան արագ, այնքան՝ լավ<sup>1</sup>:

Բայց այդ բարեփոխումները, որոնք, փաստորեն, դեկավարում էին արեւմտյան խորհրդականները, ցանկալի արդյունք չտվեցին: Արեւմտյան խորհրդականները կուրորեն հավատում էին ազատ շուկայի եւ մասնավոր ձեռնարկատիրության «հրաշագործ» ուժին, որը պայմանավորված էր նրանց երկրներում պահպանողական հակաթատիստական շարժումների քաղաքական եւ գաղափարական հաղթանակով: Այդ խորհուրդները հանգում էին նրան, որ հարկավոր է վերացնել կարգավորման ցանկացած գործիքները, առավելագույն արագ մասնավորեցնել պետական գույքը, կայունացնել ֆինանսները, սահմանափակել պետական կառավարումը եւ պետական միջամտությունը: Ենթադրվում էր, որ այս դեդատումների կատարումն ինքնաբերաբար պետք է ստեղծեին ազատ շուկա եւ հետխորհրդային երկրները տանեին բարգավաճման ճանապարհով:

Ինչպես գրում է հայտնի տնտեսագետ Ջ.Թոբինը. «Իրենց այդ էյֆորիայում արեւմտյան խորհրդականները շատ հաճախ մոռանում էին, որ տնտեսական հաղթանակը համակարգերի մրցակցության տարիներին նվաճվել է ոչ թե գաղափարական ազատ շուկայի զուտ ռեժիմում, այլ «խառը տնտեսության» շնորհիվ,

<sup>1</sup> «Շոկային թերապիայի» տեսության ծագման պատմությունը եւ նրա հետեւանքները, մասնավորապես հետխորհրդային երկրներում, լուսաբանված է Նաոմի Զլայնի հայտնի գրքում. Naomi Klein, *The Shock Doctrine: The Rise of Disaster Capitalism*. Allen Lane: London and New York, 2007, 558 pp

*որտեղ պետությունը խաղացել է էական, եթե ոչ վճռորոշ դեր: Նրանք նաեւ անտեսում էին, որ այն շատ օրենքների, ինստիտուտների և սովորույթների բարդ կառուցվածքը, որը դարերով ձեւավորվել է կապիտալիստական երկրներում, կազմում է ժամանակակից շուկայական համակարգի հիմքը»<sup>2</sup>:*

Թվում էր՝ բարեփոխումների փաստական տապալումը նշանակում էր, որ նեոլիբերալիզմի ճակատագիրը հետխորհրդային տարածքում վճռված է, և ընտրությունը պետք է լինի «խառը տնտեսությունը»: Սակայն 2002թ. Հայաստանում նկատվում է նեոլիբերալիստական գաղափարների և նեոլիբերալ քաղաքականության «բուռն» վերադարձ, որի սկիզբը պայմանականորեն կարելի է համարել դպրոցների «օպտիմալացումը»: Ինչհի հասարակությունը հիմնականում անտարբեր մնաց այդ երեւոյթի հանդեպ՝ ի տարբերություն, ասենք, Ռուսաստանի կամ Ուկրաինայի: Կիրորձենք բացատրությունը գտնել հայաստանյան պահպանողականության հայացքներում, նրա ձեւավորման ընթացքի և վերնախավի առանձնահատկություններում:

Նեոլիբերալիզմը՝ իբրեւ մոնետարիզմի տեսություն, նկարագրում է ազատ, չկարգավորվող շուկայի գործունեությունը և որպէս դեղատոմս առաջարկում է չսահմանափակել ու առավելագույնը պարզեւատրել տնտեսական դաշտի առավել եռանդուն մասնակիցներին: Խորհրդային Միությունում և, մասնավորապէս, խորհրդային Հայաստանում «տնտեսապէս ավելի եռանդուն», այսինքն՝ ավելի ընչաքաղց, եսասեր ու նախահարձակ էր քրեական հակումներ ունեցող խավը: Սա միանգամայն այլ իրադրություն է, քան այն, որը նկարագրված է Մաքս Վեբերի «Բողոքական էթիկայում»: Եթե բողոքականների տնտեսական եռանդը կրոնական մոտիվներ ուներ և բարոյական բնույթի էր՝ սոցիալական է, ապա Հայաստանում այն հիմնվում է ապասոցիալական մոտիվների վրա: Հետեւաբար, նեոլիբերալ քաղաքականության պայմաններում հենց ապասոցիալական տարրերը պետք է լինեին շահող կողմը և, ի վերջո, դառնային իշխող ուժ՝ հանձին Հանրապետական կուսակցության: Պատճառը հարկավոր է փնտրել 90-ականների ձեւավորված տնտեսական և սոցիալական հանրակարգերում:

Տնտեսական ազատականացման սկիզբը առավել քան ոգեւորիչ էր. օգտվելով ընձեռնված հնարավորությունից, հայաստանցիները հազարավոր փոքր ձեռնարկություններ ու կոոպերատիվներ ստեղծեցին ե՛ւ երկրում, ե՛ւ ԱՊՀ տարածքում: Թվում էր՝ տնտեսական այս առողջ մոտիվացիան պետք է հանգեցներ երկրի աննախադեպ ծաղկմանը: Սոցիոլոգիական հարցումները ցույց էին տալիս, որ Հայաստանի բնակչությունը ողջ ԱՊՀ տարածքում առավել նպաստավոր կարծիք ուներ ժողովրդավարության և տնտեսական ազատականացման մասին: Առանց այս տրամադրվածության անհասկանալի է, թե ինչու ՀՀԾ-ն այդ տարիներին ուներ բացարձակ հեղինակություն:

80-ականների վերջին և 90-ականներին ձեւավորված իրադրությունը Հայաստանում հաճախ բնութագրում են իբրեւ «հեղափոխություն», և հայաստանյան հեղափոխությունն անվանվեց «մաթեմատիկոսների հեղափոխություն», իսկ դա նշանակում է, որ ե՛ւ հասարակությունը, ե՛ւ նրա քաղաքական առաջնորդները կողմ էին ռացիոնալիստական մոտեցումներին: Այս «կոզնատիվ սիմֆոնիան»

2 Дж. ТОБИН. Вызовы и возможности /Реформы глазами американских и российских ученых, М., 1997. с 74



կարող էր տնտեսական հրաշքներ գործել, բայց չգործեց: Դրա համար կային օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառներն ակնհայտ են՝ պատերազմը և շրջափակումը: Եվ ոչ միայն այն պատճառով, որ դրանք դարձան տնտեսական քայքայման հիմնական շարժառիթները (իսկ Հայաստանում տնտեսական անկումն ամենամեծն էր հետխորհրդային տարածքում), այլ գլխավորապես այն պատճառով, որ պայմանավորեցին տնտեսության ու սոցիալական ոլորտների ինստիտուցիոնալ բեկումը: Հետպատերազմական Գերմանիան, Ճապոնիան և այլ երկրներ ավելի մեծ ավերածություն և տնտեսական քայքայում ապրեցին, քան Հայաստանը, սակայն կարողացան այնպիսի տպավորիչ հաջողության հասնել, որը կարելի է միայն «տնտեսական հրաշք» անվանել: Հայաստանում անկումը ոչ թե տնտեսական ու սոցիալական ոլորտում էր, այլ՝ հոգիներում:

Հայաստանում 90-ականների կախարդական բառը «կոոպերատիվ» էր: Այն խորհրդանշում էր դեպի ապահով ու երջանիկ կյանք տանող ճանապարհը: «Կոոպերացիա»՝ նշանակում է համագործակցություն և համերաշխություն: Կոոպերատիվը հիմնված էր ընկերության և բարեկամության սոցիալական ինստիտուտի վրա, որը գոյություն ունի, եթե համերաշխությունն առանցքային արժեք է հասարակությունում:

Առաջին օբյեկտիվ գործոնի՝ պատերազմի հիմնական ազդեցությունն այն էր, որ հասարակության մեջ արժեւորվեց բռնության միջոցով հաջողությունն ձեռք բերելը: Երկրորդ գործոնի՝ շրջափակման պատճառով սոցիալ-տնտեսականի վատթարացումը հանգեցրեց անհատական էգոիզմի աճին, որի խորհրդանիշ բառը «բցելն» էր: Փոխվեց նաեւ տնտեսական գործունեության հիմնական ձեւը. «կոոպերատիվ» խորհրդանշական հասկացությանը փոխարինեց «սոկոսը»՝ «սոկոսով փող տալը», ծաղկեցին ֆինանսական բուրգերը, որոնք հաճախ ստեղծվում էին... ստեղծագործական մտավորականության կողմից:

«Տոկոսով փող տալու» տարիներին ձեւավորվեց ժամանակակից Հայաստանի բիզնես վերնախավի զգալի մասը, այդ տարիներին ձեւավորվեցին տնտեսական «խաղի կանոնները», մասնավորապես գերշահույթը որպես Նորմա դիտարկելը, սպեկուլյատիվ կապիտալին գերապատվություն տալը և այլն: Եթե բոլորն «իրար պարտք են», ապա ինչպե՞ս ետ ստանալ գումարը. միայն բռնության կամ բռնության սպառնալիքի միջոցով: «Գոյատեւման պայքարում» կարող էին գոյատեւել միայն քրեական հակում ունեցող դաժան և ուլտրաէգոիստ անհատները: Այս խաղի կանոններով կարող էին ձեւավորվել միայն նեոավատատիրական տիպի տնտեսական, սոցիալական, ապաեւ քաղաքական հարաբերություններ: Բայց նաեւ ձեւավորվեցին պատկերացումներ, որոնք պարարտ հող դարձան նեոլիբերալիզմի վերադարձի համար, որի սկզբունքները եւս համահունչ են սոցիալ-դարվինականության «գոյատեւման պայքարի» գաղափարին:

Եթե ընդհանուր հայտարարի բերենք, ապա տնտեսական վերնախավի ու իշխանությունների տնտեսական հիմնական մոտիվը դարձավ ռենտայի փնտրտուքը: Հայաստանյան օլիգարխը կապիտալիստ չէ, այլ զինված շքախմբով պտտվող միջնադարյան ֆեոդալ, որն իր «օբյեկտներից» «կոռն ու բեգյարը» իր ռենտան է կորզում: Այսպիսով՝ մրցակցային շուկայի ձեւավորման հիմնական պատճառը վերնախավի՝ ռենտա կորզելու վրա կողմսորոշված լինելն է:

Ինչպես ցույց է տվել Ջ.Մոկիրը, արդյունաբերական հեղափոխությունը հնարավոր դարձավ, քանզի այն ստացավ Լուսավորականության հզոր գաղափարական աջակցությունը: Լուսավորականները մասնավորապես սուր քննադատության ենթարկեցին ռենտայի հաշվին ապրող առաջին եւ երկրորդ դասին<sup>3</sup>: Ամփոփ ձեռով ռենտայի քննադատությունն ավարտուն տեղը գտավ Ա.Սմիթի «The Wealth of Nations»՝ «Ազգերի հարստությունը» հանրահայտ աշխատությունում: Ապաարդյունաբերականացումը Հայաստանում վերականգնեց ռենտան իր իրավունքներում:

Կարող է թվալ, որ նեոլիբերալիզմն իր գաղափարական մոտեցումներով՝ ազատության պաշտամունքով եւ այլն, պետք է որ առավել մոտ լիներ անարխիզմին կամ սոցիալիզմին, բայց այն մոտ է «նոր պահպանողականությանը»: Տ. Սարգսյանի հռչակած «պետության վախճանը» կարող է հիշեցնել պետության անհետանալու մասին լեհինյան դրույթը կամ անարխիստական մոտեցումները: Բայց նեոլիբերալիզմի տարբերությունը սոցիալիստներից ու անարխիստներից այնքան մեծ է, որ ականա սկսում ես մտածել, որ ձախ թեւի քաղաքագետները «ազատություն» բառը մեկ իմաստով են օգտագործում, իսկ նեոլիբերալ տնտեսագետները՝ մեկ այլ: Այս երկվությանը սրամիտ բացատրություն է տալիս Բորիս Կագարլիցկին: Նա գրում է. «Ստացվում է այնպես, որ շուկայական ազատությունը լավ է միայն այն պատճառով, որ ազատություն է, իսկ ինչ գործնական հետեւանքների է այն հանգեցնում՝ մտում է ստվերում: Բայց նկատեք, որ ավանդական անգլերենում կա ազատություն հասկացության բաժանում, որը չկա ռուսերենում: Քաղաքական ազատությունը կոչվում է «liberty», իսկ առեւտրի ազատությունը՝ «freedom»: Հայտնի մի դեպք եղավ 18-րդ դարի վերջում, երբ արդեն սկսում էր Ֆրանսիական հեղափոխությունը: Մի անգլիացի վաճառական կառուցեց նավ եւ անվանեց «Liberty», բայց նրա գործակից-ընկերները հրաժարվեցին այդ նավի մեջ ներդրում կատարել, քանի դեռ այն չի վերանվանվել «Freedom»: Նրանք ասացին, որ «liberty»-ին ատելի յակոբինյան գաղափար է եւ կարող է խրտնեցնել հաճախորդներին, իսկ ահա «freedom»-ը՝ որպես առեւտրի ազատություն, լավ է, այն կարող է նպաստել շուկայում հաջողություն ունենալուն: Այս կոնկրետ դիպվածը, ըստ իս, շատ հստակ արտահայտում է քաղաքական-հասարակական ազատության եւ կապիտալի համար ազատության երկվությունը»<sup>4</sup> :

Հայկական պահպանողականությունը ծագել է ուշ միջնադարում եւ իր գաղափարական ձեւավորումն է ստացել Ստեփանոս Օրբելյանի եւ Գրիգոր Տաթևացու աշխատություններում: Այն հիմնավորում էր իսլամ տիրապետողների իշխանությանը հարմարվելու քաղաքականությունը, դատապարտում «անցողիկ» հայկական պետականությունը վերականգնել ձգտող ուժերին, զարգացնում հակաարեւմտամետ գաղափարներ<sup>5</sup>: Հարմարվողական եւ հակապետական դիրքորոշում հայ պահպանողականները որդեգրեցին նաեւ հետագայում:

3 Дж. МОКИР, Меркантилизм, Просвещение и Промышленная революция/ Экономический вестник Ростовского государственного университета 2006 Том 4 ' 1, с. 6

4 Борис Кагарлицкий. "Мы слишком много знаем..." Неoliberalизм как он есть: в мировой политике и российском образовании/ Интервью опубликовано в №3/4 журнала "Скепсис"

5 Ջալոյան Վ., Էջմիածնի կաթողիկոսության հիմնադրման քաղաքական եւ աստվածաբանական հանգամանքները/ «Կրոն եւ հասարակություն» հանդես, հ. 13, էջ 32-68

Հանրապետական կուսակցության գաղափարախոսներից մեկը՝ Ռ.Սաֆրաստյանը, գրում է. «Հայկական պահպանողականությունը ձեւավորվել է ցարական եւ օսմանյան կայսրությունների պայմաններում, այդ պատճառով նպատակ ուներ պահպանելու ազգային գաղափարները եւ, միաժամանակ, ձգտում էր չսրել իր հարաբերություններն իշխանությունների հետ: Այսպիսով՝ հայ պահպանողականները փաստացի դեմ էին այն ուղղուն, որն ընտրել էր հայությունը ազգային-ազատագրական համատեքստում»<sup>6</sup>: Եթե ավելի հստակ արտահայտվենք, նրանց հիմնական մասը, այդ թվում՝ կղերը, պարզապես մատնագրեր էին գրում ազատագրական շարժումների մասնակիցների դեմ<sup>7</sup>:

Հանրապետական կուսակցությունն այսօր պահպանողական գաղափարների հիմնական կրողն է: Այդ կուսակցության մեկ այլ գաղափարախոս՝ Ա.Ենգոյանը, գրում է. «Հայկական հասարակությունում պահպանողական գաղափարախոսության կրողի դերի, որն աջակցություն կունենա երկրի բնակչության մեջ, կարող է հավակնել միայն Հայաստանի Հանրապետական կուսակցությունը: Գաղափարական առումով այն իրեն ներկայացնում է որպես սոցիալապես կողմնորոշված պահպանողականություն /ազգ, անհատ, ընտանիք, սեփականություն, պետություն/: Իսկ քաղաքական առումով իրեն պահում է որպես հայաստանյան կուսակցական համակարգում կենտրոնամետ ուժ: Այդպիսի դիրքորոշումը հատկապես հստակ արտահայտվեց 2007թ. ընտրություններում, երբ այդ կուսակցությունը տոնեց իր բացարձակ հաղթանակը»<sup>8</sup>:

Հայ ժամանակակից պահպանողականները պետականության առկայության պայմաններում, հետեւաբար, չեն կարող դիմել անցյալի ավանդույթին: Դա չի կարող չստեղծել որոշակի գաղափարական վակուում եւ չստիպել դիմելու այլ երկրներում մշակված պահպանողական գաղափարներին: Նրանք ունենին երկու հնարավորություն՝ դիմել կամ ռուսական, կամ ամերիկյան պահպանողականների գաղափարներին, որոնք տեղեկատվական տեսակետից առավել մատչելի են: Ռուսական ժամանակակից պահպանողականությունը սոցիալապես կողմնորոշված է, պաշտպանում է պետականության ամրապնդմանը միտված՝ իշխանությունների ջանքերը եւ, ի վերջո, հակաօլիգարխիկ է: Այս առումով ռուսական պահպանողականության լուրջ ազդեցության մասին խոսել չի կարելի: Այլ է դուրսիցի կամ պանարիկյան տիպի ֆաշիստական գաղափարախոսությունների ազդեցությունը. նրանց ներկայությունն առավել քան ակնառու է:

Ակնառու է նաեւ ամերիկյան նեոպահպանողականության ազդեցությունը: Ինչպես վկայում է Ա.Ենգոյանը, «Սոցիալ-տնտեսական ոլորտում Հանրապետական կուսակցությունն առաջարկում է ստեղծել հավասար պայմաններ Հայաստանի բոլոր աշխատունակ քաղաքացիների համար եւ նրանց տալ ինքնարտահայտվելու հնարավորություն: Ընդ որում՝ շեշտը դրվում է անձնական նախաձեռնության վրա, առանց պետական խնամակալության: Սա, ըստ էության, ժամանակակից նեոկոնսերվատիվ մոտեցումն է սոցիալական խնդիրներին: Երկիրը աղքատութ-

6 Сафрастян Р. Армянский консерватизм в контексте международной консервативной мысли. Доклад в рамках норавакских чтений, предусмотренных учебной программой «Армения и армянство в глобальных развитиях: современное положение и вызовы», 24 октября 2007г. в НОФ «Нораванк».

7 Աշոտ Զովհանիսյան. Նալբանդյանը եւ նրա ժամանակը. Գիրք երկրորդ, Ե., 1956. էջ 18-77

8 [http://www.rau.am/downloads/Vestnik/1\\_08/engoyan.pdf](http://www.rau.am/downloads/Vestnik/1_08/engoyan.pdf)

յունից պետք է դուրս բերեն ոչ թե սոցիալական ծրագրերը, ինչը քարոզում են ձախ լիբերալներն ու սոցիալիստները, այլ իրենք՝ քաղաքացիները, սեփական նախաձեռնության եւ ակտիվության շնորհիվ: Ժամանակակից արեւմտյան պահպանողականների կարծիքով՝ լայն սոցիալական ծրագրերը թուլացնում են քաղաքացիներին, նրանց սովորեցնում «ձրիակերության» ու «ծուլության»:

Ինչպես բոլոր պահպանողական կուսակցությունները, Յանրապետական կուսակցությունը ձգտում է ընդարձակել հասարակական կազմակերպությունների ցանցը, որոնք ժամանակի ընթացքում իրենց վրա կվերցնեն պետության որոշ գործառնությունները, եւ դրանով իսկ սահմանափակել հասարակական կյանքը կանոնակարգելու նրա բնական ձգտումը:

Վերջապես՝ այդ կուսակցությունը հավաստում է իր աջակցությունը ազգային-պահպանողական արժեքներին, որոնք պետք է կյանքի կոչվեն հասարակության հիմնական բջջի՝ ընտանիքի միջոցով: Այդպիսի արժեքներից է Հայ Առաքելական եկեղեցին, որին կուսակցության ծրագիրն անվանում է ազգային ինքնության բաղադրիչ մաս: Կրոնական նորմերի արժեւորումը պահպանողական գաղափարախոսության բնութագրական մոտեցումներից է<sup>9</sup>: Որ Յանրապետական կուսակցությունը գաղափարապես սնվում է ամերիկյան նեոկոնսերվատիզմից, վկայում է նաեւ 2010թ. «Պահպանողական հոսանքներ եւ գաղափարներ» գրքույկի հրատարակման փաստը՝ մի ձեռնարկի, որը հիմնականում լուսաբանում է հենց ամերիկյան նեոկոնսերվատիզմը:

Սա, իհարկե, առաջին հայացքից տարօրինակ է թվում, քանզի հայ պահպանողականներին հատուկ է ընդգծված հակաարեւմտականությունը: Թե ինչու է ամերիկյան նեոկոնսերվատիզմն այդքան դուր եկել հանրապետականներին, միանգամից դժվար է կռահել: Սակայն շատ հավանական է թվում, որ ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Հայաստանում համանման սոցիալ-տնտեսական իրադրություն է ձեւավորվել, ինչը նպաստել է ամերիկյան նեոկոնսերվատիզմ գաղափարների դրական ընկալմանը: Որպես ապացույց կարելի է բերել Օլբանի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Ռիչարդ Լահմանի կարծիքը: Ինչպես նշում է Լահմանը, «Վերջին երեք տասնամյակների ընթացքում ԱՄՆ ազգային կառավարությունը եւ խոշորագույն կորպորացիաներն հայտնվել են օլիգարխների հսկողության տակ: Կորպորատիվ մենեջերները, որ նախկինում կախված էին խոշոր բանկերից, որոնցից նրանք փոխառություններ էին վերցնում, այժմ սովորել են միջոցներ ներգրավել ֆինանսական շուկաներից առանց միջնորդների, ինչը թույլ տվեց զբաղվել սպեկուլյացիաներով, առանց արտաքին սահմանափակումների: Պետական հաստատությունները սկսել են ավելի քիչ, քան երբեւէ, հսկել պատվերների ու սուբսիդիաների բաշխումը: ...Ամերիկյան ժողովուրդն ամենաքիչ ազդեցությունն ունի ազգային քաղաքականության եւ ծախսերի վրա, քան երբեւէ, ազդեցության լծակների կորուստը միաժամանակ եւ պատճառն է, եւ հետեւանքը ազգային կառավարության վրա օլիգարխիկ հսկողության»<sup>10</sup>:

Օլիգարխների նոր բարձրացումն ԱՄՆ-ում, ըստ Լահմանի, կապված էր 70-ականներին շահույթի նորմայի անկման հետ, ինչը խոշոր բիզնեսին ստիպեց փոխել իր քաղաքականությունը: Շահույթի նորմայի բարձրացումը հնարավոր

9 [http://www.rau.am/downloads/Vestnik/1\\_08/engoyan.pdf](http://www.rau.am/downloads/Vestnik/1_08/engoyan.pdf)

10 Ричард Лакманн «Олигархия как причина упадка США»/ <http://www.inop.ru/reading/page122/>

Էր միայն այն դեպքում, եթե իջեցվեին աշխատավարձի բաժնեմասը ծախսերի մեջ եւ հարկային դրույթները: Մյուս կողմից՝ հակապատերազմական շարժումը շատ ուժեղացրեց ամերիկյան ձախերին եւ հավանական դարձրեց ընտրություններում սոցիալիստամետ թեկնածուի հաղթանակը: Այս մտավախությունը բիզնեսին ստիպեց նկատելիորեն առավելություն տալ Հանրապետական կուսակցությանը, խախտել երկու կուսակցությունների ֆինանսավորման հավասարությունը:

Մյուս կարեւոր գործոնը խոշոր բիզնեսի համար նպաստավոր նեոլիբերալ գաղափարներն<sup>11</sup> առաջ տանող վերլուծական տարբեր կենտրոնների, ամսագրերի, թերթերի համակարգի ստեղծումն էր, որի նախատիպը պետք է համարել 1947թ. Հիմնադրված «Մոնտ Պելերին» ընկերությունը: Նրա հիմնադիրներից կարելի է հիշատակել Ֆ. ֆոն Հայեկին, Լյուդվիգ ֆոն Միգեսին, Կ.Պոպերին, Մ.Ֆրիդմանին եւ այլոց: Ընկերությունը ստեղծված էր պայքարելու կենսականության եւ, ընդհանրապես, բոլոր այն տեսությունների դեմ, որոնք կողմ էին տնտեսության մեջ պետության միջամտությանը:

Երկար ժամանակ այն մարզինալացված ուսմունք էր, բայց իրադրությունը հիմնականում փոխվեց Մ.Թեյտչերի եւ Ռ.Ռեյգանի իշխանությունն գալուց հետո: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ Առեւտրի համաշխարհային կազմակերպություն միջոցով նեոլիբերալ քաղաքականությունը տարածվեց ողջ աշխարհում: Նեոլիբերալիզմը դարձավ հիմնական տնտեսական մտածողությունը ողջ աշխարհում<sup>12</sup>:

Կարեւոր դեր խաղաց նաեւ տնտեսագիտության ասպարեզում Նոբելյան մրցանակի ստեղծումը, որի նախաձեռնողը «Մոնտ Պելերին» ընկերության անդամ, Շվեդիայի պետական բանկի աշխատակից Էրիկ Լոււդեբերգն էր: Սկսած 70-ականներից այդ ընկերության 8 անդամներ ստացան Նոբելյան մրցանակ<sup>13</sup>, ինչը նկատելիորեն բարձրացրեց նեոլիբերալ տնտեսական տեսության վարկանիշը: Այս ամենը նեոլիբերալիզմը վերածեց անվիճարկելի, հեգեմոնիստական գաղափարախոսության<sup>14</sup>:

Ռեյգանի ժամանակ ԱՄՆ-ում, ինչպես Ելցինի եւ Պուտինի ժամանակ Ռուսաստանում, Ռ.Զոչարյանի եւ Ս.Սարգսյանի ժամանակ Հայաստանում, առաջացավ

11 Համեմատության համար. 60-ականներին ստեղծվել է 5 նեոլիբերալ «ուղեղային կենտրոն», իսկ 70-ականներին՝ 18, 80-ականներին՝ 30, եւ 90-ականներին՝ 23: Սկսած 80-ականներից հատկապես ուշադրություն է դարձվում նեոլիբերալ գաղափարների տարածմանը Լատինական Ամերիկայում եւ Հեռավոր Արեւելքում, իսկ 90-ականներից՝ հետսոցիալիստական աշխարհին: Այդպիսի կենտրոնի օրինակ Հայաստանում կարող է ծառայել «Նորավաթը», որը, սակայն, երբեմն ներկայացնում է նեոլիբերալիզմից տարբերվող մոտեցումներ:

12 Նեոլիբերալիզմի գաղափարների տարածման պատմությունը լավագույնս է ներկայացված Դեվիդ Հարվիի մոտ. Дэвид Харви. Краткая история неоллиберализма. Актуальное прочтение. М. Поколение, 2007г.

13 Հայեկ /1974/, Ֆրիդման /1976/, Ջորջ Ջ. Սոխզեր /1982/, Բյուկենեն /1986/, Մորիս Ալլե /1988/, Ռոնալդ Կոուլ /1991/, Բեկկեր /1992/, Վերնոն Լ. Սմիթ /2002/: Այժմ, իհարկե ավելի շատ Նոբելյան ստանում են «ինստիտուցիոնալիստները», կամ նեոլիբերալիզմի այնպիսի քննադատներ, ինչպիսիք է Սոխզիցն է կամ Ամաթիա Սենը:

14 *Дитер Плевэ и Бернхард Вальген. Между сетевой структурой и комплексной организацией. от неоллиберальных знаний к неоллиберальной гегемонии.*

[http://www.intelros.ru/pdf/Prognosis/1\(20\)\\_2010/6.pdf](http://www.intelros.ru/pdf/Prognosis/1(20)_2010/6.pdf)

փոխըմբռնում քաղաքական եւ օլիգարխիական վերնախավի մեջ՝ «օլիգարխիական պայմանագիր»։ Իշխանությունները չեն խանգարում օլիգարխներին ստանալ գերշահույթներ, իսկ վերջիններս նրանց աջակցում են քաղաքական միջոցառումներում, ինչը հնարավորություն է տալիս վերընտրվելու։

Նեոլիբերալ եւ ազգային-պահպանողական գաղափարների սինթեզի կապակցված շարադրանքը կարելի է գտնել գործող վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ։ Առավել ամբողջական այն ներկայացված է «Պետության վախճանը» գրության մեջ, որը հրատարակվել է «Նորավանք» կենտրոնում<sup>15</sup>։ Հեղինակն իր նեոլիբերալ անարխիստական երանգով հետեւությունները հիմնավորում է հիմնականում Դանիել Բելլի հետինդուստրիալ հասարակության մոդելի միջոցով։ Նրա կողմից հղում է արվում սոցիալական այդ փիլիսոփայի հետեւյալ սահմանման վրա. «*Հետինդուստրիալ հասարակությունը սահմանվում է որպես այնպիսի հասարակություն, որի տնտեսությունում ապրանքների նյութական արտադրությունից գերակայությունն անցել է ծառայությունների արտադրությանը, հետազոտությունների իրականացմանը, կրթական համակարգի կազմակերպմանը եւ կյանքի որակի բարձրացմանը, իսկ տեխնիկական մասնագետների դասը դարձել է հիմնական մասնագիտական խումբը եւ, որ ամենակարեւորն է, նորարարությունների ներդրումը... առավել կախման մեջ է տեսական գիտելիքների ձեռքբերումներից... Հետինդուստրիալ հասարակությունը... ենթադրում է նոր դասակարգի ծագում, որի ներկայացուցիչները քաղաքական մակարդակում հանդես են գալիս որպես խորհրդատուներ, փորձագետներ կամ տեխնոկրատներ*»<sup>16</sup>։ Այս սահմանման մեջ կա որոշակի ենթատեքստ, որի վերհանումը լույս պետք է սփռի արդի հայաստանի տեխնոկրատ նեոլիբերալների հայացքների վրա։

Դ.Բելլի հիմնական աշխատությունը պետք է համարել «Կապիտալիզմի մշակութային հակասությունները» /1969/, որին մեջբերում է ևսեւ Տ.Սարգսյանը<sup>17</sup>։ Դանիել Բելլի քննադատության հիմնական թիրախը պետք է համարել համընդհանուր բարեկեցության պետությունը /ՅԲԴ/։ Ըստ նրա, ՅԲԴ-ն ծնում է ուժեղ, որոնք, եթե չվերահսկվեն, կարող են կործանել կապիտալիստական կարգերը. «...բարձրագույն կրթության տարածումը եւ ավելի հանգիստ սոցիալական միջավայրի ստեղծումը ընդարձակեց սոցիալական դիսկրեացիոն վարքի հնարավորությունը»<sup>18</sup>։ Արդյունքում հայտնվում են համեստ տվյալներով երիտասարդներ, որոնք հավակնում են անսահմանափակ հնարավորությունների եւ մասնակցության։ «Ավանդական դասակարգային կառուցվածքի տրոհմանը զուգահեռ, ավելի ու ավելի մեծ քանակությամբ անհատներ ցանկանում են նույնացվել ոչ թե իրենց մասնագիտական մարքսիստական իմաստով բազիսի, այլ իրենց մշակութային ճաշակների եւ կենսակերպի հետ»<sup>19</sup>։ Դրա հետեւանքով ձեւավորվում է «պայթարի մշակույթ» կոչված երեւույթը, որն ուղղված է ընդդեմ կապիտալիզմի պարտադրած սահմանափակումների։ Երիտասարդների զգալի մասը սկսում է

15 “21-րդ դար”, թիվ 1 (19), 2008թ.,

16 Bell D., Notes on the Post industrial Society. The public Interest, 1967, N7. p. 102

17 Белл Д. Культурные противоречия капитализма. Фрагменты книги. // Этическая мысль. Научно-публицистические чтения. – М., 1990.

18 Դիսկրեացիոն վարքը այն է, երբ մարդը իր եկամուտը ծախսում է ոչ թե անհրաժեշտ ապրանքների, այլ սեփական ընտրությամբ իր ոճը զարգացնելու համար։

19 Նույն տեղում

ձգտել ազատության եւ ինքնադրսեւորման, պահանջում արմատական փոփոխություններ: Այս իրավիճակը, ըստ նրա, ստեղծել է կենսական սոցիալական մոդելը, որ շեշտադրում է սոցիալական ապահովությունը եւ վերաբաշխումը: Սոցիալական ապահովության տարածման շնորհիվ այն ստեղծել է անշահախնդիր մարդկանց բանակ եւ այդ պատճառով հարկավոր է վերադառնալ անհատապաշտական տնտեսական ռացիոնալության սկզբունքներին: Սեփական կյանքի ոճի իրավունք պետք է ունենան միայն նրանք, ովքեր դրա համար բավարար միջոցներ ունեն:

Համանման գաղափարներ արտահայտեցին Մ.Կրոզին, Ս.Հանթինգտոնը եւ Ջ.Վատանուկին իրենց հայտնի «Դեմոկրատիայի ճգնաժամը» գեկույցում<sup>20</sup>: Նրանք եւս համարում էին, որ Արեւմուտքի հարաբերական հարստությունը ստեղծել են գործող կարգի դեմ քննադատաբար տրամադրված «արժեքային առումով կողմնորոշված ինտելեկտուալներ», ովքեր պայթարում են: Նրանք եզրակացնում են, որ «ժողովրդավարական գործընթացի զարգացումը վերջին տարիներին հանգեցրել է սոցիալական հսկողության ավանդական միջոցների տրոհմանը, քաղաքական այլ իշխանության ձեւերի ապալեգիտիմացմանը եւ չափազանցված պահանջների առաջադրմանը կառավարություններին, որոնք դրանք կատարել չեն կարող»: Բայց նրանք նշում էին նաեւ կապիտալիզմի համար նպաստավոր տեղաշարժեր. տեխնոկրատական եւ քաղաքական կողմնորոշված ինտելեկտուալների թվի աճ, որին, իհարկե, պատկանում է նաեւ Տ.Սարգսյանը: Մ.Կրոզին, Ս.Հանթինգտոնը եւ Ջ.Վատանուկին նկատի ունեն հենց այն «հետինդուստրիալ» վերնախավին, որի գալուստն ազդարարում է Դ.Բելլը: Ս.Հանթինգտոնը հիմնական խնդիր էր համարում ժողովրդավարության նույնացումը սոցիալական հավասարության գաղափարի հետ, հատկապես՝ ցամաքային Եվրոպայում: Լուծումը կարող է լինել տնտեսության անկախացումը ժողովրդավարական, մասնավորապես ընտրական գործընթացից:

Դ.Բելլի գաղափարն այն էր, որ ժողովրդավարական գործընթացի խորացումը կհանգեցնի սոցիալիզմի եւ այդ պատճառով հարկավոր է հավասարակշռություն գտնել տնտեսական միջոցների եւ քաղաքական ձգտումների միջեւ: «Դեմոկրատիայի ճգնաժամի» հեղինակները կարծում էին, որ դրա համար տնտեսությունը պետք է դուրս բերվի խորհրդարանի եւ կառավարության իրավասությունից: Այսպիսով՝ «պայթարողներից» ազատվելու հիմնական միջոցը դառնում է տնտեսական ճնշումը. կարգապահությունը վերադառնում է, երբ մարդիկ կրկին սովորում են ապրել ըստ միջոցների: Պետության հակակշիռը դառնում է «քաղաքացիական հասարակությունը», որը պայթարում է պետության պարտադրող հոգատարության դեմ:

1990թ. Դանիել Բելլը գրում է «Մոդեռնի եւ մոդեռնիզմի հակասությունների լուծումը» աշխատությունը, որտեղ իր տեսության լույսով ամփոփում է անցած երկու տասնամյակների զարգացումը<sup>21</sup>: Պահպանողական մտածողը մոդեռնիզմի հակասությունների լուծման դեղատոմս համարում է հետմոդեռնիստական

20 Ավելի մանրամասն՝ Кис ван дер Пийль. Локковская Европа? // Журнал "Прогнозис", Номер 2 (6). Лето 2006, с. 102-128

21 BELL D. Resolving the contradiction of modernity and modernism // Society. - N.Y., 1990. -Vol.27, N 3. - P.43-50; № 4. - P.66-75.



մշակույթը: Ըստ նրա, եթե մոդեռնիզմին հատուկ էր անցյալի հետ խզումը, ապա հետմոդեռնիզմի մշակույթը՝ հիմնվելով լիբերալիզմի վրա, մերժում է կոշտ անհատապաշտությունը եւ վերածնունդ է անցյալի ավանդույթները: Հետմոդեռնիզմի էթիկան ընդգծում է ոչ այնքան մարդու իրավունքների հավասարությունը, որքան պարտականությունների հավասարությունը, հատկապես այն հանրության ամօքը, որին անհատը պատկանում է: Ավարտին նա լավատեսորեն եզրակացնում է, որ լիբերալիզմը կարող է դառնալ ոչ միայն ապագայի մշակույթը, այլ նաեւ անցյալի վերադարձը:

Տ.Սարգսյանը գրում է. «Պետությունը, արդի ընկալմամբ, քաղաքական իշխանության ինստիտուտ է: Վերջինս էլ, իր հերթին, անընդհատ բարդացող աշխարհում կորցնում է որոշումներ կայացնելու իր ունակությունը՝ մարդու ակտիվ գործունեության ավելի ու ավելի շատ ոլորտներում: Ավելին՝ փոփոխությունները կտրուկ արագանում են, որի արդյունքում էլ բյուրոկրատական ապարատի շրջանակներում պետության կայացրած որոշումները շատ հաճախ անիմաստ են դառնում նույնիսկ մինչեւ դրանց ուժի մեջ մտնելը՝ ապացուցելով տեխնոլոգիական զարգացման սլագքին համապատասխանելու անկարողությունը»: Այս պարբերությունը կարող է հիշեցնել Միշել Կրոզիեի «համեստ պետության» տեսությունը, որի մասին հայտնի սոցիոլոգ Ա.Տուրբենը ասել է. «Կրոզիեի հայեցակարգը սոցիալական եվզենիկայի ծրագիր է: «Բյուրոկրատական երեւույթի» հեղինակի գաղափարները համահունչ են սոցիալ-դարվինիստների՝ ուժեղագույնի գոյատեւման տեսությանը: Վայ նրանց, ովքեր բավականաչափ ուժեղ չեն, բավականաչափ սառնասիրտ չեն, բավականաչափ հաշվենկատ չեն, որպեսզի կենսամահու պայքար մղեն»<sup>22</sup>: Հայաստանում նաեւ դաժան:

Տ.Սարգսյանը իր հոդվածը գրել է 2007թ., երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամն արդեն սկսել էր: Այս առումով ավելի քան տարօրինակ են թվում նրա հետագա դատողությունները: Շարունակելով՝ հեղինակը պնդում է. «Կառավարման քվազիպետական ինստիտուտների հետինդուստրիալ տեսակի ցայտուն օրինակ են արժեթղթերի շուկաների կարգավորման հանձնաժողովները, կենտրոնական բանկերը, հակամրցակցային հանձնաժողովները, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովները եւ այլն: Այս ինստիտուտները չեն համապատասխանում իշխանության մասին հին պատկերացումներին եւ, սա սկզբունքորեն կարելի է, իշխանության մաս չեն, բայց ունեն արագ կարգավորման, միջամտելու եւ կոնֆլիկտային իրավիճակների լուծման լիազորություններ: Այսպիսով՝ մենք տեսնում ենք իշխանության ձեւի եւ բովանդակության մասին ավանդական պատկերացումների հետ ակնհայտ հակասություն: Դրա հետ մեկտեղ, ֆինանսական շուկաները կարգավորող ինստիտուտների տարանջատումը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

1. *Իշխանությունների՝ նեղ մասնագիտական ոլորտներում պրոֆեսիոնալ որոշումներ կայացնելու անկարողությունը,*
2. *որոշումներն արագ կայացնելու անհրաժեշտությունը, քանի որ իրարությունը ֆինանսական շուկաներում շատ արագ է փոխվում,*
3. *քաղաքական փուլերից կախվածության մեջ չլինելու պահանջը, քանի որ ֆինանսական շուկաները շատ զգայուն են քաղաքական փոփոխությունների*

22 Сунт СПИРИДОНОВА В.И. Бюрократия и реформа (анализ концепции М.Крозье). – М., 1997



նկատմամբ, եւ միջնորդավորված կարգավորումը կարող է հանգեցնել անկառավարելի, ճգնաժամային, ֆինանսական հոսքերի նորմալ շարժը ձեւախեղող իրավիճակների,

4. շուկայի մասնակիցների վստահությունը որոշումներ կայացնող պրոֆեսիոնալների հանդեպ,

5. թափանցիկության եւ կորպորատիվության նոր կանոնները, որոնց կիրառումը, հաճախ հակասում է բյուրոկրատական ապարատի կառույցի տրամաբանությանը:

*Քվազիդատական, քվազիօրենսդրական եւ քվազիգործադիր գործառույթներ ունեցող ինստիտուտների ստեղծման պահից պետության ինդուստրիալ կարգին արդեն նետված էր առաջին մարտահրավերը»:*

Առաջին եզրակացությունը, որին կարելի է հանգել այս հատվածից, այն է, որ ֆինանսական շուկաները չեն ցանկանում ենթարկվել պետությանը, չեն ցանկանում ծառայել հասարակական շահերին, ցանկանում են ծառայել սեփական շահին, եթե նույնիսկ այն կործանելու է ե՛լ հասարակությունը, ե՛լ իրենց, ինչպես դատեսանք վերջին ճգնաժամի ժամանակ: Այստեղից էլ նրանց ձգտումը՝ խուսափել ընդհանուր քաղաքացիական նորմաներից եւ ստեղծել սեփական քվազիդատական, քվազիօրենսդրական եւ քվազիգործադիր իշխանություններ, որոնք անկախ կլինեն քաղաքական իշխանություններից:

Ճգնաժամից հետո կառավարությունները եւ փորձագետները այլ կերպ են նայում ազատականացված ֆինանսական շուկաներին: Հայտնի տնտեսական մեկնաբան Մարտին Վուլֆը գրում է. «Այն, ինչ կատարվում էր վարկային շուկաներում, այժմ իսկական հարված է դարձել գործարքների վրա կողմնորոշված ֆինանսական կապիտալիզմի անզու-սաքսոնական մոդելին»: ԱՄՆ-ի Ֆեդերալ պահուստային համակարգի նախկին ղեկավար Փոլ Վոլթերը ավելի կտրուկ է. «Փայլուն նոր ֆինանսական համակարգն իր բոլոր տաղանդավոր մասնակիցներով չանցավ շուկայի ստուգարքը»<sup>23</sup>: Թվում է, թե ֆինանսական, իսկ ապա տնտեսական ճգնաժամը, որից ամենաշատ տուժածներից էր Հայաստանը, պետք է ստիպեր փոխել կառավարության նեոլիբերալ քաղաքականությունը, պակաս վստահել «ֆինանսական շուկայի պրոֆեսիոնալներին», շարժվել դեպի ավելի կարգավորվող տնտեսություն, ուժեղացնել պետության դերը ֆինանսական ապարեզում: Բայց նույնիսկ գյուղատնտեսական ճգնաժամը, անզուպելի դարձած գևաճը չկարողացան փոխել կառավարության վարած նեոլիբերալ քաղաքականությունը, որը միտված է ֆինանսալիզացիային<sup>24</sup>:

23 Сум Роберт Уэйд. Мертв ли глобализационный консенсус?

[www.intelros.ru/readroom/prognosis/-34-19-2009/7920-mertv-li-globalizacionnyj-konsensus.html](http://www.intelros.ru/readroom/prognosis/-34-19-2009/7920-mertv-li-globalizacionnyj-konsensus.html)

24 Ֆինանսների հայտնի մասնագետ Վիլեմ Բոյտերը գրում է. «...գոյություն ունի փաստարկ, թե ինչու չկա որեւէ հիմք փոխանցել ինստիտուցիոնալ քաղաքականությանը մասնավոր ձեռքերին. քանի որ նրանք չեն կարող լինել ապահով առանց ներդրումների երաշխավորման եւ/կամ առանց «վերջին ատյանի վարկավորողի» միջոցների, որոնք, ի վերջո, երաշխավորում են հարկատուները...Այն փաստարկը, որ ֆինանսական միջնորդավորումը չի կարելի վստահել մասնավոր հատվածին, այժմ կարող է տարածվել նոր, ֆինանսական գործողությունների վրա կողմնորոշված եւ կապիտալի շուկայի վրա հիմնված ֆինանսական կապիտալիզմին: ... Տնտեսության ֆինանսալիզացիայից դեպի ֆինանսների սոցիալականացում: Փոքրիկ քայլ օրենսդիրների համար՝ հսկայական քայլ մարդկության համար»:/ Лео Панич и Мартин Конингс. Миф о неолиберальном дерегулировании/ Журнал “Прогнозис”, Номер 2 (18), Лето 2009. с. 236:

Տ.Սարգսյանը պետության վախճանի մեկ այլ փաստարկ է բերում գլոբալացումը. «Երկրորդ հայեցակետը, որով պայմանավորված՝ աստիճանաբար երեւան է գալիս բյուրոկրատական պետության վերացման հարցը, անշուշտ, գլոբալացումն է: ...Գլոբալացման այս՝ միանգամայն նոր փուլը բավարար մտավոր ներուժ ունեցող մարդուն բացառիկ հնարավորություններ է ընձեռում, քանի որ այդպիսի անհատի համար վերանում են սահմանները: Աշխարհագրական տարածքը կորցնում է իր նախնական նշանակությունը: Հետինդուստրիալ աշխարհն ապագանգվածայնացնում է զանգվածային հասարակությունը»: Համաշխարհային ճգնաժամն այս տեսակետը եւս հարցականի տակ է դնում: Ինչպես գրում է Ռոբերտ Ուեյդը. «Կարճ ասած, ճգնաժամի պատճառով շատ վերլուծաբաններ եւ քաղաքական գործիչներ՝ նախկինում համաձայնվելով չկարգավորվող ֆինանսական մոդելի հետ, այժմ պատրաստ են կասկածի տակ դնելու այն: Ֆինանսների ապակարգավորման նկատմամբ կասկածը մեզ ստիպում է ավելի թերահավատ լինել եւ գլոբալացման մյուս վկայությունների նկատմամբ»<sup>25</sup>:

Ինչ է առաջարկում Տիգրան Սարգսյանը պետության եւ սոցիալականության փոխարեն. ազգայնականություն եւ Հայ Առաքելական եկեղեցի՝ «Հայկական աշխարհ»: Ահա նրա ներկայացրած առաջարկը.

*«Հայկական աշխարհ»*

*Հետինդուստրիալ աշխարհում նոր փիլիսոփայությանը եւ գոյաբանությանը համահունչ՝ մենք պետք է նախեւառաջ արդիականացնենք մեր մրցակցային առավելություններն ինքնակազմակերպման ցանցային ձևերում: Մենք հնարավորություն ունենք չմտալ պատմության եզրագծից անդին, այլ ստեղծել նոր ցանցային քաղաքակրթություն՝ «Հայկական աշխարհ»: Վերը նշված վարկածի եւ մեթոդաբանության տեսանկյունից հայությունը կարելի է դիտարկել որպես ազգային ցանց:*

*Պատմությունը վկայում է, որ պետականության կորստից հետո հայերն աշխարհին ցույց տվեցին ինքնակազմակերպման այլընտրանքային ձև, որը նրա գոյությունը՝ որպես ազգ, ապահովեց մինչեւ օրս: Այդ գործառույթն իրականացնում էր եկեղեցին: Ընդ որում՝ կազմակերպման մեթոդները եւ ձևերը, որոնք կիրառում էր եկեղեցին, համապատասխանում էին ցանցային տրամաբանությանը*<sup>26</sup>:

*Կազմակերպման պետական ձևը ինդուստրիալ հասարակությունում մեզ անհրաժեշտ էր աշխարհում ինքնակազմակերպվելու, այլ ազգերի հետ արդյունավետորեն համագոյակցելու (հավասարը հավասարների մեջ) համար՝ ինդուստրիալ աշխարհի տրամաբանության՝ մրցակցության եւ զարգացման պայմաններում»:*

25 Сун Роберт Уэйд. Мертв ли глобализационный консенсус?

[www.intelros.ru/readroom/prognosis/-34-19-2009/7920-mertv-li-globalizacionnyj-konsensus.html](http://www.intelros.ru/readroom/prognosis/-34-19-2009/7920-mertv-li-globalizacionnyj-konsensus.html)

26 Ինչ ցանցային տրամաբանության մասին է ակնարկում Տ.Սարգսյանը: Հայտնի է, որ ուշ միջնադարում Հայ առաքելական եկեղեցին չուներ կրթական կամ մշակութային գործառույթ, իսկ կրոնականը հասցված էր նվազագույնի: Էջմիածինը, փաստորեն, կատարում էր համազգային բանկի դեր: Օրինակ՝ խոջան ինչ-որ գումար էր հանձնում վանքին, մուրիակ վերցնում, իսկ Չմյուռնիայում գումարը ետ էր ստանում: Հենց այդ պատճառով էլ Չմյուռնիան անմիջականորեն էր ենթարկվում Էջմիածնի կաթոլիկոսությանը: Իհարկե, ժամանակ առ ժամանակ «Հայկական աշխարհի» այս համակարգում ֆինանսական ճգնաժամեր էին ծագում, որի հետեւանքով, օրինակ, Երուսաղեմի վանքերը կարող էին գրավադրվել, քանզի Պոլսում մուրիակները չէին մարվել:

Հայաստանում պահպանողական գաղափարախոսությունը եւ նեոլիբերալ քաղաքականությունը գերիշխող դեր են կատարում մեր հասարակությունում: Առավել ուշագրավ է հայ պահպանողականների որոշ մասի դիրքորոշումը պետության եւ գլոբալացման երեւոյթների նկատմամբ: Մենք փորձեցինք ցույց տալ այդ մտայնության գաղափարախոսական արմատները, ինչը թույլ կտա ավելի փաստարկված քննարկել պահպանողականության եւ նեոլիբերալիզմի հայկական տարատեսակը:

---

## **ВАРДАН ДЖАЛОЯН**

### **Армянские консерваторы и победа неолиберализма**

В статье анализируется рецепция неолиберальных и неоконсервативных идей в Армении. В частности там отмечатся, что в начале 90-х в Армении проводились реформы по рецептам неолиберальной “шоковой терапии”, которые провалились, как и во многих постсоветских странах. Казалось, это приведет к исчезновению как неолиберальной экономической политики, так и идеологии неоконсерватизма в целом: Однако, начиная с 2002 года, Армения начало следовать “Вашингтонскому консенсусу”, а правящая партия взяла на вооружении идеи американского неоконсерватизма. В частности, было создано центр “Нораванк” для изучения и развития этих идей на армянской почве. Особенного внимания удостоился идеи американского неоконсерватора Д. Белла о “постиндустриальном обществе”, которое пропагандирует премьер-министр Т. Саркисян. На основе этой теории он попытался создать теорию “Армянского мира” и приложил усилия для распространения этой идеи.

## **VARDAN JALOYAN**

### **Armenian Neocons and the Victory of Neoliberalism**

The paper analyzes the reception of neoliberal and neoconservative ideas in Armenia. It notes that economic reforms in the early 1990s, carried out according to the recipes of neoliberal “shock therapy,” failed in Armenia as they did in many other post-soviet countries. Yet instead of moving on from neoliberal economics, Armenia since 2002 has been following the “Washington Consensus,” with the ruling party having adopted the concepts of American neoconservatism. The “Noravank” center was set up specifically for the purpose of exploring the prospects of these approaches in Armenian politics. Special attention was paid to American neoconservative Daniel Bell’s theories of the “postindustrial society,” widely promoted by Armenian prime minister Tigran Sargsyan. Based on this theory, he tried to develop and spread the concept of the “Armenian World.”

## Մեծ տերության ճգնաժամը. պատճառներ եւ հետեւանքներ

### ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ

*Մասնագիտությամբ իրավագետ է: Գիտական պարբերականներում եւ մամուլում հանդես է գալիս միջազգային իրավունքի տարբեր դիտանկյուններին առնչվող հոդվածներով:*

### Չեղարկությունների ամփոփագիր

Ռուսաստանը ԽՍՀՄ-ից ժառանգել է մեծ տերության կարգավիճակ: Մեծապետականությունը երկրի բարձրագույն ղեկավարության հեղինակության պատմականորեն ձեւավորված նախադրյալն է եւ ռուսաստանցիների մեծամասնության՝ պետական իշխանության չարաշահման դրսեւորումների հանդեպ լոյալ վերաբերմունքի գրավականը: Երկրի եւ արդարադատության կամային կառավարում, ժողովրդավարական հաստատությունների շինծու գործելակերպ եւ կեղծ ֆեդերալիզմ. սրանք ժամանակակից Ռուսաստանի քաղաքական համակարգի հիմնական առանձնահատկություններն են: Ռուսաստանում սեփականության համակարգի բարեփոխման ընթացքում երկրի բարձրագույն ղեկավարության կողմից քաղաքացիներին մոլորեցնելը հանգեցրեց կառավարող քրեաօլիգարխիկ դասի ձեւավորմանը: Նման իրավիճակը բացառում է ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանությունների փոփոխության հնարավորությունը: Օլիգարխիկ տնտեսության պայմաններում արտադրությունում բացակայում է Նորարարությունների ներդրման եւ աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանման մղումը: Իշխող դասի անձնական շահագրգռվածությունը մատակարար օլիգարխիկ կապիտալին թույլ է տալիս իր շահույթը հիմնականում ձեւավորել անբարեխիղճ մրցակցության, հարկերից խուսափելու եւ կոռուպցիայի միջոցով: Արդյունքում ֆինանսական հարստությունը կուտակվում է ոչ մեծ թվով անձանց ձեռքում, տնտեսությունը գործում է անարդյունավետ, հասարակությունում բացակայում է սոցիալական ներդաշնակությունը, իսկ պետությունը չունի բավականաչափ միջոցներ իր երկրի ռազմական ներուժի պահպանման համար:

Ռուսաստանի՝ մեծ տերության կարգավիճակի վերջնական կորստի խնդիրը եւ վերջինիս հետ կապված օլիգարխիկ սեփականության ազգայնացման հարցը Վլադիմիր Պուտինին երրորդ անգամ ստիպեցին առաջադրել իր թեկնածությունը երկրի նախագահի պաշտոնում: Պուտինի քաղաքական ծրագրից հետեւում է, որ Ռուսաստանի ռազմական ներուժը վերականգնելու համար ինքը մտադիր

Ե օլիգարխիկ կապիտալի ֆինանսական միջոցներն ուղղել դեպի ռազմարդյունաբերական համալիր: Ռուս ժողովրդի զգալի մասը, սակայն, ի դեմս Պուտինի՝ այլեւս չի տեսնում անբասիր ազգային առաջնորդի, ով նվիրված է մեծ տերության շահերին: Չնայած իշխանությունների կողմից հետապնդումների ենթարկվելու վտանգին՝ շատերը սկսեցին բացահայտորեն արտահայտել իրենց բողոքն ընդդեմ «Միացյալ Ռուսաստան» կուսակցության եւ նրա նախագահի: Զաղաքացիական «Ջանուն արդար ընտրությունների» բողոքի շարժումը դարձավ Ռուսաստանում քաղաքական ցնցումների նոր ժամանակաշրջանի ավետաբերը:

Ռուսաստանում իշխանության ճգնաժամի պատճառները ձեւավորվել են դեռեւս ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում: 1985թ. ԽՍՀՄ ռազմավարական պաշտպանությունն ի վիճակի չէրավ երկրի միջուկային ուժերը պաշտպանել Եվրոպայում ցամաքային տեղակայման միջին հեռավորության ամերիկյան հրթիռների կանխող հարվածից: ԱՄՆ-ի կողմից այս դասի հրթիռների ոչնչացմանը հասնելու նպատակով ԽՍՀՄ-ը ստիպված եղավ հրաժարվել Գերմանիայի դեմոկրատական հանրապետության եւ Արեւելաեվրոպական երկրների նկատմամբ ռազմաքաղաքական վերահսկողությունից: Այդ աշխարհաքաղաքական պարտությունը հանգեցրեց երկրի քաղաքական վերնախավի գաղափարական միասնության փլուզմանը եւ միութենական հանրապետությունների՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալուն:

Քաղաքական նոր վերնախավը հրաժարվեց Ռուսաստանի՝ մեծ տերության կարգավիճակի պահպանման պայքարից: Չինաթափման գործընթացն արդեն քսան տարի է, ինչ Ռուսաստանի արտաքին քաղաքականության սպասարկման գլխավոր միջոցն է: Ռուսաստանի ռազմավարական միջուկային ուժերն այլեւս ընդունակ չեն կատարելու միջուկային զսպամիջոցի գործառույթը: Ռուսաստանի ռազմական ներուժի անկումը նրա ռազմավարական միջուկային ուժերը խոցելի դարձրեց ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի կանխող հարվածի նկատմամբ: Մեծ տերության կարգավիճակի վերջնական կորուստը լուրջ հարված է ռուս ժողովրդի ազգային ինքնասիրությանը, որն ընդունակ է առաջ բերել ռուսական գերագի խոր ճգնաժամ եւ դաշնային պետության քայքայում: Ռուսաստանը մոտեցել է այն սահմանին, որից հետո նա կամ պետք է կարողանա վերականգնել իր ռազմական ներուժը, կամ ստիպված կլինի վերապրելու մի նոր տրոհում:

### **Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ-ի աշխարհաքաղաքական պարտությունը**

Երկրորդ համաշխարհային պատերազմը հիմնավորապես փոխեց աշխարհաքաղաքական քարտեզի պատկերը: Այս պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ը եւ ԱՄՆ-ը շախախուռմից փրկեցին Մեծ Բրիտանիան, ազատագրեցին Ֆրանսիան եւ Եվրոպական մյուս երկրները, որոնք օկուպացված էին ֆաշիստական Գերմանիայի կողմից: Այս պատերազմում, սակայն, իրական հաղթողը դարձավ ԱՄՆ-ը, որը դրա արդյունքում միջազգային ասպարեզում առաջատար դիրքեր գրավեց քաղաքական, ռազմական, տնտեսական եւ ֆինանսական ոլորտներում: ԽՍՀՄ-ի ողջ հետպատերազմյան պատմությունը պայքար էր երկրորդ մեծ տե-

րության կարգավիճակը պահպանելու եւ ԱՄՆ-ի համաշխարհային առաջատարության դիրքերին հակազդելու համար: Յետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջեւ համագործակցությունը եւ մրցակցությունն այդ ժամանակաշրջանի գլխավոր բնորոշող գծերն էին: Երկու գերտերությունների քաղաքական եզակի փոխհամագործակցության շնորհիվ եվրոպական պետությունների գաղութային տիրապետության համակարգը վերացվեց, եւ ձեւավորվեցին նորանկախ պետությունների արտաքին եւ ներքին քաղաքականությունը համադասող հիմնական միջազգային կառույցները: Ընդ որում, երկու գերտերությունների մրցակցությունը մեկ անգամ չէ, որ աշխարհը կանգնեցրել է երրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման վտանգի առջեւ:

Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակը ներքաղաքական առումով որակապես տարբեր դեր խաղաց ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի համար: ԱՄՆ-ի համար այս հաղթանակը կառավարության հաջողությունն էր, որը հանրության աչքում պետական իշխանության վարկանիշը բարձրացրեց մի նոր որակական մակարդակի: ԽՍՀՄ-ի պարագայում սա ազգի հերոսական հաղթանակն էր պատերազմի սկզբում կառավարության աղետալի ձախողումից հետո: Մինչպատերազմյան ժամանակաշրջանում ինքնակալական ղեկավարման ձեւ հաստատելու համար Ստալինի պայքարն այնքան էր իջեցրել պետական կառավարման գործունակությունը, որ ֆաշիստական Գերմանիայի հարվածի կասեցումը հաջողվեց միայն հսկայական մարդկային եւ նյութական միջոցների կորստի գնով: Ֆաշիստական Գերմանիայի անձնատուր լինելուց հետո Արեւելյան Եվրոպայի երկրների նկատմամբ ԽՍՀՄ-ի ռազմաքաղաքական վերահսկողության հաստատումը Ստալինի համար ամբողջատիրական վարչակարգի վարկանիշի պահպանման անվերապահորեն անհրաժեշտ քաղաքական գործիք էր: Խորհրդային ժողովրդի կողմից ռազմի դաշտում ձեռք բերված մեծ տերության կարգավիճակը հոգեբանական փոխհատուցում էր հանրությանը Ստալինյան քաղաքականության հասցրած կորուստների եւ 20 միլիոն մարդկային կյանքի դիմաց: ԽՍՀՄ-ի գործողություններն իր կողմից նացիստներից ազատագրված երկրների նկատմամբ, ըստ Էռլայան, հենվում էին ուժի գործոնի վրա եւ հակասում միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին: ԽՍՀՄ-ի հրաժարումը՝ օկուպացիայից ազատել պատերազմի ժամանակ խորհրդային զորքերի կողմից գրավված տարածքները եւ տեղի բնակչությանը տրամադրել քաղաքական անկախություն, նախկին դաշնակիցների միջեւ սառը պատերազմ հրահրեց:

ԱՄՆ-ը երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտեց միջուկային զենքին եւ աշխարհում ամենամեծ ռազմածովային ու ռազմաօդային ուժերին տիրացած: ԱՄՆ-ի տնտեսությունն արտադրում էր համաշխարհային համախառն արտադրանքի 50 տոկոսը, իսկ ֆինանսական համակարգը կուտակել էր ոսկու համաշխարհային պաշարների երկու երրորդը (1): 1944թ. կնքված Բրետտոն-Վուդայան համաձայնագիրն ԱՄՆ-ի ազգային արժույթը դարձրեց միջազգային առևտրային գործարքների հիմնական գործիքներից մեկը, իսկ 1947թ. առաջ քաշված Եվրոպական երկրների տնտեսական օգնության տրամադրման ծրագիրը՝ «Մարշալի ծրագիրը», դրեց Եվրոպայում ԱՄՆ-ի քաղաքական գերիշխանության հիմքերը: 1945թ. ՄԱԿ-ի հիմնադրումը եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի ընդունումը վերջ դրեց եվրոպական գաղութային կայսրություններին:

Այսպիսով՝ Մեծ Բրիտանիան՝ ԱՄՆ-ի գլխավոր պատմական մրցակիցը, կորցրեց իր առաջատար դիրքերը համաշխարհային քաղաքականության և միջազգային առեւտրի ասպարեզում:

ԽՍՀՄ-ի նկատմամբ ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական գերազանցությունը վերջինիս հնարավորություն տվեց ընդհուպ մինչեւ 70-ական թթ. կեսերը լինել միջուկային զենքի մշակման և արտադրության բնագավառի առաջատարը:

**Աղյուսակ 1: Միջուկային ռազմավարական լիցքերի քանակը (ակտիվ և պահուստային) (2)**

Տարիներ	1947	1952	1957	1962	1967	1972	1977	1982	1987	1989	1992	2002	2010
ԱՄՆ	32	1005	6444	26000	31000	27000	25000	23000	23500	22200	12000	10600	8500
ԽՍՀՄ/Ռուսաստան		50	660	4000	8300	15000	25000	34000	38000	35000	25000	16000	11000

60-ականների վերջին ԽՍՀՄ-ը միջուկային զենքի արդյունաբերական արտադրության հնարավորություններով հավասարվեց ԱՄՆ-ին, և երկու կողմի համար էլ ակնհայտ դարձավ միջուկային պաշարների հետագա կուտակման իմաստագրությունը: 1969թ. նոյեմբերից ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը բանակցություններ սկսեցին միջուկային սպառազինությունների և նրանց փոխադրամիջոցների կրճատման նպատակով: Միջուկային զինանոցի և ռազմավարական հարձակողական միջոցների կրճատման բանակցությունները շարունակվում են ավելի քան 40 տարի: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի, իսկ 1992թ. հետո ԱՄՆ-ի և Ռուսաստանի՝ որպես ԽՍՀՄ իրավահաջորդի, միջև կնքվել է 8 միջազգային պայմանագիր:

Միջուկային զենքի կրճատման բանակցությունների մեկնարկը, սակայն, չէր նշանակում սպառազինությունների մրցավազքի ավարտ: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի մրցակցության «ծանրության կենտրոնը» տեղափոխվեց հետախուզության միջոցների, կապի ու գերձզգրիտ սպառազինությունների մշակման և արտադրության ոլորտ: 70-ական թթ. վերջերին ԱՄՆ-ը ԽՍՀՄ-ի նկատմամբ արդեն հասել էր ակնհայտ առավելության տիեզերական տեխնոլոգիաների և հաշվողական տեխնիկայի բնագավառներում: Սա թույլ տվեց ստեղծել ինքնակառավարվող գերձզգրիտ սպառազինությունների որակապես նոր համակարգեր: Եվրոպայում տեղակայված միլիտարային անօդաչու թռչող սարքերը՝ միջին հեռավորության թեւավոր հրթիռներն ԱՄՆ-ին հնարավորություն էին տալիս գերձզգրիտ կանխող հարված հասցնել ԽՍՀՄ-ի ռազմավարական հարձակողական սպառազինություններին: ԽՍՀՄ-ի վաղ նախազգուշացման և հակաօդային պաշտպանության միջոցներն ի վիճակի չէին ժամանակին ճանաչել և դիմակայել այդ թեւավոր հրթիռների զանգվածային հարվածին:

**Աղյուսակ 2: Հինաթափման ոլորտում ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի/Ռուսաստանի միջեւ կնքված պայմանագրեր (3)**

Պայմանագրի անվանումը	Պայմանագրի առարկան	Ստորագրման թվականը	Ուժի մեջ մտնելու թվականը	Գործողության ժամկետը
Ժամանակավոր համաձայնագիր հարձակողական ռազմավարական սպառազինությունների սահմանափակման որոշ միջոցառումների մասին (ՀՄՍ-1)	Բախտիկ հրթիռների եւ արձակման կայանների թվաքանակի երկկողմ սահմանափակում տվյալ պահին գոյություն ունեցող մակարդակի վրա	26 մայիսի 1972թ.	3 հոկտեմբերի 1972թ.	Մինչեւ 1977թ. վերջը
Հակահրթիռային պաշտպանության համակարգերի սահմանափակման մասին	Արձակման կայանների սահմանափակում մինչեւ 100 միավոր	26 մայիսի 1972թ.	3 հոկտեմբերի 1972թ.	Անժամկետ. 2002թ. հուլիսի 13-ին ԱՄՆ-ը դուրս եկավ պայմանագրից
Հարձակողական ռազմավարական սպառազինությունների սահմանափակման մասին (ՀՄՍ-2)	Հարձակողական ռազմավարական սպառազինությունների սահմանափակում մինչեւ 2250 միավոր	18 հունիսի 1979թ.	Իրավական ուժ չստացավ ԱՄՆ-ի Սենատի կողմից չվավերացվելու պատճառով, սակայն կատարվեց ԱՄՆ-ի կողմից	Մինչեւ 1985թ. դեկտեմբերի 31-ը
Միջին եւ փոքր հեռահարության հրթիռների վերացման մասին	500-ից մինչեւ 5500 կմ գործողության հրթիռների վերացում	7 դեկտեմբերի 1987թ.	1988 թ. օգոստոս	Անժամկետ
Հարձակողական սպառազինությունների կրճատման մասին (ՀՄԿ-1)	Ռազմավարական կրիչների կրճատում մինչեւ 1600 միավոր, միջուկային մարտալիցքերի կրճատում մինչեւ 6000 միավոր	31 հուլիսի 1991թ.	5 դեկտեմբերի 1994թ.	5 դեկտեմբերի 2009թ. Կատարվեց 2001թ. դեկտեմբերի 6-ին
Հարձակողական սպառազինությունների հետագա կրճատման մասին (ՀՄԿ-2)	Ռազմավարական կրիչների կրճատում մինչեւ 1600 միավոր, միջուկային մարտալիցքերի կրճատում մինչեւ 3500 միավոր	3 հունվարի 1993թ.	Վավերացվեց ԱՄՆ-ի (1997թ.) եւ Ռուսաստանի (2000 թ.) կողմից, բայց իրավական ուժ չստացավ	2002թ. հուլիսի 14-ին Ռուսաստանը դուրս եկավ պայմանագրից
Ռազմավարական հարձակողական պոտենցիալների կրճատման մասին	Միջուկային մարտալիցքերի կրճատում մինչեւ 2200 միավոր	24 մայիսի 2002թ.	1 հունիսի 2003թ.	5 փետրվարի 2011թ.
Ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման մասին (ՀՄԿ-3)	Ռազմավարական կրիչների կրճատում մինչեւ 800 միավոր, միջուկային մարտալիցքերի կրճատում մինչեւ 1550 միավոր	8 ապրիլի 2010թ.	5 փետրվարի 2011թ.	5 փետրվարի 2021թ.



ԽՍՀՄ-ն այս իրավիճակին արձագանքեց Եվրոպայում իր փոքր ու միջին հեռահարության բալիստիկ հրթիռների տեղաբաշխմամբ եւ 1979թ. Աֆղանստան ներխուժմամբ, որը կարող էր ԱՄՆ-ի համար ծառայել իբրեւ թեւավոր հրթիռների տեղակայման երկրորդ հնարավոր գոտի: Այսպիսով՝ ԽՍՀՄ-ը տեղափակեց ամերիկյան թեւավոր հրթիռների տեղակայումը միայն Արեւմտյան Եվրոպայի սահմաններում եւ երկու կողմերի միջեւ այդ տիպի զինատեսակի վերացմանն ուղղված ապագա բանակցությունների հիմք դրեց: ԱՄՆ-ի թեւավոր հրթիռներին հակազդելու համար մշակվեցին ցածր թռչող թիրախների հայտնաբերման նոր ռադիոտեղակայման կայաններ եւ բազմագործառական գեներալային C-300 համալիրներ: Սակայն 80-ական թթ. կեսերին ԽՍՀՄ ղեկավարությանն ակնհայտ դարձավ, որ անհնար է ստեղծել հակահրթիռային պաշտպանության գործուն համակարգ ու նաեւ այն, որ Արեւելյան Եվրոպայի նկատմամբ ռազմաքաղաքական վերահսկողության պահպանումը դառնում է ավելի ու ավելի վտանգավոր: Խորհրդային զորքերի ներկայությունն Արեւելյան Եվրոպայում ու Գերմանիայում անհրաժեշտ քաղաքական հիմք էր ծառայում Արեւմտյան Եվրոպայում եւ Թուրքիայում միջին հեռավորության ամերիկյան թեւավոր հրթիռների տեղաբաշխման համար: Ցամաքային տեղակայման փոքր ու միջին հեռավորության հրթիռների վերացումը եւ խորհրդային զորքերի դուրսբերումը Եվրոպայից ԽՍՀՄ-ի համար դարձավ դեպքերի այդպիսի ընթացքը կասեցնող միակ միջոցը:

80-ական թթ. կեսերից սկսված լարված բանակցությունների արդյունքում ԽՍՀՄ-ը եւ ԱՄՆ-ը համաձայնության եկան ռազմավարական չորս հարցերի շուրջ.

Առաջին՝ հրաժարում զինված դիմակայությունից, որն իր մեջ ներառում է՝

- Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերում,
- ցամաքային տեղակայման փոքր ու միջին հեռահարության հրթիռների վերացում,
- հարձակողական ռազմավարական սպառազինությունների փուլային կրճատում,
- ցամաքային եւ օդային զորամիավորումների կազմից վերջոյա ռազմանավերից ու սուզանավերից ոչ մարտավարական միջուկային զենքի դուրսբերում, այդ սպառազինությունների ժողովում կենտրոնացված պահեստարաններում եւ ապագայում դրանց վերացում:

Երկրորդ՝ հետպատերազմյան իրավիճակի կարգավորում եւ Եվրոպայի ապա-նազմականացում, որն իր մեջ ներառում է՝

- Եվրոպայում սովորական սպառազինությունների կրճատում,
- Գերմանիայի միավորում,
- Գերմանիայից եւ Արեւելյան Եվրոպայից խորհրդային զորքերի դուրսբերում
- Վարչական պայմանագրի լուծարում,
- Մերձբալթյան հանրապետությունների եւ Մոլդովայի մի մասի անջատում ԽՍՀՄ-ից (տարածքներ, որոնք ԽՍՀՄ-ին միացվել են համաձայն 1939թ. սեպտեմբերի 28-ի բարեկամության եւ սահմանների մասին պայմանագրի):

Երրորդ՝ ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջեւ պատմական տարածքային վեճի կարգավորում Չուկոտյան եւ Բերինգյան ծովերում:

Չորրորդ՝ Կրաստանի եւ Յայաստանի անջատում ԽՍՀՄ-ից:

Փաթեթային այս լուծումը կյանքի կոչվեց 1987թ. դեկտեմբերի 8-ից մինչև 1991թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում՝ տրամաբանորեն իրար հետ շաղկապված մի շարք երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի ստորագրմամբ ու միակողմանի քաղաքական որոշումների ընդունմամբ:

**Աղյուսակ 3: Ամերիկա-խորհրդային պայմանագրի իրագործում**

Թվական	Միջազգային պայմանագիր, նոր օրենք կամ քաղաքական որոշում	ԽՍՀՄ շահերի տեսանկյունից հետապնդվող նպատակ
8 դեկտեմբերի 1987թ.	Պայմանագիր ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ միջին եւ փոքր հեռահարության հրթիռների վերացման մասին	ԱՄՆ-ի՝ Եվրոպայում տեղակայված ցամաքային տեղակայման թեւավոր հրթիռների վերացում ռազմավարական ուժերի հաշվեկշռի վերականգնման նպատակով
15 փետրվարի 1988թ.	Որոշում Աֆղանստանից զորքերի դուրսբերման մասին	խորհրդային զորքերի դուրսբերում վերջինիս՝ Աֆղանստանում ներկայության անհրաժեշտության վերացման պատճառով
14 ապրիլի 1988թ.	Միջազգային երաշխիքների մասին պաշտոնական հայտարարություն	ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի հայտարարությունը Աֆղանստանի եւ Պակիստանի ներքին գործերին չմիջամտելու եւ այս պետություններ ներխուժումից հրաժարվելու մասին
27 նոյեմբերի 1989թ.	ԽՍՀՄ օրենքը Լատվիական ԽՍՀ, Լիտվական ԽՍՀ եւ Եստոնական ԽՍՀ տնտեսական ինքնուրույնության մասին	Տնտեսության բնագավառում Մերձբայթյան հանրապետությունների օրենսդրության գերակայության ճանաչում ԽՍՀՄ օրենսդրության հանդեպ: Այս հանրապետությունների անջատման համար տնտեսական նախադրյալների ստեղծում
24 դեկտեմբերի 1989թ.	ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի 24.12.1989թ. թիվ 979-1 որոշումը 1939թ. չհարձակվելու մասին խորհրդա-գերմանական պայմանագրի քաղաքական եւ իրավական գնահատականների մասին	խորհրդա-գերմանական պայմանագրի եւ նրա գաղտնի արձանագրությունների իրավաբանորեն անհիմն եւ անվավեր ճանաչումը նրանց ստորագրման պահից: Իրավաքաղաքական նախադրյալների ստեղծում այդ հանրապետությունների անջատման համար
1990թ. մարտ	Սահմանադրական բարեփոխումները ԽՍՀՄ-ում	ԽՍՀՄ նախագահի պաշտոնի ձեւավորում եւ նախագահական ընտրությունների անցկացում: Բազմակուսակցական համակարգի ներմուծում
1 հունիսի 1990թ.	Համաձայնագիր ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ ծովային տարածքների սահմանազատման գծերի մասին	Տնտեսական գոտիների եւ Չուկոտյան ու Բերինգյան ծովերի մերձցամաքային տարածքների բաժանում

Մեծ տերության ճգնաժամը. պատճառներ և հետևանքներ

31 օգոստոսի 1990թ.	Պայմանագիր Գերմանիայի միավորման մասին՝ կնքված Գերմանիայի դաշնային հանրապետության և Գերմանիայի դեմոկրատական հանրապետության միջև	Գերմանիայի դեմոկրատական հանրապետության վերացումը և Նրա միավորումը Գերմանիայի դաշնային հանրապետության հետ: Գերմանիայի նկատմամբ հետպատերազմյան իրավիճակի կարգավորում
12 սեպտեմբերի 1990թ.	Պայմանագիր Գերմանիայի նկատմամբ վերջնական կարգավորման մասին՝ կնքված ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի միջև	Համաձայնագիր մինչև 1994թ. Գերմանիայից խորհրդային զորքերի դուրսբերման մասին: Միջազգային իրավունքի խախտված սկզբունքների վերականգնում
19 նոյեմբերի 1990թ.	Պայմանագիր ԵԱՀԽ անդամ պետությունների միջև Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին	Սովորական սպառազինությունների կրճատում Եվրոպայում: Եվրոպական տարածքի ապառազմականացում
21 նոյեմբերի 1990թ.	ԵԱՀԽ Փարիզյան խարտիան Նոր Եվրոպայի համար	ԵԱՀԽ անդամ պետությունների պաշտոնական հայտարարությունը գլխավոր քաղաքական արժեքների միասնության վերաբերյալ. ժողովրդավարական կառավարման համախոհություն և օրենքի գերակայության սկզբունքի հարգում
16 հունվարի 1991թ.	ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը հանրաքվե անցկացնելու մասին	ԽՍՀՄ-ի պահպանման խնդիրը համաժողովրդական հանրաքվեի դնելու հարցը:
17 մարտի 1991թ.	Հանրաքվե ԽՍՀՄ-ում	9 միութենական հանրապետությունների բնակչության մեծամասնության որոշումը ԽՍՀՄ-ի պահպանման մասին: Հանրաքվեի նենգադուլ Մերձբալթյան հանրապետություններում, Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում
31 մարտի 1991թ.	Վարչապետ պայմանագրի լուծարում	Վարչապետ պայմանագրի երկրների նկատմամբ ռազմա-քաղաքական վերահսկողությունից հրաժարում
31 հուլիսի 1991թ.	Պայմանագիր հարձակողական սպառազինությունների կրճատման մասին (ՅՍԿ-1)՝ կնքված ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև	Ռազմական կրիչների կրճատում մինչև 1600 միավոր, միջուկային մարտակիցքերի կրճատում մինչև 6000 միավոր
20 օգոստոսի 1991թ.	9 միութենական հանրապետությունների կողմից Նոր միութենական պայմանագրի ստորագրում (չկայացավ)	Հնարավորություն ԽՍՀՄ-ից Մերձբալթյան հանրապետությունների, Մոլդովայի (առանց Մերձդնեստրի), Հայաստանի և Վրաստանի անջատման համար Նոր պայմանագիր ստորագրելու միջոցով
6 սեպտեմբերի 1991թ.	ԽՍՀՄ Պետխորհրդի որոշումը	Մերձբալթյան հանրապետությունների անկախության հարկադրված ճանաչում ԽՍՀՄ-ի կողմից
1991թ. հոկտեմբեր	ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի նախագահների միակողմանի քաղաքական որոշումները	Ոչ ռազմավարական (մարտավարական) միջուկային սպառազինությունների դուրսբերում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի զինված ուժերի կազմից

Այսպիսով՝ ֆաշիստական Գերմանիայի կապիտուլյացիայից 40 տարի անց վերջակետ դրվեց Եվրոպայի հետպատերազմյան կարգավորման հարցին: 1991թ. սեպտեմբերի 6-ին ԽՍՀՄ-ը հայտնվեց այն իրավիճակում, որում, համաձայն միջազգային իրավունքի սկզբունքների, պետք է լիներ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջեւ համաձայնեցված աշխարհաքաղաքական փոփոխությունների նախագիծը շրջափում էր ոչ միայն գինաթափման եւ հետպատերազմյան Եվրոպայի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի վերականգնման խնդիրներ, այլեւ դատելով ամեն ինչից՝ առնչվում էր ԽՍՀՄ-ի՝ Անդրկովկասի հանդեպ ունեցած պարտավորությունների վերանայմանը: 1945թ. Թուրքիայի եւ Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջեւ կնքված սահմանների մասին ոչ իրավական պայմանագիրն արդեն դարձել էր բանակցությունների առարկա մեծ երկրների միջեւ, սակայն այն իր վերջնական լուծումը չգտավ: 1991թ. Հայաստանին եւ Վրաստանին անկախություն տրամադրելու՝ ԽՍՀՄ-ի համաձայնությունը ակնհայտորեն չէր տեղավորվում Եվրոպայում հետպատերազմյան իրավիճակի կարգավորման խնդրի շրջանակներում: Միութենական այս հանրապետությունների կողմից միջազգային հարաբերություններում իրավունակության ձեռքբերումը պարզորոշ կերպով ուրվագծում էր այն երկրների շրջանակը, որին վերաբերում էր 1921թ. կնքված Կարսի պայմանագրի վերանայումը: «Թուրքական հարցը» աշխարհաքաղաքական հետաքրքրությունների շրջանակում ներառելու՝ ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի ջանքերն ակնհայտորեն լիովին համընկնում էին, ինչը կարելու էր նշանակություն ունեւր եվրոպական սերտաճման գործընթացներում Թուրքիայի տեղը որոշելու համար:

### **«Վերակառուցումը» եւ «Նոր մտածողությունը» ԽՍՀՄ-ում**

«Սառը պատերազմում» ԽՍՀՄ-ի աշխարհաքաղաքական պարտությունը կապված չէր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման թափի հետ, այլ հետեւանք էր անվտանգության ազգային ռազմավարության համադրույթում առկա հիմնավոր սխալների: Նշյալ համադրույթի հիմքում, ԱՄՆ-ի ագրեսիային ի պատասխան, ԽՍՀՄ-ի միջուկային ուժերի հակահարվածի անխուսափելիության՝ իբրեւ հակառակորդին զսպող գլխավոր գործոն լինելու զաղափարն էր: Այդ պատճառով ԽՍՀՄ-ի ռազմավարական միջուկային ուժերի զարգացման հիմնական ուղղությունը մի քանի մարտագլխիկներով լիցքավորված միջմայրցամաքային ծանր բալիստիկ հրթիռների մշակումն էր: Սակայն ստեղծելով աշխարհում ամենահզոր հարվածային զենքերի համակարգը՝ ԽՍՀՄ-ը չկարողացավ կազմակերպել եւ ապահովել Նրանց պատշաճ պաշտպանությունը կանխող հարվածից:

Տնտեսության կենտրոնացված կառավարումը եւ բնական ու մարդկային պաշարամիջոցների սաստիկ շահագործումը թույլ տվեցին ԽՍՀՄ-ին 30-ական թթ. սկզբից արդյունաբերական զարգացման անհավանական բարձր ցուցանիշներ արձանագրել: Չնայած Նորարարությունների Ներդրման եւ աշխատանքի արտադրողականության տեմպերով ԽՍՀՄ-ը զիջում էր ԱՄՆ-ին եւ եվրոպական պետություններին, սակայն բացարձակ ցուցանիշներով խորհրդային տնտեսություն-

նը 80-ական թթ. կեսերին գրավում էր աշխարհում երկրորդ կամ երրորդ տեղը: ԽՍՀՄ ժողովրդական տնտեսությանն այդ ժամանակ բաժին էր ընկնում համաշխարհային համախառն արտադրանքի 20 տոկոսը: ԽՍՀՄ ֆինանսական համակարգի հենասյունը ոսկու պաշարներն էին, որոնք կազմում էին ավելի քան 2400 տոննա: ԽՍՀՄ-ն ուներ նաեւ ադամանդի զգալի հիմնապաշար: Ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանավորման համակարգը կուտակել էր կառավարման մեծ փորձ եւ ուներ բավականաչափ ներուժ վերջինիս կառավարման որակը բարելավելու համար: Ստեղծվել էին անհրաժեշտ նախադրյալներ տեղեկատվական համակարգի զարգացման եւ պլանավորման ավտոմատացման ներդրման համար:

Մարդկային ներուժի զարգացման ոլորտում իրականացված ՄԱԿ-ի հետազոտությունները եւ մասնավորապես նրանց կողմից որդեգրված ցուցիչը (Human Development Index), որն ամբողջականորեն նկարագրում է ՄԱԿ-ի անդամ երկրների սոցիալական ու կյանքական զարգացման մակարդակը, ինչպես նաեւ նրանց տեղը մյուս երկրների համեմատությամբ, 1988թ. ԽՍՀՄ-ում ողջ բնակչության համար կազմում էր 0,920, ընդ որում՝ տղամարդկանց պարագայում 0,901, կանանց պարագայում՝ 0938: Համաձայն այդ ցուցիչի՝ ԽՍՀՄ-ն աշխարհում զբաղեցնում էր 26-րդ տեղը՝ մտնելով մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով երկրների խմբի մեջ (5): Եթե համեմատենք ԽՍՀՄ-ի այդ ցուցիչը Ռուսաստանի այժմյան համապատասխան ցուցիչի հետ, ապա ակնհայտ կդառնա, թե Ռուսաստանում որքան է անկում ապրել մարդկային զարգացման ցուցանիշը ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների անջատմանը հաջորդած տարիների ընթացքում: 2011թ. այդ ցուցիչը Ռուսաստանի համար կազմում էր 0,755՝ զբաղեցնելով 66-րդ հորիզոնականը (6):

70-ական թթ. սկզբին Եվրոպայում էներգետիկ ճգնաժամը ստիպեց Եվրոպայի կապիտալիստական երկրներին համաձայնել ԽՍՀՄ-ից էներգետիկ ռեսուրսների մատակարարման հետ: Իր հերթին՝ Եվրոպա էներգակիրների արտահանման ավելացումը ԽՍՀՄ-ին թույլ տվեց ընդլայնել իր ներթափանցումը արտադրության արեւմտյան տեխնոլոգիաների ոլորտ: ԽՍՀՄ-ի եւ ԵՄ անդամ պետությունների ռազմավարական շահերի համընկնումը նրան Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհուրդ հրավիրելու հիմնարար շարժառիթն էր: Խորհրդի եզրափակիչ ակտն ընդունվեց 1975թ. Յելսինկիում: Այսպիսով՝ ԽՍՀՄ-ին հաջողվեց հասնել իր տարածքային ամբողջականության իրավաբանաբանական ճանաչմանը ԱՄՆ-ի եւ ԵՄ անդամ պետությունների՝ Ներառյալ ԳԴՀ-ի կողմից եւ հետպատերազմյան Եվրոպայում բոլոր սահմանների անխախտելիությանը: Էներգետիկ ռեսուրսների մատակարարումը Եվրոպա զգալիորեն ամրապնդեց ԽՍՀՄ-ի դիրքերը միջազգային ասպարեզում:

80-ական թթ. կեսերին ԽՍՀՄ ղեկավարության խորհրդածությունը ներառաբանական բնագավառում աշխարհաբանաբանական իրավիճակի փոփոխման առումով հրապարակային քաղաքականության բնույթ է ստանում: ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությունը զիտակցում էր, որ Գերմանիայից եւ Արեւելյան Եվրոպայից խորհրդային զորքերի դուրսբերման եւ այդ երկրներին քաղաքական անկախություն տալու համար անհրաժեշտ է հայտարարել Եվրոպայի նկատմամբ ստալինյան քաղաքականությունից իրաժարվելու մասին: 1987թ. ԽՄԿԿ գլխա-

վոր քարտուղար Մ.Գորբաչովը լույս ընծայեց իր «Վերակառուցումը եւ նոր մտածողությունը երկրի եւ ողջ աշխարհի համար» ծրագրային գիրքը: «Վերակառուցումը» եւ «Նոր մտածողությունը» հանրությանը ներկայացվեցին իբրեւ ԽՍՀՄ ղեկավարության քաղաքական ուղղություն՝ միտված միջազգային լարվածության թուլացմանը եւ երկրի տնտեսական զարգացման արագացմանը: Իրականում 80-ական թթ. վերջերին ԽՍՀՄ տնտեսությունը որեւիցե չափով աղետալի վիճակում չէր: Ռազմական ծախսերի կրճատումն, իհարկե, առաջ բերեց դժվարություններ՝ կապված ռազմարդյունաբերության փոխարկման հետ, բայց սա ԽՍՀՄ-ի համար լիովին հաղթահարելի խնդիր էր:

Բարեփոխումների ուղղության որդեգրումը նպատակ ուներ հանրության մեջ սերմանել խորը համոզմունք, որ քաղաքական փոփոխությունները թելադրված են ԽՍՀՄ տնտեսական խնդիրներով՝ կապված տնտեսության կենտրոնացված պլանային կառավարման անկատարության հետ: ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությունը հույս ուներ, որ այս եղանակով հնարավոր է պահպանել ավտորիտար վարչակարգի համբավը՝ շղարշելով Գերմանիայից խորհրդային զորքերի դուրսբերման եւ ԽՍՀՄ-ից վեց հանրապետությունների անջատման իրական դրդապատճառները:

Իրականում «վերակառուցումը» հարմարավետ քաղաքական պայմաններ ստեղծեց չարաշահումների եւ կոռուպցիայի ազատության, գնաճի խթանման եւ սպառման առարկաների շուկայական ճգնաժամի ձեւավորման համար: Զաղաքական ասպարեզում այն նպաստեց միութենական հանրապետություններում եւ ինքնավար կազմավորումներում անջատողականության ձեւավորման ու ազգամիջյան հակամարտությունների առաջացման համար: Խորհրդային ժողովրդի մեծամասնության հիացմունքը ԽՍՀՄ-ում քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների առիթով 1990թ. վերջերին փոխարինվեց Մ.Գորբաչովի նկատմամբ անվստահության աճով: Հանրությունը ներըմբռնողաբար զգում էր «վերակառուցման» կեղծ բնույթը եւ հաստատագրում երկրի ղեկավարության նոր քաղաքական արժեքներին վերաբերող հայտարարությունների եւ իրական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների անհամապատասխանությունը:

### **Միխայիլ Գորբաչովի կողմից կառավարվող օլիգարխիայի հեռացումը կուսակցական իշխանությունից**

Իոսիֆ Ստալինի մահից հետո՝ 1953թ., նրան հաջորդեց Նիկիտա Խրուշչովը: Ինքնակալական իշխանության վրա հիմնվող ամենատիրական կառավարման ստալինյան վարչակարգն օրինաչափորեն փոխվեց կուսակցական օլիգարխիայի ավտորիտար վարչակարգի: Այդ ժամանակ ԱՄՆ-ի ռազմական շրջանակները հանգեցին այն եզրակացության, որ վրա է հասել ԽՍՀՄ-ի վրա ուժային ճնշում գործադրելու հարմար պահը: 1961թ. ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ Թուրքիայում միջին հեռահարության «Յուպիտեր» բալիստիկ հրթիռների տեղակայմանը: Պատասխան գործողությամբ ԽՍՀՄ-ը նման կարգի հրթիռներ տեղակայեց Կուբայում: Իրավիճակի սրման արդյունքում 1962թ. հոկտեմբերի 14-ին առաջացավ քաղաքական ճգնաժամ (Կարիբյան ճգնաժամ), որը երկու տերություններին

հասցրեց միջուկային բախման եզրին: ԽՄԿԿ ԿԿ առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովին և ԱՄՆ-ի նախագահ Ջոն Զենդերգին հաջողվեց երկու շաբաթվա ընթացքում ուղղակի փոխգործակցություն հաստատել և խուսափել միջուկային բախումից: Պատերազմի սպառնալիքը վերացվեց. խորհրդային և ամերիկյան միջին հեռահարության հրթիռները դուրս բերվեցին մարտական դիրքերից: Ըստ ամենայնի՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև լարվածության լիցքաթափումը Ջոն Զենդերգիի համար ունեցավ կյանքի, իսկ Նիկիտա Խրուշչովի համար՝ պաշտոնի գին. 1963թ. նոյեմբերի 22-ին սպանվեց Զենդերգին, իսկ 1964թ. Խրուշչովը կուսակցության բարձրագույն ղեկավարության դավադրության արդյունքում հեռացվեց կուսակցության և երկրի ղեկավարումից: Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարի պաշտոնը ստանձնեց Լենինի Բրեժնևը, իսկ կառավարությունը գլխավորեց Ալեքսեյ Կոսիգինը:

1979թ. դեկտեմբերի 12-ին ՆԱՏՕ-ի խորհուրդը որոշում ընդունեց 1983թ. Եվրոպայում թվով 572 «Փերշինգ-2» հրթիռների և մի քանի հարյուր «Տոմահավկ» թեւավոր հրթիռների տեղակայման մասին: «Փերշինգ-2» հրթիռների՝ մինչև նպատակակետին հասնելու թռիչքի կարճատևությունը (6-8 րոպե) և «Տոմահավկ» թեւավոր հրթիռների եզակի մարտական որակներն ԱՄՆ-ին հնարավորություն էին ընձեռում առաջին գործուն հարվածը հասցնել խորհրդային միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների հրամանատարական կետերին և արձակման կայաններին: Հարկ է նշել, որ տեղակայվող միջուկային հրթիռները չէին հաշվառվում այն ժամանակ գոյություն ունեցող ռազմավարական գեներրի սահմանափակման մասին խորհրդա-ամերիկյան համաձայնագրերում: Նույն օրը ԽՄԿԿ ԿԿ Զարբյուրոն որոշում ընդունեց խորհրդային զորքերն Աֆղանստան մտցնելու մասին: Կուսակցական օլիգարխիայի վերնախավը մտավ «Մեծ խաղի» մեջ, որի ավարտը նրանցից ոչ մեկին վիճակված չէր տեսնել:

**Աղյուսակ 4:** ԽՄԿԿ կուսակցական օլիգարխիայի վերնախավի՝ կյանքից հեռանալու տարիները

Գործիչ	Պաշտոն	Պաշտոնավարման ժամանակաշրջան	Մահվան թվականը
Լենինի Բրեժնև	ԽՄԿԿ առաջին, այնուհետև՝ գլխավոր քարտուղար  ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ	14 հոկտեմբերի 1964թ.- 10 նոյեմբերի 1982թ.  16 հունիսի 1977թ.-10 նոյեմբերի 1982թ.	10 նոյեմբերի 1982թ.
Ալեքսեյ Կոսիգին	ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ	15 հոկտեմբերի 1964թ.- 23 հոկտեմբերի 1980թ.	18 դեկտեմբերի 1980 թ.
Դմիտրի Ուստինով	ԽՍՀՄ պաշտպանության նախարար	29 ապրիլի 1976թ.-20 դեկտեմբերի 1984թ.	20 դեկտեմբերի 1984թ.

Յուրի Անդրոպով	ԽՍՅ ՊԿԿ նախագահ	18 մայիսի 1967թ.- 26 մայիսի 1982թ.	9 փետրվարի 1984թ.
	ԽՍԿԿ գլխավոր քարտուղար	12 նոյեմբերի 1982թ.- 9 փետրվարի 1984թ.	
	ԽՍՅ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ	16 հունիսի 1983թ.- 9 փետրվարի 1984թ.	
Անդրեյ Գրոմիկո	ԽՍՅ արտաքին գործերի նախարար	15 փետրվարի 1957թ.- 2 հունիսի 1985թ.	2 հուլիսի 1989թ.
	ԽՍՅ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ	2 հուլիսի 1985թ.- 1 հոկտեմբերի 1988թ.	
Նիկոլայ Շչելոկով	Ներքին գործերի նախարար	17 սեպտեմբերի 1966թ.- 17 դեկտեմբերի 1982թ.	13 դեկտեմբերի 1984թ.
Միխայիլ Սուևով	ԽՍԿԿ ԿԿ քարտուղար	24 մայիսի 1947թ.- 25 հունվարի 1982թ.	25 հունվարի 1982թ.

ԽՍԿԿ ԿԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում Միխայիլ Գորբաչովի առաջ-  
 քաշումը սկսվել էր 80-ական թթ. սկզբից: Գորբաչովը գլխավորում էր ԽՍՅ  
 Գերագույն խորհրդի Միության խորհրդի օրենսդրական նախաձեռնություննե-  
 րի հանձնաժողովը: 80-ական թթ. կեսերին Գորբաչովն արդեն ներառված էր  
 ԽՍՅ աշխարհաքաղաքական իրավիճակի մասին տեղեկացված մարդկանց  
 շրջանակի մեջ: ԽՍԿԿ բարձրագույն ղեկավարությունը համարեց, որ Մ.Գոր-  
 բաչովը մյուսներից ավելի շատ է համապատասխանում ԱՄՆ-ի եւ Եվրոպական  
 երկրների հետ բանակցողի դերին: 1984թ. Մեծ Բրիտանիա Գորբաչովի այցը  
 մեծ դեր խաղաց ԽՍԿԿ ԿԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում նրան նշանա-  
 կելու (1985թ. մարտի 11) առումով: Այդ պաշտոնի համար Գորբաչովի թեկնա-  
 ծությունն առաջարկեց ԽՍՅ արտաքին գործերի նախարար Անդրեյ Գրոմիկոն:  
 ԱՄՆ-ի հետ երկրորդ բանակցող նշանակվեց Վրաստանի կոմկուսի կենտրոնի  
 առաջին քարտուղար Էդուարդ Շեւարդնաձեն: 1985թ. հուլիսի 2-ին նա դարձավ  
 ԽՍՅ արտաքին գործերի նախարար՝ փոխարինելով Անդրեյ Գրոմիկոյին, որը  
 զբաղեցրեց պետության ղեկավարի՝ ԽՍՅ Գերագույն խորհրդի նախագահութե-  
 յան նախագահի պաշտոնը: ԽՍՅ արտաքին գործերի նախարարի պաշտոնում  
 Վրաստանի կոմկուսի ղեկավարի նշանակումը, ով բացարձակապես չունեւր դի-  
 վանագիտական աշխատանքի փորձ, ակնհայտորեն պատահական չէր: Էդուարդ  
 Շեւարդնաձենի փաստացիորեն ներգրավելով նախատեսվող աշխարհաքաղա-  
 քական փոփոխությունների իրականացման ծրագրում, հնարավոր է, այդպիսով  
 ԽՍՅ բարձրագույն ղեկավարությունը նրան նախապատրաստում էր ապագա  
 անկախ Վրաստանի ղեկավարի դերին:

Մաթիաս Ռուստի թռիչքը Յուրի Անդրոպովից Մոսկվա եւ վայրէջքը Կարմիր հրապա-  
 րակում ակնառու կերպով ցուցադրեցին, թե ինչպես մինչձայնային ցածրաթռիչք  
 «Տոմսահավկ» տիպի թռչվոր հրթիռները կարող են հաղթահարել ԽՍՅ հա-



կառային պաշտպանության համակարգը: 1984թ. պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցնող մարշալ Սերգեյ Սոկոլովը ստիպված էր պաշտոնաթող լինել: Այդ պաշտոնում նրան փոխարինեց գեներալ Դմիտրի Յագովը: Այդ պահից Գորբաչովը ստացավ ներքաղաքական գործողությունների ազատություն՝ ԱՄՆ-ի հետ համաձայնեցված փաթեթային որոշումն իրականացնելու համար:

Պետական իշխանության բարեփոխման մեկնարկը տրվեց 1988թ. դեկտեմբերի 1-ին Սահմանադրության փոփոխությամբ, համաձայն որի՝ ԽՍՀՄ-ում պետական իշխանության բարձրագույն մարմինը Ժողովրդական պատգամավորների համագումարն էր: Համագումարի պատգամավորներն ընտրվեցին 1989թ. գարնանը, իսկ 1990թ. մարտին համագումարն ընդունեց որոշում ԽՍՀՄ սահմանադրության մեջ մի ամբողջ շարք փոփոխություններ մտցնելու մասին: Ներդրվեց բազմակուսակցական համակարգը եւ ձեւավորվեցին ԽՍՀՄ նախագահի եւ փոխնախագահի պաշտոնները: Նախագահը պետք է ընտրվեր համընդհանուր ուղղակի քվեարկությամբ: Համագումարը բացառության կարգով 1990թ. մարտի 15-ին ԽՍՀՄ առաջին նախագահ ընտրեց Միխայիլ Գորբաչովին: Փոխնախագահ դարձավ Գենադի Յանսելը: 1991թ. մարտի 23-ին, համաձայն նորացված Սահմանադրության, Գորբաչովը ձեւավորեց կոլեգիալ կառավարման նոր մարմին՝ նախագահական խորհուրդ, որին մաս կազմեցին 18 հոգի: Ի լրումն պետության առաջին դեմքերի եւ ԽՄԿԿ ԿԿ Զարբյուրոյի առանցքային անդամների՝ խորհրդի կազմում ընդգրկվեցին նաեւ գիտնականներ, մշակույթի ու հասարակական գործիչներ: Այդ պահից ի վեր ԽՄԿԿ-ը գործնականում կորցրեց իշխանության կենտրոնի դերը: Այսպիսով՝ ապահովելով պետության ղեկավարի պաշտոնում իր ընտրության առերեսույթ լեգիտիմությունը՝ Գորբաչովը Սահմանադրության մեջ ոչ միայն ամրապնդեց իր լայն իշխանական լիազորությունները, այլեւ ձեռք բերեց քաղաքական կապիտալ՝ ԽՄԿԿ ԿԿ-ում գտումսեր իրականացնելու համար: Կուսակցական օլիգարխիայի ժամանակը մոտեցավ իր վերջնակետին: 1990թ. հուլիսի 14-ին Գորբաչովը գործնականում լիովին նորացրեց ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի եւ Զարբյուրոյի կազմերը՝ դրանով իսկ երկրի բարձրագույն ղեկավարությանը հեռացնելով կուսակցական ղեկավար պաշտոններից: Կուսակցության կառավարումն ամբողջովին անցավ Գորբաչովի միանձնյա վերահսկողության տակ: Օլիգարխիայի դուրսմղումը կուսակցության ղեկավարումից եւ պետական ու կուսակցական բարձրագույն իշխանության կենտրոնացումը մեկ մարդու ձեռքում հնարավոր դարձավ երեք հիմնական գործոնների զուգակցման արդյունքում:

Առաջին՝ 60-ական թթ. կազմավորված կուսակցական օլիգարխիան իր ամբողջ կազմով հեռացել էր կյանքից՝ իր հաջորդներին թողնելով աշխարհաքաղաքական խնդիրը:

Երկրորդ՝ ԱՄՆ-ի հետ գլխավոր բանակցողի դերը Միխայիլ Գորբաչովին առաջնորդի կարգավիճակ էր երաշխավորում նոր կուսակցական օլիգարխիայում;

Երրորդ՝ աշխարհաքաղաքական անհրաժեշտությունից թելադրված ԽՍՀՄ-ից վեց միութենական հանրապետությունների անջատման որոշումը իրականում պահանջում էր վերացնել մենաշնորհային քաղաքական ղեկավարումը կոմունիստական կուսակցության կողմից եւ գործունեության դաշտ բացել այլ քաղաքական ուժերի համար:

1990թ. դեկտեմբերի 26-ին Գորբաչովը հասավ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների չորրորդ համագումարի կողմից սահմանադրական ուղղումների նոր փաթեթների հաստատմանը: Նախագահական խորհրդի փոխարեն ստեղծվեց ԽՍՀՄ անվտանգության խորհուրդը, որում 1991թ. մարտի 13-ին ընդգրկվեցին 8 անդամ:

**Աղյուսակ 5: ԽՍՀՄ անվտանգության խորհրդի կազմը**

ԽՍՀՄ անվտանգության խորհրդի անդամ	Պաշտոն
Գենադի Յանաեւ	Փոխնախագահ
Վալենտին Պավլով	Վարչապետ
Վլադիմիր Կոյուչկով	ԽՍՀՄ ՊԱԿ նախագահ
Դմիտրի Յագով	ԽՍՀՄ պաշտպանության նախարար
Բորիս Պուզո	ԽՍՀՄ ներքին գործերի նախարար
Ալեքսանդր Բեսսերտսևիչ	ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար
Եվգենի Պրիմակով	ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Միությունների խորհրդի նախկին նախագահ
Վադիմ Բակատին	ԽՍՀՄ ներքին գործերի նախկին նախարար

Կուսակցական օլիգարխիայի կողմից 35-ամյա կառավարումից հետո պետական իշխանության լիակատար վերահսկողությունը ԽՍՀՄ-ում անցավ եռապետությանը՝ Գորբաչով, Կոյուչկով եւ Յագով: Այս իրավիճակին առաջինն արձագանքեց Էդուարդ Շեւարդնաձեն, ով 1990թ. դեկտեմբերի 20-ին ժողովրդական պատգամավորների համագումարի ամբիոնից հայտարարեց արտաքին գործերի նախարարի պաշտոնից իր հրաժարականի մասին: Շեւարդնաձեն նման իրավիճակը գնահատեց որպես երկրում մենիշխանության հաստատման նախանշան եւ ակնարկեց, որ Գորբաչովը Շեւարդնաձեին միտումնավոր է թողել քննադատության կրակի տակ՝ 1990թ. կատարած արտաքին քաղաքական քայլերի համար:

*(Շարունակելի)*

## Գրականություն

(1). Е.В. Новикова. История экономики. 9.1. Экономические итоги второй мировой войны.

(2). Ամերիկյան գիտնականների ֆեդերացիա [www.fas.org](http://www.fas.org)

(3). Սպառազինությունների վերահսկման, էներգետիկայի և քնապահպանական խնդիրների հետազոտության կենտրոն [www. armscontrol.ru](http://www.armscontrol.ru).

(4) Human Development Report 1990 [www.undp.org](http://www.undp.org)

(5) Human Development Report 2011 [www.undp.org](http://www.undp.org)

(6) Горбачев М.С. Перестройка и новое мышление для нашей страны и для всего мира. М., Политиздат, 1987.

---

## АНДРИАС ГУКАСЯН

### Кризис великой державы: причины и следствия

Статья обобщает исследование взаимосвязи внешнеполитических шагов СССР, а в дальнейшем, России, в сфере ядерного разоружения с внутривнутриполитическими событиями в этих странах. Сопоставление заключённых правительствами международных договоров, хода их ратификации с изменениями в составе правящей олигархии демонстрирует закономерности развития политических процессов. Исследование позволяет выявить причины и следствия кризиса великой державы и создаёт фундамент для прогнозирования основных направлений дальнейшего развития событий.

## ANDRIAS GHOUKASYAN

### The Crisis of the Great State: Causes and Effects

The article reviews the correlation between the international steps taken by the USSR (subsequently by Russia) in regard to nuclear disarmament, and the domestic political advancements in these countries. The synthesis of the international agreements signed by the governments—along with the ratification process—and the shifts in the structure of the ruling oligarchy demonstrates that the evolvement of political processes conform to natural laws. The research provides an opportunity to reveal the causes and effects of the great state's crisis, and to lay down a foundation for forecasting the main paths of developments.

## ԵԱՅԿ ԺՅՄԻԳ-ը ԵՒ հայաստանյան ընտրությունները

### ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆՅԱԼ

*Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՅԿ) փորձագետ: Միաժամանակ դասավանդում է քաղաքական գիտություններ, մասնավորապես հանդես է գալիս փորձագիտական-վերլուծական հոդվածներով: Ունի քաղաքագիտության մագիստրոսի աստիճան:*

#### 1. Ներածություն

Ընտրությունների դիտարկումը վաղուց արդեն դարձել է քաղաքական գործընթացների կարեւորագույն բաղկացուցիչներից մեկը: Շատ հաճախ ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր քաղաքական ուժերը՝ իբրեւ իրենց այս կամ այն գործողության հիմնավորում, վկայաբերում են դիտորդական առաքելություն իրականացնող տարբեր կազմակերպությունների գնահատականները: Փաստացի՝ դիտորդների (եւ հատկապես՝ միջազգային), զեկույցները դառնում են ինքնիշխան պետությունների ներքին քաղաքականության վրա մեծ ազդեցություն ունեցող գործոն: ԵԱՅԿ տարածքում ընտրությունների դիտարկում իրականացնող ամենախոշոր ու հեղինակավոր կառույցը ԵԱՅԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակն է (ԺՅՄԻԳ): 1990 թվականին ստեղծված այս կազմակերպությունը՝ սկսած 1996-ից, դիտարկել է Չայաստանի բոլոր համապետական ընտրությունները<sup>1</sup>:

Պետք է նշել, որ ԵԱՅԿ ԺՅՄԻԳ-ը Չայաստանում իրականացրել է թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ դիտարկումներ, եւ կազմակերպության ամփոփիչ զեկույցներն ու դրանցում առկա գնահատականները ներառում են ընտրությունների ողջ գործընթացը: Դիտորդական տարբեր առաքելությունների կազմում եղել են մի քանի տասնյակից մինչեւ մի քանի հարյուր դիտորդ: Կազմակերպությունն իր դիտարկումները եւ գնահատականները կատարում է՝ հիմնվելով գլխավորապես ընտրությունների վերաբերյալ Կոպենհագենյան փաստաթղթում ամրագրված սկզբունքների վրա<sup>2</sup>:

Սակայն այսօր էլ հասարակությունը բավարար տեղեկացվածություն չունի կազմակերպության գործունեության եւ նրա կատարած դիտարկումների բովանդակության մասին: Շատերի համար հասկանալի չէ, թե ինչն է ընկած դիտորդական առաքելության կողմից հայաստանյան տարբեր ընտրություններին տրված գնահատականների հիմքում:

1 Չայաստանյան ընտրությունների վերաբերյալ ԵԱՅԿ ԺՅՄԻԳ-ի զեկույցները տեղադրված են ԵԱՅԿ պաշտոնական կայքում՝ հետևյալ հասցեով. <http://www.osce.org/odihr/elections/armenia>

2 Document of the Copenhagen meeting of the conference on the human dimension of the CSCE: <http://www.osce.org/odihr/elections/14304>

Սույն հոդվածը խնդրի մեջ որոշակի հստակություն մտցնելու փորձ է՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի համապատասխան ամփոփիչ գեկույցների համեմատական վերլուծության միջոցով: Մասնավորապես ներկայացվում է ՀՀ ընտրություններին տրված ընդհանուր գնահատականների շարժընթացը, վերհանվում են այն հիմնական խնդիրները, որոնք, դիտորդների կարծիքով, հիմք են ծառայել իրենց ընդհանրական գնահատականների համար, ուսումնասիրվում է գնահատանքի տրամաբանությունը:

Ամփոփիչ գեկույցները հետազոտության եւ համեմատության են ենթարկվել ըստ նրանց հետեւյալ մասերի՝ ընդհանուր գնահատականներ, ՉԼՄ-ներով քարոզչության լուսաբանում, քվեարկության գործընթաց եւ ձայների հաշվարկ: Այդ դրվագների ընտրությունը պայմանավորված է դիտարկման արդյունքների ընդհանուր պատկերը ստանալու համար նրանց առանձնահատուկ կարեւոր դերով:

## **2. Հայաստանյան վերջին յոթ համապետական ընտրությունները ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ամփոփիչ գեկույցների լույսի ներքո**

### ***1996 թվականի նախագահական ընտրություններ<sup>3</sup>***

#### *Ընդհանուր գնահատականներ*

Թե ընդհանուր առմամբ ինչպիսին են եղել ընտրությունները՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը ուղիղ պատասխան չի տվել: Կազմակերպությունը նշել է, որ նախորդ ընտրությունների համեմատ բարելավվել են Ընտրական օրենսգիրքը եւ ընտրական վարչարարությունը, սակայն ընտրական օրենսդրության հաճախակի խախտումները սովորել են բարելավումները:

Չեկույցում ուղղակի չի նշվում, թե կոնկրետ ինչ բնույթի խախտումներն են առավելապես սովորել բարելավումները: Չնայած առանձին գնահատականների շեշտադրումներից պարզ է դառնում, որ խախտումները եղել են ձայների հաշվարկման փուլում:

*Արձանագրած հիմնական գնահատականները՝ ըստ ընտրությունների հատուկ առանձնացված երեք բաղկացուցիչների*

#### Նախընտրական քարոզչությունը ՉԼՄ-ներում

Դիտորդները նշել են, որ ՉԼՄ-ներում թեկնածուների համար ստեղծված չեն եղել հավասար պայմաններ. թեկնածու, գործող նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ողջ ընտրաշրջանի ժամանակ առավելություն է ունեցել մրցակիցների նկատմամբ: Այսպես՝ Տեր-Պետրոսյանը Պետական առաջին հեռուստաալիքով ունեցել է 1050 րոպե խմբագրական ծածկույթ՝ Վազգեն Մանուկյանի ստացած 65 րոպեի դիմաց:

3 Այս ենթաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 1996թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի Եզրափակիչ գեկույցի վրա: (Armenian Presidential Elections, September 24, 1996, Final Report, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14149>)

### Քվեարկության գործընթաց

Նշված է, որ դիտորդների այցելած ընտրատեղամասերի միայն 53%-ում է քվեարկությունը եղել «ճշգրիտ» եւ օրենքին համապատասխան: Արձանագրվել է, որ ընտրատեղամասերի միայն 3,5%-ում է քվեարկությունը «շատ վատ» եղել:

Խմբակային քվեարկություններ են սկստվել յուրաքանչյուր 5 տեղամասերից մեկում (23%):

ԺՅՄԻԳ-ն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ տեղամասերի 40%-ում, որտեղ քվեարկել են գինվորականները, քվեարկությունը եղել է բաց կամ ուղղորդված: Հատուկ նշվում է, որ դիտորդներն անհանգստացած են եղել ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայության հաճախակիությամբ:

### Ձայների հաշվարկ

Նշվում է, որ ձայների հաշվարկը շատ ավելի վատ էր կազմակերպված, քան քվեարկությունը: Ձայների հաշվարկը դիտարկվել է 37 ընտրատեղամասերում, որոնցից 13-ում այն գնահատվել է «վատ» կամ «շատ վատ»: Բացասական գնահատականների հիմնական պատճառների թվում մատնանշվում են վստահված անձանց աշխատանքի խոչընդոտումը, տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ամփոփիչ արձանագրության չտրամադրումը, Ներքին գործերի նախարարության պաշտոնյաների ներկայությունը ընտրատեղամասերում եւ նրանց կողմից հաշվարկի դիտարկման չթույլատրումը, քվեաթերթիկների լցոնումները: Դիտորդները հատուկ ուշադրություն են դարձրել Երեւանում գտնվող 6/12 ընտրատեղամասում ձայների հաշվարկին, որի ժամանակ, ըստ նրանց, տեղի է ունեցել թերեւս ամենալուրջ խախտումը. ձայների հաշվարկի ավարտին վերոնշյալ ընտրատեղամաս եւ ներխուժել մի խումբ անձինք եւ անհայտ ուղղությամբ տարել քվեատուփն ու քվեաթերթիկները: ԺՅՄԻԳ դիտորդների վկայությամբ՝ ոչ ոք այդ արարքի համար չի ձեռքակալվել:

## **1998 թվականի նախագահական ընտրություններ<sup>4</sup>**

### *Ընդհանուր գնահատականներ*

Ի տարբերություն նախորդ՝ 1996թ. համապետական ընտրությունների վերաբերյալ տրված գնահատականների, ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ն այս անգամ ուղիղ տեքստով արձանագրում է, որ ընտրությունները չեն համապատասխանել ԵԱՀԿ չափանիշներին: Կարելի է մտածել, որ նախորդի համեմատ այս ընտրություններն ավելի վատ գնահատականի են արժանացել: Սակայն ընդհակառակը՝ դիտորդ-

4 Այս ենթաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 1996թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի Եզրափակիչ գեկոյցի վրա: (Republic of Armenia, Presidential election, march 16 and 30, 1998, Final report, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14192>)

ները համարում են, որ այս ընտրություններում որոշ առումներով առաջընթաց էր նկատվում 1996թ. ընտրությունների համեմատ: Այդուհանդերձ՝ 1996-ի ընտրություններն, ըստ նրանց, ճիշտ չափանիշ չէին ԵԱՀԿ հանձնառությունների համապատասխան ընտրական գործընթացը գնահատելու համար: Ստացվում է, որ դիտորդներն ընդամենը ավելի խիստ մոտեցում են ցուցաբերել այս ընտրությունների նկատմամբ, երբ ուղղակի նշել են ԵԱՀԿ չափանիշներին նրանց անհամապատասխանության մասին:

*Արձանագրած հիմնական գնահատականները՝ ըստ ընտրությունների հատուկ առանձնացված երեք բաղկացուցիչների*

#### Նախընտրական քարոզչությունը ՉԼՄ-ներում

Նշվում է, որ ՉԼՄ-ներում թեկնածուների լուսաբանումը, նախորդ ընտրությունների համեմատ, զգալիորեն բարելավվել է, եւ բոլոր թեկնածուները հնարավորություն են ունեցել ներկայանալու իրենց ընտրողների առջեւ: Սակայն, ըստ դիտորդների, թեկնածուներին լուսաբանելիս խտրական վերաբերմունք է դրսևորվել, նրանց նկատմամբ հավասարակշռված մոտեցում չի ցուցաբերվել: Այդ իսկ պատճառով, ըստ դիտորդների, ՉԼՄ-ներում թեկնածուների լուսաբանումը չի համապատասխանել Կոպենհագենյան փաստաթղթի 7.8 պարագրաֆին:

#### Քվեարկության գործընթաց

Դիտորդական առաքելության այցելած ընտրատեղամասերի 16%-ում՝ առաջին փուլում եւ 13%-ում՝ երկրորդ փուլում, քվեարկությունը գնահատվել է որպես «վատ» կամ «չատ վատ»:

Հաճախակի եւ հիմնական խախտումների թվում են՝ ընտրողներին վախեցնելը, լցնուումները, ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայությունը:

#### Ճայների հաշվարկ

Ընտրությունների առաջին փուլում ԵԱՀԿ դիտորդները ձայների հաշվարկը դիտարկել են 63 ընտրատեղամասերում, իսկ երկրորդ փուլում՝ 62: Առաջին փուլում ընտրատեղամասերի 16-ում ձայների հաշվարկը գնահատվել է «վատ» կամ «չատ վատ», իսկ երկրորդ փուլում ձայների հաշվարկը Նույնաչիսի գնահատականի է արժանացել 23 ընտրատեղամասերում:

Դիտորդները նշում են, որ արձանագրվել են քվեաթերթիկների, ելուղների եւ ստորագրությունների անհամապատասխանության բազմաթիվ փաստեր:

## 1999 թվականի խորհրդարանական ընտրություններ<sup>5</sup>

### *Ընդհանուր գնահատականներ*

Նշվում է, որ 1999-ի մայիսի 30-ին կայացած խորհրդարանական ընտրությունները հիմնականում մեկ քայլ առաջ էին ԵԱՀԿ չափանիշների համապատասխանության ճանապարհին: Միեւնույն ժամանակ, ինչպես փոխանցում են միջազգային դիտորդները, չնայած ընտրությունների կազմակերպման եւ քաղաքական միջավայրի բարելավմանը, մի շարք լուրջ խնդիրներ մտում են չլուծված: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ դիտորդների համար այս ընտրությունները, թեեւ դրականորեն տարբերվում են նախորդներից, նույնպես չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Իսկ չլուծված խնդիրների շարքում նրանք առանձնացնում են ընտրական հանձնաժողովների ձեւավորման կարգը, ցուցակների անճշտությունը, ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայությունը, ձայների հաշվարկի եւ արդյունքների ամփոփման թափանցիկության բացակայությունը եւ այլն:

*Արձանագրած հիմնական գնահատականները՝ ըստ ընտրությունների հատուկ առանձնացված երեք բաղկացուցիչների*

### Նախընտրական քարոզչությունը ՉԼՍ-ներում

Հաղորդվում է, որ ՉԼՍ-երում քարոզարշավի լուսաբանման առումով ոչ մի լուրջ խախտում չի գրանցվել: Դիտորդների գնահատմամբ՝ Պետական եւ այլ հեռուստատեսություններով լուսաբանումը եղել է հավասարակշռված եւ մեծ մասամբ՝ չեզոք:

### Քվեարկության գործընթաց

Միջազգային դիտորդների այցելած ընտրատեղամասերի 87%-ում քվեարկությունը գնահատվել է որպես «լավ» կամ «շատ լավ»: Իսկ նկատված խախտումները հիմնականում կապված են տեղամասերում կողմնակի անձանց ներկայության, ճնշումների, քարոզչության անհամաչափության, ընտրացուցակների անճշտության, զինվորականների քվեարկության եւ այլ խնդիրների հետ:

### Ձայների հաշվարկ

Ձայների հաշվարկը դիտարկվել է 88 ընտրատեղամասերում: Նշվում է, որ ընդհանուր առմամբ ձայների հաշվարկի գնահատականն ավելի բացասական էր, քան՝ քվեարկության գործընթացինը: Դիտարկված ընտրատեղամասերի 22%-ում հաշվարկը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ»: Միջազ-

5 Այս ելքաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 1999թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի Եզրափակիչ զեկույցի վրա: (Republic of Armenia, Parliamentary election, 30 may 1999, Final report, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14203>)



գային դիտորդների արձանագրմամբ՝ շարունակում են հիմնական խնդիր մնալ ընտրատեղամասում կողմնակից անձանց ներկայությունը, ինչպես էլ այն, որ քվեատուփերը բացելուց առաջ տեղամասային հանձնաժողովները չեն հաշվում գրանցված ընտրողների թիվը:

## **2003 թվականի նախագահական ընտրություններ<sup>6</sup>**

### *Ընդհանուր գնահատականներ*

Ըստ ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի, 2003թ. փետրվարի 19-ին եւ մարտի 5-ին կայացած նախագահական ընտրությունները չեն համապատասխանել ժողովրդավարական ընտրությունների համար սահմանված միջազգային չափանիշներին: Նշվում է, որ ամբողջ գործընթացի ժամանակ թեկնածուների համար չեն ապահովվել հավասար պայմաններ: Լուրջ խախտումներ են եղել քվեարկության, ձայների հաշվարկի, աղյուսակավորման ժամանակ, համատարած իրականացվել են քվեաթերթիկների լցնումներ: Հատուկ շեշտվում է, որ նոր Ընտրական օրենսգիրքը հիմք էր տալիս անցկացնելու միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ, սակայն անհրաժեշտ քաղաքական կամք չցուցաբերվեց այն պատշաճ կերպով կիրառելու համար: Նշվում է նաեւ, որ ընտրական հանձնաժողովների կազմը քաղաքականապես անհավասարակշիռ էր, մնացել են խնդիրներ՝ կապված ընտրացուցակների հետ եւ, բացի դրանից, ԿԸՀ-ն չի հրապարակել առանձնացված եւ մանրամասն նախնական արդյունքները:

Առանձնակի ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ երկրորդ փուլի ժամանակ վարչական կալանքի են ենթարկվել ընդդիմության ավելի քան 200 համակիրներ:

*Արձանագրած հիմնական գնահատականները՝ ըստ ընտրությունների հատուկ առանձնացված երեք բաղկացուցիչների*

### Նախընտրական քարոզչությունը ՉԼՄ-ներում

Նշվում է, որ Հանրային հեռուստատեսությունը եւ պետության կողմից ֆինանսավորվող թերթերը թեկնածուների համար հավասար մուտք չեն ապահովել եւ աշխատել են իշխանությունների օգտին: Նախագահը Պետական հեռուստատեսության լրատվական եւ վերլուծական հաղորդումների ժամանակ ստացել է 41% primetime ծածկույթ՝ առաջին փուլում, եւ 69%՝ երկրորդում: Արձանագրված է, որ իշխանություններն արժանացել են միայն դրական կամ չեզոք լուսաբանման, իսկ ընդդիմադիրները՝ հավասարաչափ չեզոք եւ բացասական:

Հատուկ նշվել է, որ «A1+» անկախ հեռուստաընկերությունը շարունակել է եթերազրկված մնալ:

6 Այս ենթաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 2003թ.-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի եզրափակիչ զեկույցի վրա: (Republic of Armenia, Presidential election, 19 february and 5 march 2003, Final report, Warsaw 28 April 2003, <http://www.osce.org/odhr/elections/armenia/14054>)

### Քվեարկության փուլ

Առաջին փուլի առումով միջազգային դիտորդները գեկուցել են, որ քվեարկության ժամանակ ընտրատեղամասերի 10%-ում, իսկ երկրորդ փուլում՝ 13%-ում տեղ են գտել լուրջ խախտումներ՝ հիմնականում լցոնումների տեսքով: Այլ խախտումներից նշվել են «կարուսեյը», ձայների գնումը, վստահված անձանց վախեցնելը, կողմակի մարդկանց ներկայությունը ընտրատեղամասերի 23%-ում՝ առաջին փուլում, եւ 24%-ում՝ երկրորդում:

### Ձայների հաշվարկ

Առաջին փուլում ձայների հաշվարկը բացասաբար է գնահատվել դիտարկված ընտրատեղամասերի 20%-ում:

Երկրորդ փուլի առումով նշվում է, որ ձայների հաշվարկը բացասական գնահատականի է արժանացել բազմաթիվ ընտրատեղամասերում: Հիմնական խախտումը քվեաթերթիկների լցոնումներն են: Այլ լուրջ խախտումների շարքում հիշատակվում են ընդդիմադիր թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների դիտավորյալ փչացումը, վերջնական արդյունքի կեղծումը, ընտրատեղամասում կողմակի մարդկանց ներկայությունը:

## **2003 թվականի խորհրդարանական ընտրություններ<sup>7</sup>**

### *Ընդհանուր գնահատականներ*

Ըստ միջազգային դիտորդների՝ 2003թ. խորհրդարանական ընտրությունները, նույն թվականին տեղի ունեցած Նախագահական ընտրությունների համեմատ, առաջընթաց են գրանցել քարոզարշավի եւ ՉԼՍ-ների լուսաբանման տեսակետից, սակայն մի շարք՝ մասնավորապես ձայների հաշվարկի ու աղյուսակավորման առումներով չեն համապատասխանել ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին: Փաստացի՝ դիտորդներն այստեղ ցանկացել են հատուկ նշել, որ ընտրական գործընթացի ցանկացած դրվագում առաջընթացը ողջունելի է, սակայն որեւէ առանձին դրվագի բացասական գնահատականը բավական է, որպեսզի ընտրություններն ամբողջությամբ համարվեն միջազգային չափանիշներին չհամապատասխանող:

*Արձանագրած հիմնական գնահատականները՝ ըստ ընտրությունների հատուկ առանձնացված երեք բաղկացուցիչների*

7 Այս ենթաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 2003թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի Եզրափակիչ գեկույցի վրա: (Republic of Armenia, Parliamentary election, 25 May 2003, Final report, Warsaw 31 July 2003, <http://www.osce.org/odihr/elections/armenia/42371>)

### Նախընտրական քարոզչությունը ՉԼՄ-ներում

Հաղորդվում է, որ, ի տարբերություն նախագահական ընտրությունների ժամանակ դրսևորած վարքագծի, «Յ 1»-ը կատարել է իր պարտավորությունը՝ հավասար պայմաններով եթեր տրամադրելով կուսակցություններին ու դաշինքներին: Սակայն նշվում է, որ ընտրությունների օրվա մոտենալուն համընթաց՝ իշխող Հանրապետական կուսակցության լուսաբանումը եղել է մեծամասամբ դրական երանգներով: Մասնավոր հեռուստաընկերությունները, հակառակ «Յ 1»-ի, կողմնակալություն դրսևորել՝ իրենց prime-time-ի գերիշխող մասը տրամադրելով իշխանական կուսակցություններին եւ նրանց ներկայացնելով մեծամասամբ դրական լույսի ներքո:

### Քվեարկության փուլ

Դիտորդները նշում են, որ իրենց այցելած տեղամասերի 90%-ում քվեարկությունը գնահատվել է դրական: Խախտումներից հիշատակվել են «կարուսեղը», կրկնակի քվեարկությունը, քվեախցիկում մեկից ավելի մարդկանց առկայությունը, զինվորականների բաց քվեարկությունը, ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայությունը (10%):

### Ձայների հաշվարկ

Լուրջ խնդիրներ են ժՅՄԻԳ ներկայացուցիչներն ի հայտ բերել ձայների հաշվարկը դիտարկած ընտրատեղամասերի մեկ երրորդում: Առաքելության փորձագետներն արձանագրել են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից օրենքի կանխամտածված խախտման 17 դեպք, այն է՝ արձանագրությունների կեղծում, հաշվարկի ժամանակ թույլ տված ընթացակարգային խախտումներ, քվեաթերթիկների հափշտակում, լցոնում, չօգտագործված քվեաթերթիկների փչացում եւ այլն:

### **2007 թվականի խորհրդարանական ընտրություններ<sup>8</sup>**

#### *Ընդհանուր գնահատականներ*

Միջազգային դիտորդական կազմակերպությունը հայտարարել է, որ «Ազգային ժողովի ընտրությունները բարելավվել են, եւ դրանց անցկացումը մեծ մասամբ համապատասխանել է ԵԱԶԿ-ի շրջանակներում ստանձնած հանձնառություններին ու ժողովրդավարական ընտրությունների համար սահմանված միջազգային այլ չափանիշներին: Այդուհանդերձ՝ ընտրությունները ԵԱԶԿ շրջանակներում ստանձնած հանձնառություններին եւ միջազգային չափանիշներին

<sup>8</sup> Այս ենթաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 2007թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱԶԿ ԺՅՄԻԳ-ի Եզրափակիչ զեկույցի վրա: (Republic of Armenia, Parliamentary election, 12 may 2007, OSCE/ODIHR Election Observation Mission Report, Warsaw 10 September 2007, <http://www.osce.org/odihr/elections/armenia/26606>

համապատասխան անցկացնելու՝ հայաստանյան իշխանությունների հայտարարած մտադրությունն իրագործվել է ոչ լիովին»։ Այս ընդհանուր գնահատականից կարելի է առանձնացնել երկու նախադասություն, որոնք բնութագրում են ընտրությունները։ Մեկն ունի ավելի շատ դրական, մյուսը՝ բացասական երանգ։ Առաջին նախադասության մեջ առանցքային են «բարելավվել են» եւ «մեծ մասամբ համապատասխանել է» բառերը, երկրորդում՝ «իրագործվել է ոչ լիովին» բառերը։

Դիտորդ կազմակերպությունն իր զեկույցի առաջամասում նաեւ նշում է, թե որոնք են եղել ընտրությունների հետ կապված հիմնական խնդիրները։ Դրանք վերաբերում են «նախընտրական քարոզարշավի կարգավորմանը եւ ընտրական հանձնաժողովների աշխատանքին՝ հատկապես քվեաթերթիկների հաշվարկման ու

աղյուսակավորման ընթացքում»։ Այսինքն, ըստ եվրոպացի դիտորդների, հիմնախնդիրները վերաբերում են ընտրությունների գրեթե բոլոր փուլերին, սակայն՝ հատկապես նախընտրական եւ անմիջապես քվեարկության ավարտին հաջորդող փուլին։ Ուստի կարելի է ենթադրել, որ «մեծ մասամբ»-ը եւ «ոչ լիովին»-ը ծագել են հենց այս փուլերում առկա խնդիրներից։

*Արձանագրած հիմնական գնահատականները՝ ըստ ընտրությունների հատուկ առանձնացված երեք բաղկացուցիչների*

#### Նախընտրական քարոզչությունը ՉԼՄ-ներում

ՉԼՄ-ներով քարոզչության լուսաբանման առումով նշվում է, որ Հանրային հեռուստաընկերությունը ձեւական մոտեցում է հանդես բերել եւ քարոզչական բոլոր նյութերը ցուցադրել մեկ կտորով, այլ ոչ թե prime time-ի ռեժիմով։ Հեռուստաընկերությունների զգալի մասը լրատվական թողարկումներում ավելի շատ լուսաբանում էին կառավարությանն ու իշխող կուսիցիային։ Վարչապետի եւ Հանրապետական կուսակցության առաջնորդի դերերը հստակ չէին սահմանազատվում։

Դիտորդները նշում են, որ տպագիր մամուլը հաճախ դրսեւորում է ոչ հավասարակշիռ մոտեցում։ Առանձին ուշադրություն է հրավիրվում հանգամանքին, որ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթն ակնհայտորեն նախապատվելի վերաբերմունք դրսեւորեց իշխանությունների եւ Հանրապետական կուսակցության նկատմամբ՝ նրանց բաժին հանելով գրեթե բացառապես դրական եւ չեզոք տեղեկատվության, ընդհանուր առմամբ, ավելի քան 62 տոկոսը»։

#### Քվեարկության փուլ

Ըստ ԵԱԿԿ ԺՅՄԻԳ-ի դիտորդների, քվեարկությունը տեղի ունեցավ մեծ մասամբ հանդարտ միջավայրում։ Քվեարկության անցկացումն իրենց այցելած տեղամասային կենտրոնների 94 տոկոսում նրանք գնահատեցին որպես «շատ լավ» կամ «լավ»։ Նկատված խախտումների շարքում մատնանշվում են մեկից ավելի քվեարկության դեպքերը, ընտրակաշառքների բաժանումը։

## Ձայների հաշվարկ

Չեկույցում նշվում է, որ դիտարկված տեղամասերում ձայների հաշվարկը մեծ մասամբ անցկացվել է համաձայն սահմանված ընթացակարգի: Այնուամենայնիվ՝ նշվում է բազմաթիվ խախտումների մասին: Օրինակ՝ որոշ տեղամասերում հաշվարկը պատշաճ թափանցիկությամբ չի իրականացվել, նկատվել են հաշվարկի եւ արդյունքների արձանագրությունների դիտավորյալ փոփոխության փորձեր:

## **2008 թվականի նախագահական ընտրություններ<sup>9</sup>**

### *Ընդհանուր գնահատականներ*

ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ը նշել է, որ «Թեև 2008թ. նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ-ի առջեւ ստանձնած պարտավորություններին ու միջազգային չափանիշներին, նախընտրական շրջանում եւ քվեարկության ընթացքում որոշ պարտավորությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ՝ հատկապես ընտրությունների օրվանից հետո: Սա ժողովրդավարական ընտրությունների էական չափանիշների նկատմամբ առաջ բերեց անբավարար հարգանք եւ արժեզրկեց ողջ ընտրական գործընթացը: Մասնավորապես՝ քվեների հաշվարկի ժամանակ բացահայտվեցին հաշվետվության եւ թափանցիկության թերություններ, իսկ բողոքների ու բողոքարկման ընթացակարգերը լիովին արդյունավետ չէին»:

Փաստորեն դիտորդները համեմատաբար դրական գնահատականի են արժանացրել միայն ընտրությունների որոշակի փուլեր: Ավելին՝ դրական գնահատականի արժանացած մասերով ընտրություններն, ըստ ԺՅՄԻԳ-ի, «հիմնականում համապատասխանել են», այլ ոչ թե՛ «լիովին համապատասխանել են» միջազգային չափանիշներին: Կարելի է նշել նաեւ, որ դիտորդները ձայների հաշվարկի եւ արդյունքների բողոքարկման գործընթացը գնահատել են խիստ բացասական, քանզի նշել են, որ այն արժեզրկել է ողջ ընտրական գործընթացը:

### Նախընտրական քարոզչությունը ՉԼՄ-ներում

Նշվում է, որ հեռուստաընկերությունների կողմից նախագահի թեկնածու եւ գործող վարչապետ Սերժ Սարգսյանին շնորհվել է արտոնյալ վերաբերմունք: Նկատվել է, որ վերջինիս վերաբերյալ լուսաբանումները եղել են բացառապես դրական կամ էլ չեզոք բնույթի: Դիտորդները նշել են, որ հակառակ վերոնշյալի, լրատվամիջոցները թեկնածուներից մեկին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին հաճախ պատկերել են բացասական կամ չեզոք: Չատուկ նշվում է, որ լրատվամիջոցները

9 Այս ենթաբաժնում ներկայացված վերլուծությունները հիմնված են 2003թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի եզրափակիչ գեկույցի վրա: (Republic of Armenia, Presidential election, OSCE/ODIHR Election Observation Mission Report, 19 february, 2008, Warsaw 30 May 2008, <http://www.osce.org/odihr/elections/armenia/32115>)

կամ չեն կարողացել, կամ չեն ցանկացել հեռարձակել իշխանություններին քննադատող կարծիքներ:

### Քվեարկության փուլ

Յամաձայն զեկույցի՝ դիտորդների այցելած ընտրատեղամասերի 95%-ում քվեարկությունը գնահատվել է ընդհանուր առմամբ դրական: Որպես հիմնական խախտումներ՝ նշված են ահաբեկումը, գործընթացը մանիպուլյացիայի ենթարկելու փորձեր եւ այլն: Նշված է, որ իշխանությունները համարժեք չեն արձագանքել խախտումներին:

### Ձայների հաշվարկ

Այցելած ընտրատեղամասերի մոտ 16%-ում ԺՅՄԻԳ-ի դիտորդները քվեների հաշվարկը գնահատել են «վատ» կամ «շատ վատ»: Նշված հիմնական խախտումներն են՝ հակաություններ քվեաթերթիկների վավերությունը որոշելիս, պահանջված քվեաթերթիկները ցույց տալու դժվարություն, մեկ թեկնածուի քվեաթերթիկների վերագրում մեկ այլ թեկնածուի, մինչև հաշվարկի ավարտը արձանագրությունների ստորագրում, չլրացված արձանագրությունների ստորագրում, արձանագրությունների մեջ տվյալների փոփոխում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով արձանագրությունների բացահայտ ցուցադրման ձախողման դեպքեր:

## **3. Ամփոփում**

Սույն հոդվածում արված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵԱԿԿ ԺՅՄԻԳ-ն իր դիտարկած ընտրություններից եւ ոչ մեկը չի գնահատել որպես ազատ, արդար եւ թափանցիկ, այսինքն՝ միջազգային չափանիշներին համապատասխանող: Ամենաբարձր ընդհանուր գնահատականը «մեծ մասամբ համապատասխանել է» բառակապակցությունն է: Կա թյուր պատկերացում, թե կազմակերպությունը երբեք կտրուկ, միանշանակ դրական գնահատականներ չի տալիս: Դա մոլորություն է: Օրինակ՝ Նույնիսկ Նախկին խորհրդային պետության՝ Լատվիայի 2011թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ Նախնական զեկույցում գտնում ենք միանշանակ դրական գնահատականներ: Չեկույցում, մասնավորապես, նշված է, որ ընտրություններն «անցել են իրավունքի գերակայությամբ, հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքով, աշխատող ժողովրդավարական հաստատություններով առանձնացող ու տարբեր քաղաքական ծրագրահենքեր առաջարկող կուսակցությունների միջև իրական ընտրություն պարունակող ժողովրդավարության եւ բազմակարծության մթնոլորտում»<sup>10</sup>: Ուստի դիտորդական կազմակերպության զեկույցներում առկա «մեծ մասամբ», «հիմնականում», «որոշ առումներով» եւ նմանատիպ

<sup>10</sup> Limited election observation mission, Latvia – Early Parliamentary Elections, 17 September 2011, Statement of preliminary findings and conclusions, <http://www.osce.org/odihr/elections/82574>

ձեւակերպումները ձեւական արտահայտություններ չեն, այլ կոնկրետ եւ հստակ գնահատականներ:

Մեր համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական ընտրությունները, որպես կանոն, ավելի բարձր գնահատականի են արժանացել, քան՝ նախագահականը: Համեմատաբար ամենաբարձր գնահատականներն են ստացել 2007թ. եւ 1999թ. խորհրդարանական ընտրությունները: Այդ գնահատանքի հիմքում գլխավորապես հետեւյալ գործոններն են. քվեարկության համեմատական լավ ընթացքը, այսինքն՝ դիտորդների արձանագրած խախտումների քանակով վերոնշյալ ընտրությունների ժամանակ ամենաքիչ խախտումներն են արձանագրվել, ՉԼՄ-ները համեմատաբար անաչառ եւ հավասարակշռված մոտեցում են ցուցաբերել թեկնածուների ընտրարշավը լուսաբանելիս, ինչը հատկապես երեւում է 1999-ի խորհրդարանական ընտրությունների պարագայում: Ընդհանուր առմամբ՝ ընտրությունների բոլոր փուլերի եւ, հատկապես, մեր հետազոտության առանձնացված մասերով վերոնշյալ ընտրություններին տրված գնահատականներն ամենաբարձրն էին:

Ամենավատ գնահատականները տրվել են 2003թ. նախագահական ընտրություններին: 2003-ի ընտրությունները, թերեւս, ամենացածր գնահատականի են արժանացել հատկապես ձայների հաշվարկի առումով: 1996-ի նախագահական ընտրությունները քանակական առումով ամենացածր գնահատականին են արժանացել քվեարկության ընթացքի մասով: 2008թ. նախագահական ընտրությունները բացասական առումով երկրորդն են՝ ձայների հաշվարկի եւ, կարծես թե, առաջինը՝ ՉԼՄ-ների կողմից բարոզչության լուսաբանման առումներով:

Մի քանի ընտրությունների տրվել է միանշանակ բացասական գնահատական, այսինքն՝ նշվել է, որ դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Դրանք են՝ 1998թ. եւ 2003թ. ընտրությունները: 1996թ. ընտրություններին ընդհանուր գնահատական չի տրվել, սակայն հետագայում նշվել է, որ դրանք չափանիշ չեն ընտրական գործընթացները գնահատելու համար: 1999-ի եւ 2003-ի խորհրդարանական ընտրությունների մասով նշվել է առաջընթացի մասին եւ, միաժամանակ, այն մասին, որ կան լուրջ խնդիրներ: 2003թ. ընտրությունների մասով հատուկ նշվել է, որ դրանք կապված են ձայների հաշվարկի եւ աղյուսակավորման հետ:

2007-ի եւ 2008-ի ընտրություններին տրված ընդհանուր գնահատականներում նշվել է, թե դրանք որ մասերով են հիմնականում համապատասխանում միջազգային չափանիշներին եւ որ մասերով չեն համապատասխանում:

Ըստ միջազգային դիտորդների, հայաստանյան ընտրությունների ամենախոցելի մասը ձայների հաշվարկն ու արդյունքների ամփոփումն են:

ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ն իր գնահատականներում հաճախ համեմատական մոտեցում է ցուցաբերել: Նախորդ ընտրությունների համեմատ կատարված որեւէ դրական քայլ չի վրիպել դիտորդների աչքից եւ հաշվի է առնվել եզրակացություններ անելիս:

Քվեարկության եւ ձայների հաշվարկի ժամանակ արձանագրված խախտումները վերջնական գնահատականի վրա ազդել են ոչ միայն իրենց քանակական արտահայտությամբ, այլեւ դրանց բովանդակությամբ եւ խախտման «ծանրությամբ»: Օրինակ՝ եթե 1999թ. ընտրությունների ժամանակ, երբ ձայների հաշվար-

Կը տեղամասերի 22%-ում գնահատվել է «վատ» կամ «շատ վատ», մատնանշվում են հիմնականում ընթացակարգային խնդիրներն ու տեղամասերում կողմնակի անձանց ներկայությունը, ապա 2003թ. նախագահական ընտրությունների ժամանակ, որի առաջին փուլում ձայների հաշվարկը տեղամասերի 20%-ում գնահատվել է «վատ» կամ «շատ վատ», հիմնական խախտումը քվեաթերթիկների լցնումներն են:

---

**ЕДГАР ВАРДАНЯН**  
**БДИПЧ ОБСЕ и выборы в Армении**

В статье осуществлен сравнительный анализ заключительных докладов миссии БДИПЧ ОБСЕ по всем общегосударственным выборам Республики Армения, начиная с 1996 года. Сделана попытка представить общую логику оценок БДИПЧ ОБСЕ, выявить их динамику.

Путем исследования отдельных частей этих докладов автор показывает, что различные обобщенные заключения не являются лишь формальными словами и данью дипломатии, а отображают качество выборов на основе конкретных оценок - как отдельных элементов избирательного процесса, так и их совокупности.

**EDGAR VARDANIAN**  
**OSCE/ODIHR and the Armenian Elections**

The research provides a comparative analysis of the OSCE/ODIHR final reports on the nationwide elections in Armenia since 1996. An attempt is made to present the common logic of, and the dynamics pertinent to, the assessments produced by the OSCE/ODIHR.

Studying these reports, the author demonstrates that various general conclusions are not only formal words or tributes paid to diplomacy, but rather reflect the quality of the elections based on concrete evaluations of both distinct elements of the electoral process and their aggregation.



## **Ոստիկանության դերը իշխանություն-հասարակություն փոխհարաբերություններում: Բարոյաէթիկական գործոնի նշանակությունը**

### **ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագետ: Մասնագիտությամբ հոգեբան է: Վերլուծական հրապարակումներով ու հոդվածաշարերով հանդես է գալիս պարբերական մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներում:*

Մեր օրերում արժեքային համակարգի տարաբնույթ փոփոխությունները, հայաստանյան հասարակական կյանքում գլոբալացման գործընթացները որեւէ կերպ չեն ազդում մի շարք ծառայությունների նկատմամբ վերաբերմունքի դրական փոփոխություններին, հատկապես՝ ոստիկանության ոլորտում: Ավելին՝ գնալով վերջինս ամրապնդվում է որպես մերժվող շերտ, ոչ յուրային և, իբրև առանձին բացասական կարծրատիպ, օրեցօր ընդլայնվում՝ ընդգրկելով համանման կերպարներ՝ ի դեմս հարկային և մաքսային ծառայությունների: Միանգամայն պարզ է, որ նման կարգավիճակը և բարոյաէթիկական, բարոյահոգեբանական որակներն ընդգծվում են վարչակարգի առանձնահատկությունների հենքում, մասնավորապես՝ ավտորիտար վարչակարգի:

Հայաստանում իշխող դասն իր անթաքույց ախորժակով ոչ միայն չի փորձում պատշաճ ներկայացնել իրեն, այլև յուրահատուկ գաղափարախոսություն է ձեւավորում՝ ունենալու, գոյատևելու, իշխելու սկզբունքներով: Միամտություն կլինի կարծել, որ երկրի բարօրության և հետաքրքրությունների համար իշխանությունից որեւէ մեկն իր հանգստությունն ու հարմարավետությունը, այս պահին իր ունեցած ու գալիք եկամուտը զոհաբերի: Այսպիսին է իշխանությունն այսօր Հայաստանում: Այս որակը ենթադրում է իր «սպասարկող» ծառայությունների համապատասխանություն և նվիրվածություն: Առավել կարելոր սպասարկողորժիքներն են հատուկ ծառայությունները, իսկ քանի որ հիմնական խնդիրները ներքաղաքական դաշտում են, և պետք է պաշտպանվեն ցանկացած ոտնձգությունից, ուրեմն, ոստիկանությունը «արթուն ու մարտական» վիճակում են պահում: Այս համատեքստում ակնհայտ է, որ ոստիկանությունը մեր նման երկրներում մշտապես իր նկատմամբ միանշանակ վերաբերմունք չի ենթադրում, քանի որ այն պիտի պաշտպանի իշխողի գահը տարատեսակ մեծ ու փոքր անակնկալներից:

Եթե մտաբերենք վերջին մի քանի տարիները մինչև 2008-ը, ապա ոստիկանությունն այդ շրջանում անգույն, անդեմ կեցվածք ուներ եւ չէր ընդգծվում հասարակական կյանքում, կարծես իր վրա հատուկ հուզական ուշադրություն չէր պահանջում: Բայց միեւնոյն է, պատմականորեն ձեւավորված եւ յուրաքանչյուր ժամանակաշրջանի արժեքային համակարգին հարիր բացասական մոտեցումը գոյություն ուներ, քանի որ հատուկ ծառայությունները միշտ պաշտպանում են վարչախմբի շահերը՝ հակադրելով հասարակության մեծամասնության, ժողովրդի շահերին: Այսինքն՝ իշխանության կողմից կատարվող ցանկացած գործառույթյան գործիք լինելով, բնականաբար, վատ են ընկալվում հասարակության կողմից, քանի որ այդ պահպանվող իշխանությունն ամենահաճախը չունի համաժողովրդական վստահություն: Ուրեմս՝

1. Միայն այդ փաստի համար նախադեպ եւ այլ նախապայմաններ էլ պետք չեն, որպեսզի ոստիկանությունն անմիջապես ընկալվի բացասական «շերտ»: Դրանից հետո արդեն «գործողություններով» (քանի որ գործիք է) հաստատում է իր «լուսանցքային» կարգավիճակը: Ուրեմս գոյություն ունեցող արժեքային համակարգը, հարաբերությունները ձեւավորվում եւ հաստատվում են առկա սոցիալ-քաղաքական իրադարձություններով՝ պատմամշակութային, քաղաքական իրադարձությունների ծանր ժառանգությունից բացի:
2. Այնուամենայնիվ՝ բացասական կարծրատիպի գոյության համար կա որոշակի պատմական կտրվածքով պատճառաբանություն: «Անկախ դարաշրջանից, հասարակական կարգից եւ աշխարհաքաղաքական վիճակից՝ կարելի է առանձնացնել հատուկ ծառայությունների գործունեությանն ու զարգացմանը ազդող 3 օբյեկտիվ գործոններ. տնտեսական, բարոյաէթիկական, իրավական»<sup>1</sup>: Բոլոր երեք գործոնները միմյանց հետ փոխկապակցված են, բայց վերլուծության համար առանձնացնենք մեկը՝ **բարոյաէթիկականը**, «որը հիմնված է տվյալ հասարակության մեջ՝ մշակութային արժեքներին համապատասխան ձեւավորված ավանդույթների վրա: Ժամանակակից աշխարհում գոյություն ունի հատուկ ծառայությունների եւ նրանց գործողությունների նկատմամբ պատմականորեն ձեւավորված վերաբերմունք՝ հասարակության ընտրախավի բարոյաէթիկական նորմերի հիման վրա: Դրանք, այսպես կոչված, արեւմտյան (Եվրոպական) եւ արեւելյան (ասիական) մոտեցումներն են: Արեւմտյան մոտեցումը հատուկ ծառայություններին եւ նրանում աշխատող անձանց նկատմամբ **բացասական է**. միջնադարյան Եվրոպայում հատուկ ծառայությունների եւ նրանց աշխատակիցների նկատմամբ ձեւավորվել է արհամարհական, անհարգալից վերաբերմունք, Արեւելքում ընդհակառակը՝ դրական, կամ ծայրահեղ դեպքում չեզոք: Արեւմտյան մոտեցման պատմական նախապայմաններն են.

Առաջին՝ այդ տեսակետը (արեւմտյան) Եվրոպայից անցել է կայսրական Ռուսաստան, այնտեղից՝ Խորհրդային միություն, որտեղից էլ ժառանգություն է մատուցել մեր հասարակությանը:

1 Г.А.Саркисянц, Власть и спецслужбы, Ереван 2005, стр 85

Երկրորդ՝ Խորհրդային միությունը ստեղծվել է կոմունիստական կուսակցության ներկայացուցիչների՝ բոլշևիկների կողմից, որոնք երկու տասնյակ տարիներ հետապնդվում էին (նրանք եղել են ընդհատակում) հատուկ ծառայությունների կողմից եւ, բնականաբար, հատուկ ծառայությունների հանդեպ ունեին խիստ բացասական վերաբերմունք:

Երրորդ, որը կանվանենք «37 թվականի բարդույթ»՝ ԽՍՀՄ-ում համատարած հետապնդումները, հալածանքները, գնդակահարությունները, աքսորը իշխանության կողմից իրականացվում էին հատուկ ծառայությունների միջոցով մինչեւ 1953թ., եւ քանի որ մեծ թվով նշանավոր, երեւելի մարդիկ գնդակահարվել, աքսորվել են 1937թ.-ին, ապա ժողովրդի մեջ այդ թվականը տպավորվել է որպես **խորհրդանիշ**: Այդ բարդույթի բովանդակությունը վախն է, սարսափը, որը գեներտիկորեն նստած է սերունդների մեջ»<sup>2</sup>:

Իսկ ինչ էր խորհրդային ոստիկանությունը՝ այն, որ ժառանգել ենք: «Լինելով բավականին արհեստավարժ՝ այն կոչված էր նախելառաջ պաշտպանելու հասարակության հետ նույնացվող կուսակցավարչական համակարգի շահերը: Մարդն իր իրավունքներով եւ ազատություններով տվյալ գծապատկերում չէր կարող տեղ գտնել: Թվում էր, թե սոցիալ-բաղաբանական հասարակարգի փոփոխությունից հետո Յայաստանի ոստիկանությունը եւս կփոխի իր գաղափարախոսական հիմնադրույթները: Սակայն «...ՆԳՆ մարմինները հեղեղեց կիսաքրեական, անկիրթ ու ազահ մի զանգված, որը պետական համակարգն ակնթարթորեն վերածեց պապենական կալվածքի, բռնության գործիքի ու հարստացման աղբյուրի» (Չաուր Գասպարյան, «Գոլոս Արմենիի», հունիս 22 «Յետսիրադեղյանական նախարարների դժբախտությունը կադրերն են»)<sup>3</sup>:

Վերջին տարիներին ոստիկանության գործունեության ավելի բուռն «աշխատանքային» շրջանի հանգրվան կարող ենք համարել 2008թ. սկզբի իրադարձությունները: Նախագահական ընտրարշավի, ընտրությունների եւ հետընտրական ժամանակահատվածում ոստիկանությունը եղել է գլխավոր դերակատարներից մեկը իշխանություն-հասարակություն հարաբերություններում եւ քավության հիմնական նոխագը: Ներթաղաբանական լարված վիճակում այդ «գործիքը»՝ ոստիկանությունը, փութաջանորեն օգտագործվեց եւ աչքի ընկավ շատ բազմաբնույթ, ամենատարբեր գործողություններով՝ 2008-ի նախընտրական ժամանակահատվածում, փետրվարի 19-ին ակտիվ եւ ագրեսիվ գործողություններով, հետընտրական հանրահավաքների ժամանակ թշնամական պահվածքով, որին հաջորդեցին մարտի 1-ի ողբերգական դեպքերը, ավելի ուշ ընդդիմության հանրահավաքների «վերահսկմամբ»՝ մանր ու մեծ սադրանքներով: Իշխանությունը ոստիկանական համակարգն անխնա օգտագործում է՝ նրան վարկաբեկելով, երբեմն թվում է, թե դիտավորություն կա ատելություն եւ անհանդուրժողականություն սերմանելու հասարակության եւ ոստիկանության միջեւ:

Տարաբնույթ գործողությունների շարքը շարունակվում է մինչեւ օրս: Առավել բախումնային եւ կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծվեցին 2011-ի մարտի սկզբին՝ Երեւան քաղաքի փոքրիկ կրպակների ապամոնտաժման ժամանակ,

2 Там же 2005, стр 72-85

3 Լեւոն Ներսիսյան, Ոստիկանության դերը ժողովրդավարական համակարգում, ՌԱՀՀԿ սեմինար, 11 դեկտեմբերի 2001, էջ 44

երբ կառավարության նիստերի օրերին կրպակատերերը հավաքվում էին կառավարության շենքի առջև՝ ի նշան բողոքի, ինչպես նաեւ 2011-ի մարտի կեսին, երբ «Ժառանգություն» կուսակցության հիմնադիր նախագահը հացադուլ էր հայտարարել Ազատության հրապարակում, եւ ոստիկանությունը խոչընդոտում էր վրանի տեղադրումը: Այնուհետեւ ոստիկանական այդօրինակ գործողություններ եղան բանակում սպանված զինվորների ծնողների բողոքի եւ այս տարվա մարտի սկզբին Մաշտոցի պուրակի պահպանմանն ուղղված ակցիաների ժամանակ: «Երբեք հայկական ոստիկանությունն այդքան նվաստացած չէր եղել, որքան այս օրերին Մաշտոցի այգում: Գիշերային հերթապահության մասնակցած ութ երիտասարդների դեմ կանգնած են քսան ոստիկան, որոնք 3-4 մետր իրարից հեռու, շղթայված շների կարգավիճակում հսկում են մի քանի օլիգարխի դատարկ բուդկաները: Ամոթից ջղայնացած, մրսած ու ձանձրացած ոստիկանները քննարկում են անցորդներին, վաշտի հրամանատարի Նոր «մերսեդեսը», աշխատավարձի խոստացած բարձրացումը: Մյուս կողմից», վրանի շուրջը կանգնած երիտասարդ ցուցարարները քննարկում են Գուրջիեւ եւ Պարիս Յերունի, Ախուրամազդա ու Բերգման...Մեկ ազգ, երկու մշակույթ...»<sup>4</sup>:

### Մեկ ազգ, երկու մշակույթ

«Բարոյական սկզբունքները ներկայացնում են բարոյական գիտակցության ձեւը: Դրանք ավելի ընդհանրականորեն եւ էապես արտահայտում են մարդկանց վարքի վերաբերյալ հասարակության կամ առանձին դասակարգի կողմից առաջադրվող բարոյական պահանջները: Այդպիսի սկզբունքները, որոնք առաջատար դրոպապատճառ են դառնում, մարդու վարքի որոշիչ են հասարակական կյանքում եւ անձնակախումբում»<sup>5</sup>:

Մարդկանց խմբերի միջեւ հարաբերությունները հաճախ բարդանում են կարծրատիպերի պատճառով, միմյանց մասին ոչ բարենպաստ պատկերացումները եւ զարգացումները տանում են հակամարտության: Դիտարկելով ոստիկան կարծրատիպը՝ այսօր դժվար չէ նկատել բարոյահոգեբանական անդունդը Նույն հասարակության անդամների միջեւ: Ոստիկան կարծրատիպի բացասական երանգի պատճառը «աշխատանքային պահանջվող որակներն» են, որոնք ժամանակի մեջ գործունեության բովանդակությունից եւ գործունեության արդյունքում բյուրեղանում են մարդկանց մտածողության մեջ եւ վարքագծում: Խոսքը բարոյաէթիկական գործոնի մասին է, երբ իր գործունեության բովանդակությամբ որեւէ մասնագիտություն կամ աշխատանք կամ «առաքելություն» միանշանակ չի ընդունվում հասարակության կողմից եւ վարքը կրող անձը դառնում է օտար, հոգեբանորեն օտարվում հասարակությունից:

Վերջին մի քանի տարում քաղաքացիական հասարակության զարգացմանը միտված քաղաքացիական ակցիաները, հավաքները, սեմինարներն առավել շատացել են, մարդկանց գիտակցության եւ իրենց շահերը գիտակցելու, պաշտպա-

4 <http://www.facebook.com/photo.php?fbid=366732636693630&set=a.211056345594594.59824.100000706916433&type=1&theater>

5 Юридическая психология, В.Л. Васильев, Питер 1998, стр.207

Նելու, հասարակություն-իշխանավորներ հարաբերությունների կառուցվածքում մեծ հոգեբանական փոփոխություններ կան, եւ ոչ միայն հոգեբանական: Հասարակական մի շարք շերտերում տարածված միջերը չեն ազդում, չեն գործում, եւ իշխանության ներկայացուցիչները երբեմն «մանրադիտակի տակ» են անցնում եւ անխնայ քննադատվում: Դրան զուգահեռ, սակայն, ոստիկանության ոլորտում զարգացում եւ առաջընթաց կարծես թե չկան: Խոսքն, իհարկե, ոստիկանների հատուկ աշխարհայացքի մասին է: Աշխարհի զարգացման հետ զարգանում են տարբեր մասնագիտություններ, տարբեր ոլորտներ. զարգանում են ոչ միայն այդ մասնագիտական ոլորտներում նոր հնարավորությունների կիրառման ուղղությամբ մարդկանց ճանաչողական դիտանկյունը, այլեւ աշխարհայացքային փոփոխությունները, շարժընթացը, քաղաքական ու քաղաքացիական պատկերացումները, իրավագիտակցության մակարդակը, մշակութային մոտեցումները: Այս ամենը հասարակության համընդհանուր զարգացում է ենթադրում: Սակայն ոստիկանությունը, որտեղ աշխատող անձինք հասարակության լիարժեք անդամ են, ոչ մի աղերս չունի այս էվոլյուցիայի հետ: Այն մտում է որպես հասարակության խորթ զավակ, քանի որ չի համապատասխանում իրենից սպասվող ակնկալիքներին, նրան որպես գործիք են ընկալում:

Թվում է, թե միամիտ թեմա է, եւ ամեն ինչ պարզ է, բայց ավելի բարդ բան, քան մարդու հոգեկանն է, խեղված արժեհամակարգը՝ չկա: Նույն հասարակության մեջ ծայրահեղ արժեհամակարգերով ոչ միայն շերտեր կան, այլ նաեւ մասնագիտություններ: Ոստիկանությունն իրենով՝ որպես գործիք, միանշանակ չէ, այն ողջ աշխարհում էլ իր գործողությունների «ուղղվածությամբ» կարող է ցավ, տառապանք պատճառել մարդկանց, սակայն, ընդհանուր հաշվով, մարդկանց, քաղաքացիների անվտանգությունը պահպանելու միտում ունի, իսկ իր գործողությունների զնահատականը հասարակական կարծիքն է:

Կա հակառակ կողմը կամ երեւոյթը. հասարակության նկատմամբ ոստիկանների վերաբերմունքն ու դիրքորոշումները տարբեր են, այն հատկապես բացասական վեկտոր ունի: Առհասարակ ավելի ու ավելի չարություն եւ մարդատյացություն է նկատվում նրանց կողմից հասարակության առավել ակտիվ շերտերի նկատմամբ, կարծրատիպային դարձած հանցագործների շարք են «ընդգրկվում» հասարակական-քաղաքական ակտիվ մարդիկ: Բնականաբար, որոշակի օբյեկտիվ պատճառներ կան աշխատանքային պայմաններով ձեւավորված այնպիսի հատկանիշների համար, որպիսիք են կասկածամտությունը, անվստահությունը, կոպտությունն ու դաժանությունը, քանի որ իրենց գործունեությունը հիմնականում հանցավոր մտքի իրագործված պատկերի հետ է առնչվում, տարբեր տեսակի հանցագործների, խուլիգանների եւ թմրամոլների: Հանցագործ միջավայրի հետ գործ ունենալով՝ նրանց մեջ ամրապնդվում են որոշակի վարքային մեխանիզմներ, մտածողության ձեւեր, իսկ քանի որ որոշումներ կայացնող չեն, այլ սպասարկու, արժեհամակարգը կառուցված է առանց քննարկման հրամաններին ենթարկվելու սկզբունքի վրա: Իսկ հրամանների վեկտորը վերջին տարիներին ուղղված է նաեւ հասարակությանը՝ ընդդիմության հանրահավաքներից, մինչեւ մեկ անձի բողոքի ակցիա կամ բնապահպանական շարժում: Ուրեմն ով է հանցագործ, իսկ ով՝ «չիանդուրժող» քաղաքացի, բնապահպան եւ այլն, բոլորը նույն հարթության վրա թշնամի են «ներկայացվում» ոստիկանի համար, եւ «հիմ-

Նական ինդիրն այստեղ ոչ այնքան կարծրատիպն է, որքան նրա հետ կապված դիրքորոշումը, որը ստիպում է այս կամ այն վարքն իրականացնել: Այս դեպքում կարծրատիպը փոխակերպվում է համոզմունքի»<sup>6</sup>:

Մաշտոցի պուրակում հերթապահող մի շարք ոստիկաններ նամակ են հղել ՀՀ ոստիկանապետին, որը բավականին ուշագրավ է եւ «մերկ»: «Մենք կողմնակից չենք կոշտ մեթոդների: Մենք չենք ցանկանում հայ մարդու, ՀՀ քաղաքացու հանդեպ կոշտ մեթոդներ կիրառել, բայց հասարակությունն էլ պետք է հասկանա, որ մենք էլ որպես ՀՀ քաղաքացի, որպես օրենքի ներկայացուցիչ, իրավունք ունենք չհայտնվել նման իրավիճակներում կամ հայտնվելուց հետո իրավունք ունենք որոշակի քայլեր կիրառել մեր՝ ՀՀ ոստիկանների ինքնասիրությունը վիրավորողների նկատմամբ»<sup>7</sup>: Նախ՝

1. ոստիկաններն իրենց ներկայացնում են հասարակությունից առանձին՝ «մենք եւ հասարակություն» հակադրությամբ,
2. անմիջապես շեշտվում է պատժիչ գործառույթի մասին,
3. նամակը կարծես տեղեկատվություն-թույլտվություն է «համապատասխան» գործողությունների անցնելու, հակառակ դեպքում ոստիկանները՝ մարդասիրություն դրսևորելով, քաղաքացիների հետ շփման եզրեր գտնելու համար բաց նամակով կոչմեին պուրակում գտնվող ակտիվիստներին, ոչ թե ոստիկանապետին:

Ամենը թվացող նամակն իրականում բացահայտում է ոստիկանություն-հասարակություն այսօրվա հարաբերությունները: Եվ եթե ընդհանրապես դիտարկում ենք ոստիկաններին՝ որպես բացասական կարծրատիպի, իշխանության «բուխ» գործիքի, ապա նամակում նաեւ վերոնշյալ «փոխադարձ» համոզմունքներն ու կարծրատիպն են ակնհայտ. ոստիկանների կողմից հասարակությունը դիտվում է բավական թշնամական եւ մշտապես կարգազանց:

Իրեն ներկայացված սոցիալական դերը, որ պարտավորվել է կատարել ոստիկանը, յուրահատուկ անգիտակցական բացասական դիրքորոշում է ձեռք բերում շրջապատողների, վերադասի, ենթակաների կամ այն մարդկանց հանդեպ, որոնք կամա թե ակամա «կապված» են նրա գործունեության հետ եւ կարող են հանդիսանալ նրա թիրախը: Այդ բացասական դիրքորոշումը նրա կողմից արդեն դերի յուրացումն է եւ աշխատանքային «հասունացումը», որով ներքին պատրաստվածությամբ գիտակցում է իր սոցիալական կարգավիճակը, բայց ոչ սեփական վարքի անխուսափելի բացասական հետեւանքները:

## Անձնային գործոնը

Շատ քչերն են ոստիկանական համակարգում իրենց «առանձին» գիտակցում եւ միաձուլման մեջ են ողջ համակարգի եւ ընդունված ներհամակարգային նորմերի հետ: «Անձնային միաձուլման ամենակարեւոր դեպքը դա չգիտակցված նույնականացումն է: Ողջ հասարակական համաձայնությունը, համերաշխությունը հենվում են մտերիմների, մասնագիտական դերերի, կուսակցությունների,

6 Годфруа Ж. Что такое психология, Москва 1996, стр.88

7 <http://news.am/arm/news/97569.html>

լեզվի (եւ այլն) հետ նույնականացման վրա: Դա կազմում է այն «մենքը», որը մեծացնում է «ես»-ը: Ինչպես միաձուլվող ամեն ինչ, նույնականացումը դառնում է չգիտակցվող, սակայն դրանք առողջ են այն ժամանակ, երբ անհրաժեշտության դեպքում կարող են կրկին նկատվել եւ հետո հաստատվել, փոփոխվել կամ մերժվել»<sup>8</sup>: Վտանգավոր է հակառակ երեւույթը, երբ միաձուլումը ոչ միայն համակարգի եւ հիմնական չգրված նորմերի հետ չի գիտակցվում, այլեւ ամրապնդվելով՝ դառնում է պաթոլոգիկ միաձուլվածություն: Իսկ երբ համակարգի հետ նման պաթոլոգիկ միաձուլվածությամբ վարքը դառնում է զանգվածային, ապա կորչում է անձը, անհատականությունը, նա առնվազն դառնում է լիարժեք ուղղորդվող շնչավոր մեկը: Կորչում է անհատականությունը, եւ մասնագիտական դերից դուրս անձի տեսակը ենթարկվում է հետընթացի:

Հասարակության անվտանգության համար կարեւոր խնդիր են ոստիկանների հոգեբանական առանձնահատկությունները. ովքեր են, ինչպիսի՞ հոգեբանական յուրահատկություններ, հոգեվիճակներ ունեն: Դա խնդիր է, որը հետաքրքրում է նաեւ գերտերություններին, քանզի ոստիկանությունը ներքաղաքական, հասարակական կյանքի խաղաղության ապահովման երաշխիքը պետք է լինի: Այսպես՝ ԱՄՆ-ի արդարադատության ազգային ինստիտուտի հովանավորությամբ տարիներ առաջ հոգեբանների անցկացրած հետազոտությունը ցույց է տվել, որ գոյություն ունեն բազմաթիվ որոշիչ գործոններ, որոնց օգնությամբ կարելի է աշխատանքի համար դիմողների հարցման ընթացքում հայտնաբերել բռնության հնարավոր դեպքերը: Հետազոտության արդյունքները թույլ տվեցին առանձնացնել (մոդելավորել) բռնության հակված ոստիկանների 5 տիպ:

Դրանք են՝

1. Այն ոստիկանները, ովքեր ունեն բնավորության անհատական խանգարումներ եւ գտնվում են մշտական ռիսկի տակ: Նման անհատները բնույթով **մարդատյաց են եւ ունեն նարցիսական, պարանոիդ հակումներ**: Այս գծերը նրանց խանգարում են հատկապես այն դեպքերում, երբ **վտանգ կամ թերահավատություն են զգում իրենց հեղինակության նկատմամբ**: Այդպիսի ոստիկանները սովորաբար դասեր չեն քաղում սեփական փորձից, չեն ընդունում իրենց վարքագծի սխալ լինելը եւ կարող են խնդիրների աղբյուր դառնալ ոստիկանական ստորաբաժանումներում:
2. Այն ոստիկանները, ում աշխատանքը նրանց ռիսկի տակ է դնում: Տրավմատիկ (հոգեփաստվածքային) իրավիճակները, օրինակ՝ հարկադիր հրաձգությունը, գործընկերոջ կորուստը կարող են որոշ ոստիկանների մղել ուժի չարաշահման: Անհատների այս տիպը ոչ մարդատյաց է, ոչ եսակենտրոն, ոչ էլ անզուսպ: Ի դեպ, բռնություն գործադրելիս այս անհատների համար մեծ դեր են խաղում **ոչ թե անձնային հատկանիշները, մարդկային որակները, այլ այն հուզական պաշարը**, որ նրանք **կուտակել են նախորդ պատահարների ընթացքում**: Ի տարբերություն առաջին խմբի՝ այս ոստիկանները ենթակա են ռիսկի ոչ թե մշտապես, այլ միայն ճգնաժամային իրավիճակների դեպքում:

8 Перлз Ф. *Внутри и вне помойного ведра, Петербург 1997*, стр 339

3. Այն ոստիկանները, ովքեր **խնդիրներ են ունեցել իրենց ոստիկանական կարիերայի սկզբնական փուլերում**: Այս խումբը բաղկացած է երիտասարդ եւ անփորձ ոստիկաններից: Ի տարբերություն այլ անփորձ ծառայողների՝ նրանք խիստ տպավորվող են եւ շահագրգիռ, չեն հանդուրժում պարտությունները: Չնայած դրան՝ այս տիպի ոստիկանները կարող են փորձ ձեռք բերելու զուգընթաց աշխատանքում հաջողությունների հասնել, եթե ունեն փորձված ղեկավարներ:
4. Այն ոստիկանները, ովքեր սխալ պատկերացում ունեն պարետային ծառայության ոճի մասին: Նրանք շատ խոցելի են սադրանքների եւ մարտահրավերների նկատմամբ եւ **հաճախ ուժ են գործադրում՝ միայն ցույց տալու համար, որ իրենք ծառայության մեջ են**: Ի տարբերություն առաջին խմբի՝ այս տիպի ոստիկանների վարքագիծը ձեռքբերովի է եւ կարող է փոխվել, եթե իրենց կարիերայի սկզբում գտնվեն փորձված գործընկերոջ կամ ղեկավարի հսկողության տակ:
5. Այն ոստիկանները, ովքեր **ունեն լուրջ անձնական խնդիրներ, ենթարկվել են այնպիսի անհատական հոգեբանական ցնցումների**, ինչպիսիք են ապահարգանք, հարազատներից բաժանվելը, պաշտոնի, դիրքի կորուստը եւ այլն: Նրանք ունեն հոգեբանների խորհրդատվության եւ անձնական մոտեցման կարիք, ինչը հետագայում կկանխի աշխատանքի նկատմամբ նրանց անձնական գերակայության հնարավորությունը:

Թվարկած տիպերը՝ ամերիկյան ոստիկանների սոցիալական մոդելը, բնորոշ են իրենց հասարակությանը: Որպես չափանիշ մեր հասարակության համար չենք կարող միանշանակ ընդունել՝ հատկապես հաշվի առնելով անձի սոցիալական մոտիվացիայի ուղղությունը, մեր երկրում հասարակական պայմաններն ու պահանջները: Սակայն բոլոր դեպքերում էլ անձի բնույթը, անձնային հոգեբանական հիմքերը, դրդապատճառա-նպատակային ոլորտը, անձի կենսաբանական ու սոցիալական ազդեցիկան առկա են եւ բնորոշ նաեւ մեր հասարակության ոստիկանին:

Ոստիկանը հասարակության անդամ է՝ մեկը այդ հասարակությունից: Ինչպե՞ս է ստացվում, որ լինելով բոլորից մեկը եւ առօրյա շփումներ ունենալով հասարակության անդամների հետ՝ «տարբեր է» (օրինակ՝ զինվորը երկու տարի կտրված է հասարակությունից) եւ հուզականորեն «օտարված»: Սակայն, **ուսումնասիրելով այդ համակարգը, կրթության «սկզբունքներն» ու բարոյահոգեբանական մթնոլորտը, ակնհայտ է, որ այն «կլանում» է անձին եւ «կերտում» այդ մթնոլորտին, արժեքներին, կողմնորոշիչներին համապատասխան:**

### **Համակարգում ծառայության դիմող անձանց հոգեբանական դրդապատճառները**

Ի սկզբանե տարբեր հոգեբանական առանձնահատկություններով եւ արժեքներով օժտված անձինք են «մտնում» այդ ոլորտ: Բնականաբար, «հարմարվելու» (ադապտացիայի) շրջանն անցնելուց հետո կամ հաղթահարում եմ սեփա-



կան «ես»-ի յուրահատկությունները եւ դառնում համակարգի անդամներից մեկը կամ, մտալով համակարգում, մշտապես ներքին բախումների առկայությամբ չհարմարվելով՝ դառնում են «անհաջող կադրեր»: Բնագավառը ներկայացնում է իր պրոֆեսիոգրաման՝ պահանջվող մասնագիտական հմտությունների, ունակությունների, հոգեբանական հատկանիշների «գրված եւ չգրված ցանկը», համակարգը: **Կառավարվող սկզբունքներից ելնելով՝** դրանք տարբեր երկրներում տարբեր են. դժվար է պատկերացնել Մեծ Բրիտանիայի ոստիկանի մասնագիտական հմտությունների եւ անձնային որակների «չգրված» ցանկում **«դաժանությունը»՝** որպես «պահանջվող» կարելորագույն հատկանիշ: Հայաստանում, ինչպես նաեւ ԱՊՀ զարգացող երկրներում, որոնք «զարգանալով» կամ ցանկանալով բռնել «ժողովրդավարացման» ուղին եւ մշտապես ունենալով իշխող վարչախմբից ազատվելու խնդիր, ոստիկանին ներկայացվող պահանջներն առանց նշված հատկանիշի չեն ընկալվում: Այսինքն՝ **հասարակական կարգից կախված՝** նման մասնագիտություններում անձնային գործոնը «վերանում է» եւ հարմարվելու գործընթացից հետո մտում է միայն «սոցիալականը»:

Դիտարկենք այն փաստը, որ **լինելով բացասական կարծրատիպ, միեւնույն է, այդ համակարգ դիմող անձինք բավականին մեծ զանգված են կազմում:** Մեր օրերում դժվար է մասնագիտության ընտրությունը: Մասնագիտություն ընտրելու հարցում մեծ նշանակություն ունի հոգեբանական գործոնը: Սակայն այդ ընտրությունը շատ հաճախ բխում է ոչ թե անհատական որակների, այլ առաջնային պահանջմունքների սկզբունքներից՝ նյութական եւ այլ շահերից:

Հասարակության շերտավորման պայմաններում, երբ առաջանում են հարուստներ եւ ծայրաստիճան աղքատներ, օլիգարխիկ համակարգ ու ոլորտների մենաշնորհներ ունեցող պետության մեջ իրավախախտումները, հանցագործությունները եւ անարդարությունները գերիշխում են, օրենքները չեն աշխատում, գործում է «մեղավորը միշտ թույլն է» սկզբունքը: Այսպիսի պայմաններում մասնագիտական ընտրությունը կատարվում է ոչ թե անձի նախասիրություններին, առանձնահատկություններին համապատասխան, այլ իբրեւ **առավելագույն համալրվածությամբ՝** աշխատանք ունենալու, աշխատանքում աճելու եւ իշխանություն ձեռք բերելու հնարավորություն, նյութական շահ, թերեւս տղաների համար խիստ արդի՝ բանակի խնդրի լուծում եւ որպես օրինապաշտպան շղթայի մի մաս՝ օրենքի հովանավորություն: Այսինքն՝ առաջնորդվում են նախընտրելի «հարմարավետության»՝ «գողի» փոխարեն «գող բռնողի» հոգեբանությամբ: Եվ, ի վերջո, շատ «պատահական» անձինք հայտնվում են իրենց անձնային հատկանիշներին ոչ համապատասխան «դաշտում», որից հետո անհրաժեշտ է այդ դաշտում հարմարվելը:

Օրինակ՝ ներքին գործերի բարձրագույն դպրոցի սաները, ելնելով բնավորության առանձնահատկություններից, պետք է միջոցներ մշակեն՝ ուղղված «հաջող» հարմարվելու պայմաններին: Ցանկալի է, որ այդ առանձնահատկություններն ընդգծված չլինեն, քանի որ նշանակալիորեն փոքրացնում են «նոր դերում» հարմարվելու սուբյեկտիվ կարողությունները: Հարմարվելը կարող է անհաջող անցնել այն իմաստով նաեւ, որ հուզականորեն հագեցած, լարված այդ շրջանում, երբ սթրեսածին ազդակները տեսական բնույթ ունեն, անձի որեւէ առանձնահատկություն հակված է խորանալու եւ արտաբանական զարգացում ապրելու: Որոշ

հոգեբանական հատկանիշների (օրինակ՝ ռիզիդության (անճկունություն), իմպուլսիվության, սենզիտիվության (զգայունակություն)) առկայության դեպքում ավելի դժվար է ներքին գործերի կուրսաստների հարմարվելը, իսկ այդ հատկանիշների առկայության դեպքում առավելելս սրվում է կուրսաստների շրջանում փոխհատուցման անհրաժեշտությունը (պատանեկան ռոմանտիզմից դեպի խիստ եւ սահմանափակ իրականություն):

Սովորելու ընթացքում տարած դժվարությունների փոխհատուցումը նշանակալի դիրքի գրավումն է, իսկ ընթացքում՝ ներքին մթնոլորտը, մարդկային անդեմ փոխհարաբերությունները կարող են «ապահովել» հոգեբանական առանձնահատկության «աճ» դեպի շեղում, եւ ընդգծված հոգեբանական խնդիրների առաջացման համար պարարտ հող լինել: Բնականաբար, նման անձինք հավասարակշռություն ստեղծելու համար դիմում են պաշտպանական մեխանիզմների եւ հոգեբանական փոխհատուցումների: Առավել վառ դրսեւորվող հոգեբանական պաշտպանական մեխանիզմներից է ագրեսիան, որն ամրապնդվում է դառնում է անձնային, ավելի ճիշտ՝ մասնագիտական առանձնահատկություն: Առհասարակ՝ ողջ ներքին կոնֆլիկտների առկայության գիտակցումը թույլ է տալիս այդ անձանց գիտակցել նաեւ սեփական թերարժեքությունը, եւ նրանք անգիտակցորեն ձգտում են հաղթահարել անբավարարվածության եւ ֆրուստրատիվ (հուսախաբության) վիճակները: Այս մեխանիզմի վարքային «շարունակությունը» խիստ վտանգավոր կարող է լինել հասարակության համար:

Բացի հոգեբանական ինքնապաշտպանական մեխանիզմներից, այս ոլորտի անձինք ունեն «արտաքին ինքնապաշտպանական գործոններ», որոնցից են, օրինակ, ծառայողական զենքը, ծառայողական դիրքը, հազուստը, «օրենքի հովանավորությունը», «դիմակը»: Սրանք լրացնում, ամբողջականացնում, փոխհատուցում են այն բարոյականները, հատկանիշները, որոնք ընդգծում են անձի «ես»-ի թուլությունը եւ, փոխհատուցելով այսպիսի մեխանիզմներով, նմանվում են «գայլի մորթը հագած ոչխարների», որոնք այդ դիմակով դառնում են ագրեսիվ ու վտանգավոր եւ պատուհաս են հասարակության համար:

### **Համակարգում «ցնցումները» եւ բարոյաէթիկական գործոնը**

Պարզ է, որ ոստիկանությունն այսօր ոչ միայն վարչախմբի, այլեւ օլիգարխների ու նրանց ընչաքաղց նկրտումների պաշտպանն է:

«Վերջին մի քանի ամսում Հայաստանում գրեթե ամեն շաբաթ ոստիկանության հետ կապված մի ցնցող իրադարձություն է տեղի ունենում. նախ ձերբակալվեց ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Հովհաննես Թամամյանը, ապա եւ՝ Մարգար Օհանյանը՝ ճանապարհային ոստիկանության ծառայության պետը: Այսօր էլ ՀՀ ոստիկանության ձեռնարկած օպերատիվ գործողությունների շնորհիվ փաստագրծովեց զինված հանցախումբ, որը կասկածվում է ներկա ու նախկին պաշտոնյաների տներն ավազակային հարձակման ենթարկելու եւ թալանելու մեջ»<sup>9</sup>:

Իշխանության կատարած քայլերը, թվում է, նպաստավոր պետք է լինեն վեր-

9 <http://www.zham.am/index.php?lid=am&pageName=verlucakan&id=195749509>

ջինիս բարեփոխիչի իմիջի համար, սակայն իրականում կատարվածն ավելի է խորացնում անվստահությունը ինչպես իշխանական գործողությունների, այնպես էլ ոստիկանության համակարգի նկատմամբ, քանի որ՝

1. բացահայտում է ոստիկանների եւ հանցագործների սերտ կապերը,
2. հասարակությունը նրանց նույնացնում է՝ յուրաքանչյուր ոստիկան նույնքան հանցագործ է կամ հանցագործի շահերի պաշտպան,
3. ի սկզբանե անվստահություն է առաջանում ոստիկանության նորանշանակ պաշտոնյայի նկատմամբ, քանի որ նախորդները եղել են հայտնի իրավախախտողներ:

Հասարակությունը յուրովի է մեկնաբանում այն: Ըստ այդմ՝ արդեն իսկ բարոյագուրկ համարվող իշխանության քայլը նշանակում է, որ տվյալ անձն այլեւս պետք չէ փտած վարչակարգին, եւ այս պահին նրա վրա են բարդվում ինչ-որ հանցանքներ՝ կոծկելու համար ավելի մեծը: Ամեն դեպքում ուշագրավ է հասարակական վերաբերմունքը ձերբակալված կամ «մեղադրվողի» նկատմամբ. այն առանձնապես փոփոխություն չի ունենում՝ գործող հանցագործից փոխակերպվում է լիազորությունները վայր դրած հանցագործի: Տարիներ ի վեր մարդկանց հանդուրժողաբար ընտելացրել են այդ համակարգի ընկալմանը՝ որպես մի շարք մարդկանց շահերը պաշտպանող, այլ ոչ թե պետության ու հասարակության անվտանգությունը երաշխավորող կառույցի:

## **Վերջաբան**

Ժողովրդի մեջ կան տարբեր սոցիալական հանրություններ, կան տարածքային պատկանելությամբ հանրություններ եւ միավորումներ՝ իրենց խնդիրներով ու շահերով, կան հասարակական շերտեր, հասարակական-քաղաքական խմբեր՝ իրենց քաղաքական նախասիրություններով, տարբեր առաջնահերթություններով, որոնք երբեմն-երբեմն բախվում են: Յուրաքանչյուր կողմ փորձում է պահել, հաստատել իր խմբային շահերը, լինում են հակամարտություններ: Դրանք միավորվում են այն ժամանակ՝ թողնելով իրենց փոքր ու մեծ հետաքրքրությունները, երբ ավելի մեծ խմբի ու շահի հետ հակամարտության խնդիր է առաջանում: Իսկ ընդհանրապես՝ բոլորը միավորվում են արտաքին թշնամու դեմ. միավորվում են, երբ երկրի համար արտաքին վտանգ կա: Ամենասարսափելին այն է, որ այսօր, տարաբնույթ հետաքրքրություններ եւ սոցիալական կարգավիճակներ ունեցող այդ հանրույթների, միավորների համախմբումը կամ գոնե վերաբերմունքի զուգադիպումը խաչվում է ոստիկանության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ: Այս վերջին քսան տարում փոփոխվող իշխանություններն իրենց անփոփոխ մարտավարությամբ՝ շատ «վատ» օգտագործելով ոստիկանությանը, հասցրել են թշնամու այնպիսի կերպարի, որ համահասարակական միասնականության ճակատ ձեւավորելու «պատճառ են», համընդհանուր վերաբերմունքի ու ճաշակի բացասական միավոր, մարդկանց միակարծության եւ համաձայնության առարկա:

### **АРМИНЕ КАЗАРЯН**

#### **Роль полиции во взаимоотношениях власть-общество: значение морально-этического фактора**

Являясь инструментом любого действия выполняемого со стороны властей Армении, полицейские плохо воспринимаются обществом, поскольку эта охраняемая власть не обладает всенародным доверием. А представленная социальная роль, которую обязался выполнить полицейский, приобретает свойства своеобразного неосознанного отрицательного влияния на окружающих, вышестоящих, подчиненных или на тех людях, которые вольно или невольно “связаны” с его/ее деятельностью и могут являться его/ее мишенью.

В последние двадцать лет меняющиеся власти своим неизменяющейся тактикой, очень “скверно” используя полицию, довели ее до такого образа врага, что стали “причиной” образования всеобщественного фронта единения, отрицательной единицей всеобщего отношения и вкуса, объектом единомыслия и согласия людей.

### **ARMINE GHAZARIAN**

#### **The Role of the Police in Authority-Society Interrelations: The Significance of Moral and Ethical Factors**

As a tool of any act performed by the Armenian authorities, the police are disapprovingly perceived by a society that has no confidence or trust in their power. Their social role fosters a deep-rooted suspicion among associates, superiors, subordinates, or any individuals who voluntarily or involuntarily are connected with the police's activities or may become their target.

Over the past twenty years, changing authorities with unchanged tactics have very fearfully used the police, granting them the image of a public enemy—and making them an object of unanimous contempt.